

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՆԱՐԻՆԵ ՆԵՐՍԵՍԻ ԴԵՄՈՒՐՉՅԱՆ

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՅԻՆ ՇՈՒԿԱՅԻՆ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Ը.00.06 «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտությամբ
տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման

Գիտական ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
ԱՇՈՏ ԽԱԶԱՏՈՒՐԻ ՄԱՐԿՈՍՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2017
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
ԳԼՈՒԽ 1. ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ	10
1.1. Գլոբալացման և ինտեգրման գործընթացները բանկային համակարգում	10
1.2. Ինտեգրման առանձնահատկությունները միջազգային բանկային պրակտիկայում	26
1.3. Կլանումներն ու միաձուլումները բանկային համակարգերի ինտեգրման գործընթացում	35
ԳԼՈՒԽ 2. ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՅԻՆ ՇՈՒԿԱՅԻՆ ԻՆՏԵԳՐԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	45
2.1. Միջազգային բանկային ծառայությունները և զարգացման միտումները	46
2.2. ՀՀ բանկային համակարգի զարգացման միտումներն ու հիմնական առանձնահատկությունները	73
2.3. Բանկային ծառայությունների զարգացման հեռանկարները ՀՀ առևտրային բանկերի մրցունակության բարձրացման համատեքստում	86
ԳԼՈՒԽ 3. ԲԱՆԿԱՅԻՆ ԻՆՏԵԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՑԻ ՆԱԽԱԴԻՅԱԼՆԵՐՆ ՈՒ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ	107
3.1. Միջազգային վարկային շուկային առևտրային բանկերի ինտեգրման ժամանակակից ուղղությունները	107
3.2. ՀՀ առևտրային բանկերում արտասահմանյան կապիտալի ներդրման արդյունավետության գնահատումը և բանկային համակարգի ինտեգրման ներուժը.....	116
3.3. ՀՀ առևտրային բանկերի միջազգային գործունեության կատարելագործման և ինտեգրման ուղիները.....	125
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	142
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	150
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հեղազոտության թեմայի արդիականությունը: Աշխատանքի հասարակական բաժանման գործընթացի զարգացումն ու խորացումը դուրս է գալիս ազգային տնտեսության սահմաններից և տեղափոխվում միջազգային մակարդակ, որտեղ երկրների միջև նույն հարաբերությունների զարգացման արդյունքում ձևավորվում են միջազգային առևտրի, կապիտալի ու աշխատուժի տեղափոխման և երկրների միջև բազմազան կապերի հաստատման անհրաժեշտություն: Ժամանակակից համաշխարհային տնտեսության կարևոր բնութագրերից մեկն այն է, որ գրեթե ոչ մի երկիր չի կարող գոյություն ունենալ առանց մյուսների հետ այս կամ այն հարաբերության մեջ մտնելու: Եվ համաշխարհային տնտեսության զարգացման, մասնավորապես, ֆինանսական շուկաների ժամանակակից փուլի կարևոր բնութագրերից մեկը ազգային տնտեսությունների փոխազդեցության ուժեղացումն է: Սա, ըստ էության, գլոբալացման գործընթացների արդյունքն է, որն ուղեկցվում է ֆինանսական շուկաների ինտեգրմամբ: Ներկայումս առանձին երկրները հնարավորինս միավորելով իրենց տնտեսական ու ֆինանսական ներուժը՝ ձևավորում են նաև առանձին տարածաշրջանային միավորումներ¹: Ինտեգրացիոն գործընթացները ընդգրկում են տնտեսական հարաբերությունների ողջ համալիրը, սակայն դրա արժույթային ու ֆինանսական մակարդակը հատկապես վերջին տարիներին վերածվել է տնտեսագետների ու քաղաքագետների հատուկ ուսումնասիրության օբյեկտի:

Գլոբալացման ու ինտեգրման գործընթացների խորացումը, մնացած փոփոխությունների հետ հանգեցնում է նաև համաշխարհային արժույթային ու ֆինանսական ճգնաժամերի և իր հետ բերում է նաև մեծ ռիսկեր²: Այս գործընթացների արդյունքում գերազնահատել տեղի ունեցող փոփոխությունների վերաիմաստավորման խնդիրը արդեն դժվար է և կարևորվում է միջազգային արժույթային, վարկային ու ֆինանսական հարաբերությունների իմաստի նորացումը: Գոյություն ունեցող

¹ Трише Ж.К., Финансовая интеграция в Европе// BIS Review. 2005, N86, с. 10-17.

² Global risks 2014. Insight report, Ninth edition. World economic forum. p. 17.

բազմաթիվ հետազոտությունների³ ուսումնասիրումը թույլ է տալիս փաստել, որ հիմնական միտումներից մեկը՝ ֆինանսական համակարգերի ու արժույթի փոխարժեքների կայունության ապահովման համար առանձին երկրների կամ երկրների խմբերի համագործակցությունն է:

Համագործակցության խորացումն էական ազդեցություն է թողնում հատկապես միջազգային վարկային շուկային ինտեգրվող ազգային բանկային համակարգի գործունեության վրա: Անկախացումից հետո շատ կարճ ժամանակամիջոցում մեր պետությունը բախվեց այնպիսի նոր իրավիճակի հետ, ըստ որի ստեղծվում էր ներքին միջավայրի վրա արտաքին գործոնների ազդեցության հնարավորություն: Ֆինանսական շուկայի կայունությունը այլևս գտնվում է թե՛ ներքին, թե՛ արտաքին գործոնների ազդեցության տակ: Ազգային արժույթի փոխարժեքի կայունության ապահովումը, ազգային անկախ դրամական քաղաքականության իրականացումը, կապիտալի հոսքերի ազատականացումը արդեն հնարավոր չէ իրականացնել միաժամանակ: Հայաստանի տնտեսության համար միջազգային վարկային շուկային բանկային համակարգի ինտեգրման գործընթացն արդիական գիտական հիմնախնդիր է, որը բավականաչափ ուսումնասիրված չէ ժամանակակից տնտեսագիտության կողմից:

ՀՀ բանկային համակարգի գլխավոր դերակատարները՝ Կենտրոնական բանկն ու առևտրային բանկերը, սերտորեն համագործակցում են այնպիսի միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ, ինչպիսիք են Համաշխարհային բանկը, Արժույթի միջազգային հիմնադրամը, Եվրոպական կենտրոնական բանկը, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը, Զարգացման եվրոպական հիմնադրամը, Արժույթային համագործակցության եվրոպական հիմնադրամը, Միջազգային ներդրումային բանկը և այլն:

Պետության և բանկային համակարգի համագործակցությունը միջազգային ու տարածաշրջանային ֆինանսական կազմակերպությունների հետ ընթանում է

³Օրինակ, նման կարծիքներ կարելի է հանդիպել հետևյալ հետազոտություններում. Л. Н. Красавина "Научная школа международных валютно-кредитных и финансовых отношений", Деньги и кредит, 2009, N 1, О.М.Прексин "Финансово-банковская повестка глобальных лидеров с позиций бизнеса стран развивающихся экономик, Деньги и кредит N10, 2014, Kirton J. G20 Governance for a Globalized World. Ashgate Publishing Company. England. 2013, В.Е.Пономаренко, Проблемы и перспективы банковской интеграции в ЕЭП в свете европейского опыта формирования банковского союза, Право и экономика, N2 2013, Kirton J. G20 Governance for a Globalized World. Ashgate Publishing Company. England. 2013.

միջազգային ֆինանսական և դրամական անկայունության պայմաններում: Դա ֆինանսական համակարգի գլոբալացման գլխավոր առանձնահատկությունն է: Այդ իրավիճակում, յուրաքանչյուր երկրի բանկային համակարգի արդյունավետ գործառնման պայմանները որոշիչ են: Ի վերջո համաշխարհային ֆինանսական համակարգին ինտեգրումը անխուսափելի է, սակայն, որքան ազգային բանկային համակարգը «առողջ» է և կենսունակ, այնքան նվազում են գլոբալ համակարգի ազդեցության բացասական դրսևորումները, ազգային բանկային համակարգերի կորուստները:

Գոյություն ունեն միջազգային վարկային շուկային բանկային համակարգի ինտեգրման գնահատման մի քանի մոտեցումներ: Տվյալ հիմնախնդրի հետ կապված ավանդական մոտեցումը բանկի միջազգային մասնաճյուղային և թղթակցային ցանցի, ինչպես նաև միջազգային ֆինանսական ինստիտուտների հետ դրա փոխհարաբերությունների վերլուծությունն է: Նման վերլուծության հիման վրա ընդունվում են ստանդարտ կառավարչական որոշումներ՝ միջազգային բանկային բիզնեսի զարգացման նպատակներով: Սակայն դրանք զուրկ չեն թերություններից՝ կապված համաշխարհային տնտեսական համակարգի զարգացման ժամանակակից միտումների ոչ լրիվ ուսումնասիրության, ինչպես նաև բանկային գործունեության վրա ունեցած առանձնահատուկ ազդեցության հետ: Այսպես, բավականաչափ ուսումնասիրված չեն այն տնտեսական հարաբերությունները, որոնք առաջանում են գլոբալացման ներկա պայմաններում միջազգային վարկային շուկայի մասնակիցների և այդ շուկային ինտեգրվող առևտրային բանկի միջև: Վերջինս թույլ չի տալիս հայրենական բանկերին արագ և որակյալ ապահովել հաճախորդի յուրաքանչյուր կոնկրետ պահանջն ու արդյունավետ զարգացնել միջազգային բիզնեսը: Համաշխարհային տնտեսության մեջ տեղի ունեցող փոփոխությունները, հատկապես կրկնվող ֆինանսական ճգնաժամերը, պահանջում են այլ մոտեցում, որն ավելի համարժեք է տեղի ունեցող գլոբալացման գործընթացներին:

Արդեն իսկ գոյություն ունեցող հետազոտություններում բացահայտված են հայրենական և միջազգային բանկային կապիտալների ինտեգրման ոչ բոլոր ոլորտները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության և միջազգային

Ֆինանսավարկային կազմակերպությունների փոխհարաբերություններին վերաբերող ոչ բոլոր հիմնախնդիրները: Դրանցում բավականաչափ շեշտադրում կատարված չէ փոխատվական կապիտալի ձևավորման տեսական և գործնական հիմնախնդիրների և ֆինանսական շուկայի հատվածների գործունեության առանձնահատկությունների վրա, ինչպես նաև բացակայում է միջազգային վարկային շուկայի մեկնաբանման միասնական հայեցակարգային մոտեցումը:

Բացի այդ, այսօր միջազգային վարկային շուկան նոր որակներ է դրսևորում: Այն խախտել է կապը ավանդական բանկային համակարգի հետ. ավանդների միջոցով վարկային ռեսուրսներ ձևավորելը դառնում է պակաս կարևոր: Միազգային վարկային շուկան, առաջին հայացքից, ոչնչով չապահովված միջոցներով գերիրացվելիության միտումներ է դրսևորում: Եվ այն գերիկվիդային է:

Ուստի, թեմայի արդիանությունը կայանում է նրանում, թե նման պայմաններում ինչ վարքագիծ պետք է դրսևորի ազգային բանկային համակարգը:

Ատենախոսության հիմնական նպատակն է ուսումնասիրել միջազգային վարկային շուկային ինտեգրման տեսական և գործնական հիմնախնդիրները ու բացահայտել այդ շուկային ՀՀ առևտրային բանկերի արդյունավետ ինտեգրման հնարավորությունները (կամ ուղիները):

Նշված նպատակին հասնելու համար ատենախոսության մեջ առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները՝

- Ուսումնասիրել միջազգային ֆինանսական շուկաների և բանկային գործունեության զարգացման միտումները, ինտեգրացիոն գործընթացների առանձնահատկությունները
- Ուսումնասիրել ինտեգրման գործընթացներում միջազգային կլանումների և միաձուլումների հիմնական միտումները և հեռանկարները,
- Ուսումնասիրել միջազգային բանկային ծառայությունների զարգացման միտումները համաշխարհային ֆինանսական համակարգի ենթատեքստում և այդ համակարգին ինտեգրվող բանկի տեսանկյունից,
- Ուսումնասիրել և գնահատել ՀՀ բանկային համակարգի զարգացման հիմնական միտումները և միջազգային բանկային ծառայությունների

զարգացման հեռանկարները,

- Բացահայտել և վերլուծել միջազգային վարկային շուկային բանկային ինտեգրման ուղղությունները,
- Ուսումնասիրել ՀՀ բանկային համակարգում արտասահմանյան կապիտալի առկայության (ներդրման) արդյունավետությունը և բացահայտել արտասահմանյան բանկերի՝ հայկական շուկայում ինտեգրման աստիճանը,
- Ուսումնասիրել և վերլուծել միջազգային վարկային շուկային բանկային ինտեգրման առկա մոդելները,
- Հետազոտել օտարերկրյա բանկերի՝ զարգացող տնտեսություն ունեցող երկրների բանկային համակարգեր մուտք գործելու եղանակներն ու մեթոդները և գնահատել դրանց կիրառելիության հնարավորությունները ՀՀ առևտրային բանկերի կողմից:

Հեղազոտության օբյեկտը ֆինանսական հարաբերությունների համակարգն է՝ պայմանավորված ՀՀ բանկային համակարգի և միջազգային վարկային շուկայի այլ մասնակիցների միջև ինտեգրման գործընթացով, **հեղազոտության սուբյեկտը**՝ ինտեգրման մասնակիցներն են:

Հեղազոտության առարկան արտաքին տնտեսական կապերի զարգացման տեսանկյունից դիտարկվող ՀՀ բանկային համակարգում իրականացվող ինտեգրացիոն գործընթացներն են:

Հեղազոտության մեթոդաբանական հիմք են դիալեկտիկական տրամաբանության սկզբունքը, պատմական և տրամաբանական մոտեցումների միասնության սկզբունքը, վերլուծության և համադրման, համակարգային հետազոտության և համեմատության մեթոդները, վիճակագրության և մաթեմատիկական մոդելավորման մեթոդները:

Հեղազոտության տեղեկատվական հիմք են հայրենական և արտասահմանյան հեղինակների հետազոտությունները, ՀՀ կենտրոնական բանկի, Համաշխարհային բանկի, Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի, Արժույթի միջազգային հիմնադրամի վիճակագրական տվյալները և հետազոտության արդյունքները, ՀՀ

կենտրոնական բանկի և արտասահմանյան կենտրոնական բանկերի, վերլուծաբանների և ղեկավարների ելույթները, ՀՀ առևտրային բանկերի տվյալները, վերլուծական նյութերը, ինչպես նաև միջազգային և հայրենական նորմատիվաիրավական փաստաթղթերը:

Ատենախոսության հիմնական գիտական արդյունքները և նորույթը:

Ատենախոսության արդյունքներն ունեն տեսական, մեթոդական և կիրառական նշանակություն, որոնց գիտական նորույթը դրսևորվել է հետևյալում՝

- Բացահայտվել է ՀՀ առևտրային բանկերի միջազգային մրցունակության վրա մակրոտնտեսական մի շարք գործոնների ազդեցությունը, մասնավորապես՝ գնահատվել են վարկերի միջին տոկոսադրույքի և սպառողական գների ինդեքսի, ավանդների միջին տոկոսադրույքի և ՍԳԻ-ի, ՀՀ ֆոնդային բորսայում իրականացված օրական ինտերվենցիաների և փոխարժեքի միջև կապերը:
- Մշակվել և առաջարկվել է ՀՀ-ում գործող առևտրային բանկերում արտասահմանյան կապիտալի ներդրման արդյունավետության գնահատման մոդել՝ հիմնված շահույթ-կապիտալ, շահույթ-ակտիվներ պարամետրերի վրա, որը բացահայտում է ՀՀ առևտրային բանկերի ինտեգրման հնարավորություններն ու նպատակահարմարությունը:
- Մշակվել և առաջարկվել է առևտրային բանկի միջազգային ինտեգրման ներուժի գնահատման նոր մեթոդիկա և ամփոփ ցուցանիշ, որը հիմնված է 4 խումբ՝ ներքին քանակական, ներքին որակական, արտաքին քանակական և արտաքին որակական ցուցանիշների հաշվարկման վրա (այս խմբերի ցուցանիշներից յուրաքանչյուրի գնահատումների արժեքներով (միջին թվաբանականով) հաշվարկվում է ամփոփ ցուցանիշ), բացահայտում է ինտեգրվելու սուբյեկտների կապը և հնարավորություն է տալիս դինամիկայի մեջ գնահատել և վերահսկել բանկի ինտեգրման միջոցառումների արդյունքները:

Հեղադրության տեսական և գործնական նշանակությունը: Հետազոտության արդյունքների տեսական նշանակությունը գիտական և մեթոդաբանական դրույթների զարգացումն է, որոնք լրացնում են բանկային համակարգի ինտեգրման տեսությունը

բանկային ինտեգրացիայի ուղղությունների և եղանակների մշակման մասով, ինչպես նաև միջազգային վարկային շուկային առևտրային բանկի ինտեգրման ներուժի մեթոդիկայի մշակման մասով: Առաջարկված դրույթները կարող են կիրառվել այնպիսի առարկայական կուրսերի դասավանդման ժամանակ, ինչպիսիք են «Ֆինանսները», «Բանկային գործը», «Միջազգային տնտեսական հարաբերությունները», ինչպես նաև հանդիսանալ որպես ելակետային նյութ ինտեգրացիոն գործընթացների հիմնախնդիրների հետ կապված հետագա վերլուծությունների համար ինչպես ազգային բանկային համակարգերի, այնպես էլ միջազգային մակարդակով:

Հետազոտության արդյունքների գործնական նշանակությունը կայանում է բանկային ինտեգրման ուղղությունների որոշման մեջ, ինչպես նաև միջազգային վարկային շուկային բանկի ինտեգրման ներուժի գնահատման մեթոդիկայի մշակման մեջ, այն է՝ մշակել ընդհանրական ցուցանիշ քանակական և որակական ցուցանիշների հիման վրա: Բացի այդ, առանձնացվել են ՀՀ առևտրային բանկերի միջազգային ինտեգրման տարբեր ձևերի առավելությունները և թերությունները: Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել ինչպես ՀՀ կենտրոնական բանկի գործունեությունն իրականացնելիս, այնպես էլ առևտրային բանկերի կողմից:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումը:

Հետազոտությունում մեջ տեղ գտած մոտեցումներն ու սկզբունքները քննարկվել են ՀՀ Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի տնտեսագիտության և կառավարման դեպարտամենտի Տնտեսագիտության և կառավարման ամբիոնի նիստում:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված 6 գիտական հոդվածներում:

Աշխատանքի ծավալը և կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից և 8 հավելվածներից: Այն պարունակում է 22 աղյուսակ և 13 գծապատկեր: Շարադրանքի ընդհանուր ծավալը կազմում է 160 էջ՝ առանց հավելվածների:

ԳԼՈՒԽ 1. ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

1.1. Գլոբալացման և ինտեգրման գործընթացները բանկային համակարգում

21-րդ դարի զարգացման հիմնական միտումը, որով կարելի է բնութագրել համաշխարհային տնտեսության զարգացումը, գլոբալացումն է: Ձևավորվելով երկրների առևտրատնտեսական կապերի ընդլայնման և խորացման արդյունքում՝ այն աստիճանաբար ներթափանցել է տնտեսական կյանքի բոլոր ոլորտները: Համաշխարհային և տարածաշրջանային հայտնի ինստիտուտների ձևավորումը ֆինանսական համակարգի գլոբալացման ուղղությամբ առաջին քայլն էր, որը հետագայում պետք է գերաճեր գլոբալ ֆինանսական «սարդոստայնի»:

Գլոբալացումը գործընթաց է, որը ներառում է ամբողջ երկրագունդը և ձևավորում է սեփական ինստիտուտները, կառույցները, մեխանիզմները և սոցիալական հետևանքները⁴: Գլոբալացումը ինտեգրման գործընթացների զարգացման այն մակարդակն է, որտեղ ազգերը առանձնացված չեն իրարից հովանավորչական արգելքներով և սահմաններով⁵:

Գլոբալացման սահմանների և արդյունքների մասին տնտեսագետների, քաղաքագետների, հասարակության այլ խավերի կարծիքներն այսօր բավական հակասական են, սակայն դրանք միասնական են շարժառիթների գնահատման առումով, որոնց հիմքում ընկած են աշխատանքի միջազգային բաժանումը, տեղեկատվական-հեռահաղորդակցության տեխնոլոգիաների զարգացումը, ֆինանսական գործառնությունների մասշտաբայնությունը, միջազգային առևտրի ծավալների ինտենսիվ աճը, կապիտալի արագընթաց հոսքերը, մարդկանց տեղաշարժի մասշտաբայնությունը և այլն:

Գլոբալացումը, սակայն, անխափան գործընթաց չէ: Այն ուղեկցվում է տարածաշրջանայնացմամբ, որը դրսևորվում է ի հակադրություն ինտեգրման գլոբալ

⁴Добренчиков В. И., Глобализация и Россия, Социологический анализ, М; Инфра-М; 2006, с. 133.

⁵Панарин А. С., Глобализация/Глобалистика: Энциклопедия/ Гл. ред. И. И. Мазур, А. Н. Чумаков, Центр научных и прикладных программ «Диалог», М; 2003 , с. 183.

մակարդակի: Գլոբալ ինտեգրման (որն ավելի հաճախ գրականության մեջ հանդիպում է հենց գլոբալացում անվանումով) բնորոշ գիծն այն է, որ երկրների միջև տնտեսական կապերի ձևավորումը սահմաններ չի ճանաչում ու հիմքում ունենալով դրանց համագործակցության համար առկա համեմատական առավելությունները՝ թափանցում է յուրաքանչյուր երկիր:

Հարկ է նշել, որ ինտեգրումը համաշխարհային տնտեսության գլոբալացման հիմնական դրսևորումներից է: Ս.Ռ.Կուտբանովը տնտեսական ինտեգրացիա տերմինի տակ հասկանում է շարժման գործընթաց դեպի միասնական տնտեսական կառուցվածքները վերազգային բնույթի կարգավորիչ մեխանիզմների միջոցով⁶:

Ավելի սպառիչ բնորոշում այդ երևույթին տվել է Յու. Շերբանինը. «Միջազգային տնտեսական ինտեգրացիան ազգային տնտեսությունների փոխհամաձայնեցումն է, որը դրանց ներառում է միջազգային մասշտաբով միասնական վերարտադրողական գործընթացների մեջ»⁷:

Այսպիսով՝ ինտեգրում հասկացությունը կիրառվում է որոշակի բարդ դիալեկտիկական գործընթացի մատնանշման համար. այն ենթադրում է որոշակի օբյեկտի առկայություն, այն է՝ երկու կամ ավելի միօրինակ և դիֆերենցված մասերի ամբողջականություն (ինտեգրման օբյեկտ) և այդ մասերի միավորում մեկ ամբողջի մեջ: Այդ «ամբողջությունը» իրենից ներկայացում է ինտեգրացիոն գործընթացների արդյունք: Դրա հետ մեկտեղ «ամբողջության» առաջացումը անհրաժեշտ բնույթ չի կրում, այլ կերպ ասած՝ այն կարող է և՛ առաջանալ, և՛ չառաջանալ: Բացի այդ, համաշխարհային ֆինանսական համակարգին բանկերի ինտեգրումը նպատակահարմար է դիտարկել որպես գործընթաց, որը ներառում է ազգային և համաշխարհային բանկային համակարգերի մերձեցման քայլեր, և որպես իրավիճակ, որի դեպքում ինտեգրված բանկային կառուցվածքը չի տարբերվում բանկային այլ բաղկացուցիչներից: Հարկ է նշել, որ ՀՀ բանկային համակարգն ընդգրկում է ՀՀ Կենտրոնական բանկը (այսուհետ՝ Կենտրոնական բանկ), ՀՀ տարածքում գործող բանկերը (այդ թվում՝ դուստր բանկերը), նրանց

⁶Курбанов С.Р., Глобализация в интеграционные процессы в мировом хозяйстве//Мировая экономика и международные экономические отношения, М., 2009, №6, с. 356.

⁷Щербанин Ю. и др., Международные экономические отношения, интеграция, М., ЮНИТИ, 1997, с. 16.

մասնաճյուղերը, ներկայացուցչությունները, գործառնական գրասենյակները, ինչպես նաև օտարերկրյա բանկերի ՀՀ տարածքում գործող մասնաճյուղերն ու ներկայացուցչությունները⁸:

Հարկ է նշել, որ միջազգային տնտեսական ինտեգրում տերմինի տակ հասկանում են. «Երկրների տնտեսաքաղաքական միավորման գործընթաց խորը, կայուն փոխկապվածությունների զարգացման հիման վրա և ազգային տնտեսությունների միջև աշխատանքի բաժանման գործընթաց»⁹, «Երկրների տնտեսական փոխգործունեության գործընթաց, որը բերում է տնտեսական մեխանիզմների մոտեցմանը, ինչը ստանում է միջպետական համաձայնեցումների ձև և համաձայնեցվում է միջպետական մարմինների կողմից»¹⁰, «ազգային տնտեսական համակարգերի օբյեկտիվ, գիտակցված մերձեցման գործընթաց, որոնք օժտված են ինքնակարգավորման և ինքնազարգացման հզոր ներուժով»¹¹: Բացի այդ, որոշ հեղինակներ առաջարկում են առանձնացնել «հակաինտեգրում» և «վերաինտեգրում» տերմինները¹²:

Գործնական ինտեգրման առավել արդյունավետ և զարգացման անսահմանափակ հնարավորություններ ընձեռնում է տարածաշրջանային տնտեսական ինտեգրումը, որն իրենից ներկայացնում է անդամ երկրների համագործակցության աստիճանական խորացման գործընթաց, որը, սկսվելով երկրների միջև ապրանքների և ծառայությունների շարժի ազատականացմամբ, ընթանում է արտադրության գործոնների բացարձակ շարժունակության, արժութավարկային, բյուջետային, սոցիալական միասնական համակարգերի ձևավորման, գյուղատնտեսական և արտաքին տնտեսական փոխհամաձայնեցված քաղաքականության իրականացման ուղիով: Երկրների տարածաշրջանային ինտեգրման մասին որոշումը բխում է մի շարք հիմնախնդիրների լուծման անհրաժեշտությունից. հիմնախնդիրներ, որոնք չեն կարող լուծվել երկրների ջանքերի տարրալուծման և աշխատանքի միջազգային բաժանման գոյություն ունեցող համակարգի պայմաններում:

⁸ՀՀ օրենքը «Բանկերի և բանկային գործունեության մասին», Համար ՀՕ-68, ընդունվել է 30.06.1996թ., հոդված 2:

⁹Сергеев П. В., Мировая экономика: Вопросы и ответы.-М; Новый Юрист, 1998, с. 21.

¹⁰Киреев А. П., Международная экономика: В 2 ч., Ч 1, М; 1997, с. 361.

¹¹Международные экономические отношения: Учебник, под ред проф. В. Е. Рыбалкина-4-е изд. Перераб. И доп. М., ЮНИТИ-ДАНА, 2003, с. 226.

¹²Подушкина, Содержание и объективные основы экономической интеграции.

URL-http://www.umn.rupages/issues/vestnik/99990193_West_econ_2005-98

Ինտեգրվող երկրների համար համագործակցության շարժիչ ուժը յուրաքանչյուր երկրի արդյունավետ զարգացման անհրաժեշտության և այդ նպատակի իրացումը կասեցնող տնտեսական սահմանափակ ռեսուրսների միջև անհամապատասխանությունն է: Ինտեգրվող երկրների միջև համագործակցությունն ընթանում է աստիճանաբար, քայլ առ քայլ՝ արտադրության գործոնների ազատ տեղաշարժի համար պայմանների ձևավորման ուղիով:

Ըստ էության, միջազգային տնտեսական ինտեգրումը կայուն և խորը տնտեսական փոխհարաբերությունների և աշխատանքի միջազգային բաժանման վրա հիմնված արտադրության միջազգայնացման բարձր մակարդակ է, որն աստիճանաբար տանում է մի շարք երկրների տնտեսությունների միասնականացման¹³: Սակայն, համաշխարհային տնտեսության զարգացման արդի փուլում փոփոխվում են աշխարհակարգի ավանդական հիմքերը. տեղի է ունենում միջազգային տնտեսական հարաբերությունների քանակական և որակական զարգացում, որը թույլ է տալիս սահմանազատել գլոբալ և տարածաշրջանային ինտեգրացիոն գործընթացները: Եթե փորձենք ընդհանրացնել վերը քննարկվածը և տարանջատել գլոբալ ու տարածաշրջանային ինտեգրման գործընթացները, կարելի է սահմանել, որ գլոբալ տնտեսական ինտեգրումը միջազգային և վերազգային կազմակերպությունների գործունեության ընդլայնման ու աշխատանքի միջազգային բաժանման խորացման գործընթաց է, որը նպաստելով երկրների տնտեսական կապերի փոխլրացմանն ու փոխկապվածությանը, հանգեցնում է նրան, որ համաշխարհային տնտեսությունը վերածվում է միասնական տնտեսական օրգանիզմի: Այս տրամաբանությամբ, տարածաշրջանային տնտեսական ինտեգրումը, հիմնականում միջպետական համաձայնություններով ամրագրված, տարածաշրջանային մրցունակ շուկայի ձևավորման նպատակով անդամ երկրների միջև տնտեսական կապերի խորացմանն ու ազատականացմանն ուղղված համագործակցություն է, որն իրականացվում և վերահսկվում է միջպետական մարմինների կողմից¹⁴:

¹³ Ливенцев Н. Н. Международная экономическая интеграция // Экономистъ, Москва 2006, стр. 10.

¹⁴ Զ.Ա. Թադևոսյան, Դ.Ռ. Գալոյան, Միջազգային տնտեսական ինտեգրացիա, մենագրություն, Եր., հեղինակային հրատարակություն, 2006, էջ 10:

Անդրադառնալով միջազգային ֆինանսական շուկայի գլոբալացմանը՝ նշենք, որ, ըստ էության, ֆինանսական շուկայի գլոբալացման պատճառները հասարակության զարգացման օբյեկտիվ գործընթացներն են և սա միջազգային ֆինանսական հարաբերությունների միասնական համաշխարհային համակարգի մեջ միավորման գործընթացն է¹⁵:

Համաշխարհային ֆինանսական շուկայի գլոբալացմանը բնորոշ են մի շարք դրական արդյունքներ, որոնք ռուս տնտեսագետ Ա. Սլեպովի կողմից դասակարգվել են այսպես.

1. Գլոբալ ֆինանսական շուկայի նկատմամբ հասանելիության մեծացումը,
2. Կապիտալի մեծ ծավալները և բարձր շարժունակությունը, շահավետ գինը և բարձր իրացվելիությունը (ֆինանսական գլոբալացումը նպաստում է աշխարհի տարբեր մասերում ֆինանսական ռեսուրսների անբավարարության մակարդակի նվազեցմանը),
3. համաշխարհային բարձր ստանդարտները, ֆինանսական ռիսկերի կառավարման արհեստավարժությունը,
4. ֆինանսական ինստիտուտների դերի մեծացումը, կլանման և միաձուլման գործընթացների հզորացումը,
5. համակարգչայնացումը և տեղեկացվածությունը, դրանց հիման վրա գլոբալ համակարգչային համացանցի ստեղծումը, ստանդարտացումը և պարզեցումը:
6. ֆինանսական շուկայի համընդհանուր բնույթը, որտեղ իրականացվում են միջազգային արժույթային, վարկային, երաշխիքային, ապահովագրական, արժեթղթերով գործարքներ և այլն, ի հայտ են գալիս ֆինանսական գործունեության բացառապես նոր մեթոդներ ու ձևեր, ֆինանսական ծառայությունների նոր տեսակներ,
7. միջազգային ֆինանսական գործարքների ժամանակ ԱՄՆ դոլարի հետ մեկտեղ կիրառվում են առաջատար երկրների փոխարկելի արժույթները և եվրոն¹⁶:

Սակայն, մենք կարծում ենք, որ գլոբալացման հետևանքները միայն դրական չեն,

¹⁵ Слепов В. А. Международный финансовый рынок: учебное пособие/В. А. Слепов, Е. А. Звонова. -М.: Магистр, 2007, с. 29.

¹⁶ Նույն տեղում, էջ 30:

մասնավորապես՝ ֆինանսական շուկաներում նկատելի են որոշ բացասական ազդեցություններ, որոնցից կարելի է առանձնացնել, այն որ.

1. գլոբալ ֆինանսական շուկաներում մեծանում են ֆինանսական ռիսկերը,

2. մեծանում է ազգային ֆինանսական շուկաների անկայունությունը (ազատականացման հետևանքով ֆինանսական ազգային շուկաները զարգացած երկրների խոշոր և «փորձված» շուկաների կողմից ավելի խոցելի են դառնում),

3. մեծանում է խոշոր ֆինանսական կենտրոններում առաջացող ֆինանսական ճգնաժամերի ազդեցությունն այլ երկրների և տարածաշրջանների վրա և համաշխարհային տնտեսության իրական հատվածի կախվածությունն իր դրամական բաղադրիչից (զարգացած երկրներում սկսվող այս գործընթացն ակտիվ տարածվում է այլ երկրների և տարածաշրջանների վրա),

4. համաշխարհային ֆինանսական շուկայի մասնակիցների հասանելիությունը սահմանափակվում է: Համաշխարհային ֆինանսական շուկայում հիմնական մասնակիցները՝ վարկատուները և վարկառուները, արդյունաբերական զարգացած երկրների միջազգային ֆինանսավարկային կազմակերպություններն են ու կառավարությունները: Ի տարբերություն այդ երկրների շուկայի մասնակիցների՝ զարգացող երկրների նմանատիպ մասնակիցներին համաշխարհային ֆինանսական շուկայի փոխառությունները հասանելի չեն: Նրանք օգտագործում են օտարերկրյա ուղղակի ներդրումները, միջազգային կազմակերպությունների վարկային ռեսուրսները և, հետևաբար, միջազգային բանկերին ստիպված են վճարել ավելի թանկ: Միջազգային փոխառություններին արտոնյալ հասանելիություն ունեն նաև այն երկրները, որոնք վարկեր են ստանում Արժույթի միջազգային հիմնադրամից (ԱՄՀ) ու Համաշխարհային բանկի խմբից (մասնավորապես՝ Վերակառուցման և Զարգացման Միջազգային բանկից (ՎԶՄԲ)): Միջազգային ֆինանսավարկային կազմակերպություններին անդամակացության կարգավիճակը, որպես կանոն, համաշխարհային ֆինանսական շուկայում ապահովում է շահավետ հասանելիություն:

ԱՄՀ կողմից 1947-1976թթ. ընթացքում իրականացված վարկավորման աշխարհագրության վերլուծությունը ցույց է տալիս, որ անդամ երկրներին տրված վարկերի

ընդհանուր ծավալը կազմել է 41.2 մլրդ ՀՓԻ (SDR), որի 60.3%-ը բաժին է ընկել արդյունաբերապես զարգացած երկրներին, իսկ ընդամենը 39.2%-ը՝ Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի զարգացող երկրներին: Մինչդեռ, սկսած 1970-ական թթ. Վերջերից, այդ պատկերը փոխվել է հոգուտ զարգացող երկրների: 1977-1991թթ. ընթացքում հիմնադրամի կողմից տրված փոխառությունների միայն 7.9%-ն է ուղղվել արևմուտքի զարգացած երկրներ, իսկ սկսած 1985թ.-ից դրանք տեղաբաշխվել են բացառապես զարգացող երկրներում (տե՛ս աղյուսակ 1.1-ը):

Աղյուսակ 1.1-ից երևում է, որ 1980-2000թթ. ընթացքում ԱՄՀ վարկավորման ծավալներն աճել են ավելի քան 4 անգամ, որը վերջինիս կողմից զարգացող երկրներում շուկայական ուղղվածության մակրոտնտեսական և կառուցվածքային բարեփոխումների ծրագրերի իրականացմանն աջակցելուն միտված քաղաքականության որդեգրման արդյունք է հանդիսանում:

Աղյուսակ 1.1

Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից տրված վարկերի ծավալները՝ ըստ տարածաշրջանների 1980-2000թթ.¹⁷ (մլն. ՀՓԻ)

Երկրների խումբ/տարածաշրջան	1980-1984թթ.	1985-1989թթ.	1990-1995թթ.	1996-2000թթ.
Ընդհանուր գումար	37,522.8	17,278.8	117,504.7	171,643.2
Զարգացած երկրներ	626.0	-	-	-
Զարգացող երկրներ, այդ թվում՝	36,897.3	17,278.8	117,504.7	171,643.2
Ասիա	11,343.6	3,463.0	20,980.5	46,889.5
Աֆրիկա	7,690.3	3,502.9	20,243.0	21,642.8
Մերձավոր և Միջին Արևելք	25.2	239.6	1,493.07	1,519.7
Եվրոպա (հետսոցիալիստական երկրներ)	6,076.0	727.0	30,537.3	47,496.9
Արևմտյան կիսագունդ	11,762.2	9,345.4	44,250.4	54,094.3

2012թ. վերջի դրությամբ զարգացող երկրներում բազմակողմ վարկատուների կողմից ներգրավված վարկերի գծով ձևավորված արտաքին պարտքը կազմել է 544.7 մլրդ ԱՄՆ դոլար՝ 2011թ. համեմատ աճելով 7.8%-ով: Թեև վերջին տարիներին բազմակողմ վարկատուների գծով արտաքին պարտքն անընդհատ արձանագրում է աճի միտում, այնուամենայնիվ, զարգացող երկրների ընդհանուր արտաքին պարտքի ցուցանիշի մեջ

¹⁷ Бородулина Л.П., Кудрявцева И.А., Юрга В.А. Международные экономические организации. М.: «Экономистъ», 2005, с. 131.

վերջինիս տեսակարար կշիռը գնալով նվազում է: Այսպես, եթե 2000թ. այն կազմում էր 15.3%, ապա 2012թ. այն նվազել է՝ հասնելով 10.8%-ի (տե՛ս աղյուսակ 1.2-ը):

Աղյուսակ 1.2

Միջազգային կազմակերպություններից ներգրավված վարկերի գծով արտաքին պարտքը զարգացող երկրներում 2008-2012թթ.¹⁸ (մլն ԱՄՆ դոլար)


	2008	2009	2010	2011	2012
Բազմակողմ վարկատուներ,	395,001	438,044	483,841	505,274	544,673
որից					
Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ, այդ թվում	98,466	107,984	124,852	126,144	130,407
Եկամտի ցածր մակարդակ ունեցող երկրներ	777	463	463	463	463
Եկամտի միջին մակարդակ ունեցող երկրներ	97,689	107,521	124,389	125,681	129,945
Միջազգային զարգացման ընկերակցություն, այդ թվում	111,297	116,903	118,607	121,849	123,772
Եկամտի ցածր մակարդակ ունեցող երկրներ	45,815	39,115	36,019	37,192	38,280
Եկամտի միջին մակարդակ ունեցող երկրներ	65,482	77,788	82,589	84,657	85,493
Արժույթի միջազգային հիմնադրամ, այդ թվում	25,740	52,179	64,661	158,104	145,690
Եկամտի ցածր մակարդակ ունեցող երկրներ	4,623	5,951	4,156	11,222	11,443
Եկամտի միջին մակարդակ ունեցող երկրներ	21,117	46,227	60,505	146,882	134,248

Աղյուսակ 1.2-ից երևում է, որ Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի կողմից զարգացող երկրներին տրամադրված փոխառությունները 2012թ. կազմել են 130.4 մլրդ ԱՄՆ դոլար կամ բազմակողմ վարկատուների կողմից իրականացված վարկավորման ծավալի մոտ 24%-ը: Մեծ տեսակարար կշիռ ունեն նաև Միջազգային զարգացման ընկերակցության և Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից զարգացող երկրներին տրված վարկերը, որոնց հաշվին գոյացած արտաքին պարտքը 2012թ. կազմել է համապատասխանաբար 123.7 մլրդ ԱՄՆ դոլար և 145.7 մլրդ ԱՄՆ դոլար: Այսպիսով՝ բազմակողմ վարկատուներից ներգրավված փոխառությունների մոտ կեսը բաժին է ընկնում միայն Համաշխարհային բանկին: Նշենք, որ Համաշխարհային բանկից և Արժույթի միջազգային հիմնադրամից ստացված փոխառությունների գերակշիռ մասը (349.7 մլրդ ԱՄՆ դոլար կամ 87.5%) ուղղվել է եկամտի միջին մակարդակ ունեցող երկրներ, իսկ եկամտի ցածր մակարդակ ունեցող երկրներին բաժին է ընկել այդ փոխառությունների միայն չնչին մասը (50.2 մլրդ ԱՄՆ դոլար կամ 12.5%):

Նկատենք, որ համաշխարհային և ազգային տնտեսությունների բոլոր ոլորտների վրա

¹⁸ International Debt Statistics 2014. The World Bank, Washington, D.C. 2014 (pp. 32, 35). International Debt Statistics 2013. The World Bank, Washington, D.C. 2013 (pp. 28-29). Global Development Finance 2012 (pp. 36-37, 40-41), 2011 (pp. 32-33, 37), 2010 (pp. 20-21): External Debt of Developing Countries. The World Bank, Washington, D.C. 2012, 2011, 2010.

խոր ազդեցություն է թողնում նաև միջազգային վարկային շուկայի (ՄՎՇ) ձևավորումը, որտեղ գերիշխող դիրքը զբաղեցնում են ԱՄՆ-ը, ԵՄ երկրները, Ճապոնիան, Կանադան, Չինաստանը և Հնդկաստանը: Ընդհանուր առմամբ, համաշխարհային տնտեսության գլոբալացումը բազմակողմանիորեն է ազդում բանկերի միջազգային գործունեության վրա , ինչը առավել ակնհայտ է ներկայացված գծապատկեր 1.1-ում:



Գծապատկեր 1.1. Համաշխարհային տնտեսության գլոբալացման ազդեցությունը միջազգային բանկային գործունեության վրա¹⁹

Ազգային բանկային համակարգերը դուրս են եկել առանձին պետությունների սահմաններից, ինչն արտացոլվում է բանկային կապիտալի կուտակմամբ, միաձուլումներով և կլանումներով՝ հզոր բանկային միավորումների ստեղծմամբ, բանկերի միջազգային բիզնեսի ոլորտի ընդլայնմամբ, բանկային ծառայությունների տարբերակմամբ: Միջազգային տնտեսական հարաբերությունների ազատականացումը, համաշխարհային ֆինանսական շուկաներում ազատ մուտքի ընդլայնումը ստիպեցին մերձեցնել ու հնարավորինս միասնականացնել տարբեր երկրների բանկային օրենսդրությունները, ինչը թույլ տվեց բանկերի միջազգային գործունեությունը բարձրացնել որակապես նոր մակարդակի վրա:

Համաշխարհային տնտեսության մեջ, գլոբալացման գործունեության տեսանկյունից, որոշիչ դեր են խաղում վերազգային բանկերը (ՎԱԲ): Ընդ որում, հատուկ նշանակություն է ձեռք բերում ոչ այնքան արտասահմանյան մասնաճյուղերի և ներկայացուցչությունների

¹⁹ Կազմված է հեղինակի կողմից:

բանակը (այն կարող է պայմանավորված լինել ֆինանսական հնարավորություններով կամ էլ բանկի զարգացման ռազմավարությամբ), որքան դրա աշխարհագրական կառուցվածքը և արդյունավետությունը: Վերազգային բանկը պետք է ունենա մասնաճյուղերի աշխարհագրական այնպիսի կառուցվածք, որը կհամապատասխանի միջազգային ֆինանսական հարաբերությունների զարգացման ժամանակակից մակարդակին, և հատկապես բանկը ներկայանալի կդարձնի աշխարհի հիմնական ֆինանսական կենտրոններում՝ մասնաճյուղեր ու ներկայացուցչություններ հիմնելու ճանապարհով դինամիկ զարգացող և հեռանկարային տարածաշրջաններում:

ՀՀ բանկային համակարգը հետխորհրդային տարածքում բավական երկար ժամանակ զարգանում էր համաաշխարհային և ազգային տնտեսությունների բարդ ու հակասական փոփոխությունների ազդեցության ներքո: Տարբեր գնահատումներով այսօր ՀՀ բանկային համակարգը համարվում է համեմատաբար կայացած ու ձևավորված համակարգերից մեկը Հայաստանում: Սակայն, դրանով հանդերձ, ՀՀ շատ առևտրային բանկեր (չնայած նաև հետ չեն մնում Բազելյան համակարգի սկզբունքների ներդրումից ու նորմատիվային պահանջների իրականացումից) դեռևս հետ են մնում միջազգային բանկային համակարգի զարգացման մակարդակից՝ գործնականում զիջելով զարգացման բոլոր ցուցանիշներով: Միջազգային մրցունակության տեսանկյունից հատկապես, բավական համեստ են ակտիվների մեծության ցուցանիշները:

Համակարգի զարգացման թերություններից է նաև այն, որ հայրենական բանկերը ամբողջությամբ իրենք են իրենց վրա կրում բանկային համակարգի բազմաթիվ բարդությունները՝ վերաֆինանսավորման ռեսուրսների պակաս, առաջավոր տեխնոլոգիաների և մասնագետների որակավորման անբավարար մակարդակ, սինդիկացված վարկավորման ոլորտում աշխատանքային փորձի պակաս և այլն:

Հայաստանը շահագրգռված է համաաշխարհային տնտեսական համակարգի մեջ ավելի արդյունավետ ինտեգրմանը, աշխատանքի միջազգային բաժանման և միջպետական ֆինանսական կազմակերպություններում լիիրավ մասնակցությանը:

Գլոբալացման պայմաններում բանկերը հնարավորություն ստացան միջազգային մի շարք գործարքներ դուրս բերել դրանց իրականացման որակական նոր մակարդակ: Սա,

առաջին հերթին, վերաբերում է ռիսկերի սահմանափակման (հեջավորման) և գանձապետական այլ գործարքներին՝ օգտագործելով պարտքային գործիքների համաշխարհային շուկայի զարգացման հնարավորությունը:

Ինտեգրումը բանկային հատվածում փոխշահավետ է ինչպես առանձին բանկերի սահմանափակ գործողությունների, այնպես էլ օտարերկրյա կապիտալը մասնաճյուղերի և դուստր ընկերությունների տեսքով ազգային տնտեսություն թափանցելու միջոցով: Բանկի ինտեգրումը համաշխարհային ֆինանսական համակարգին՝ տվյալ համակարգի մասնակիցների հետ բանկի միավորումն է մեկ միասնության մեջ:

Կողմնակից ենք համընդհանուր ճանաչում գտած այն հասկացություններին, որոնք օգտագործվում են բանկերի միջազգային գործունեության պրակտիկայում, որոնք որոշակիորեն հարմարեցված են տվյալ աշխատանքի նպատակներին²⁰: Ֆինանսական շուկաների գլոբալացման արդի պայմաններում չափազանց կարևոր է սահմանել, թե հայրենական բանկերը ինչ տեղ կարող են և պետք է զբաղեցնեն ֆինանսների համաշխարհային համակարգում՝ ապահովելու համար մեր տնտեսության պահանջմունքները ֆինանսական ռեսուրսներում:

Հայրենական բանկերը, կատարելով առաջին քայլերը սեփական գործունեության դիվերսիֆիկացիայի ճանապարհին, կատարում են կամ կարող են կատարել գործողություններ միջազգային բանկային գործունեության գրեթե ողջ ոլորտում, սակայն նրանց մասշտաբները համադրելի չեն միջազգային բանկերի գործունեության մասշտաբների հետ:

Համաշխարհային ֆինանսական շուկային ինտեգրվելու գործում կարևոր է Միավորված Ազգերի Կազմակերպության մասնագիտացված ֆինանսավարկային ինստիտուտների՝ մասնավորապես.

- Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ),
- Համաշխարհային Բանկի խմբի (ՀԲ),
- Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի դերը (տե՛ս, հավելված 1):

Հայաստանի Հանրապետության անդամակցումը միջպետական ֆինանսաբանկային

²⁰Кибардина Ю.С., Банковские риски и механизмы в открытой экономике -Экономика мегаполисов и регионов, 2008, № 4., с.38-43;Кибардина Ю.С. К вопросу об устойчивости банковской системы в переходной экономике - «Промышленная политика в РФ», 2008, N 10, с. 57-66.

կազմակերպություններին և ակտիվ մասնակցությունը դրանց միջազգային գործունեությանը զգալիորեն ամրապնդում է ՀՀ դիրքերը համաշխարհային ֆինանսական շուկաներում, նպաստում է դրա հարմարեցմանը արժույթավարկային հարաբերությունների ժամանակակից համակարգին: Դա լայն հնարավորություններ է ընձեռնում արտասահմանյան բանկերի հետ մերձեցման գործում և հնարավորություն է տալիս արտասահմանյան կապիտալը ներդնել տնտեսության տարբեր ոլորտներում :

Անդամակցելով միջազգային կառույցներին՝ Հայաստանը բավականին մեծ ֆինանսական օգնություն է ստացել, որոնք ներմուծվելով ՀՀ ֆինանսական համակարգ էականորեն ազդել են տվյալ պահին տնտեսական զարգացման վրա:

Չնայած միջազգային բանկային բիզնեսում հայրենական բանկերի ավելի խորը ներգրավվածություն ունենալու ձգտումներին՝ հայրենական մասնագետների շրջանում միասնական կարծիք չկա դրանց իրականացման մեթոդների վերաբերյալ:

Այս տեսանկյունից, առանձնացվում են տվյալ երկրներանքի երկու, սկզբունքորեն հակառակ լուծումներ.

ա) հայրենական բանկերը պետք է դառնան տնտեսության լոկոմոտիվը՝ դեպի գլոբալացող համաշխարհային տնտեսություն դրա շարժման ճանապարհին,

բ) հայրենական բանկերը պետք է աճեն աստիճանաբար՝ «ներքևից»՝ սկզբում ապահովելով երկրի տնտեսության ներքին պահանջարկները:

Ազգային տնտեսությունների և դրանց ֆինանսաբանկային համակարգերի փոխկապակցվածության պայմաններում, շատ հաճախ կարծիք է արտահայտվում միջազգային բանկային համակարգերի զարգացման սահմանափակումների վերաբերյալ, որոնց դեպքում համաշխարհային տնտեսական ճգնաժամերի հետևանքները առանձին երկրի տնտեսության համար էապես նվազում են: Ամեն դեպքում արտադրատնտեսական գործունեության և երկրի բանկային համակարգի ոչ բավարար զարգացման միջև անհավասարակշռությունը կարող է հանգեցնել տնտեսության լուրջ խափանումների և ճգնաժամային երևույթների: Երկրի ֆինանսաբանկային գործունեության շարժն անհնարին է համաշխարհային ինտեգրացիոն շուկաներից առանձին, քանի որ բանկային համակարգերի միայն ներքին ռեսուրսները բավարար չեն՝ գլոբալացող տնտեսության աճող պահանջարկների համար:

ԱՊՀ երկրների բանկային համակարգերի ուսումնասիրությունը (ներառյալ Վրաստանի, որը 2009թ. դուրս եկավ ԱՊՀ կազմից), որն իրականացվել է «ՌԻԱ-Անալիտիկա»²¹ տնտեսական վերլուծական կենտրոնի կողմից, թույլ է տվել կազմել ԱՊՀ և Վրաստանի 100 խոշորագույն բանկերի վարկանիշային աղյուսակը՝ 2012թ. հունվարի 1-ի դրությամբ՝ ըստ ակտիվների ծավալի (տե՛ս հավելված 2): Ընդհանուր առմամբ վարկանիշային աղյուսակի մեջ մտան բանկեր 7 երկրներից. Ռուսաստան, Ուկրաինա, Ղազախստան, Բելառուս, Ադրբեջան, Վրաստան, Ուզբեկստան: ԱՊՀ մյուս 5 երկրները (Հայաստան, Ղրղզստան, Մոլդովա, Տաջիկստան և Թուրքմենիա), համաձայն «ՌԻԱ-Անալիտիկայի» փորձագետների գնահատականների չունեն այնպիսի բանկեր, որոնք, ըստ իրենց ակտիվների ծավալի, կարող են վարկանիշային աղյուսակի մեջ մտնել: Վարկանիշում ներկայացված բանկերի ընդհանուր ակտիվները, փոքր-ինչ գերազանցում են 1,4 տրլն. դոլարը: Ըստ համաշխարհային չափանիշների դա այնքան էլ բարձր չէ: Համեմատության համար նշենք, որ, օրինակ, միայն «Bank of America»-ի ակտիվները հավասար են 2,3 տրլն. դոլ., իսկ ԱՄՆ բանկային 10 խոշորագույն հոլդինգների ընդհանուր ակտիվներին՝ ավելի քան 11 տրլն. դոլ.:

Վարկանիշում առավել մեծ ներկայացուցչությունը պատկանում է Ռուսաստանին՝ 100 բանկից 69-ը: Բացի այդ, առաջին 9 տեղերը վարկանիշային աղյուսակում պատկանում են ռուսական բանկերին: Ռուսական բանկերի ընդհանուր ակտիվները վարկանիշային աղյուսակում հաշվում են 874 մլրդ. դոլար, կամ ԱՊՀ խոշորագույն բանկերի ընդհանուր ակտիվների ավելի քան 80%-ը:

«Сбербанк России» ՓԲԸ-ին, որը Ռուսաստանի, Կենտրոնական և Արևմտյան Եվրոպայի խոշորագույն բանկն է, բաժին է ընկնում ռուսական բանկային ակտիվների մոտ 30%-ը, որում ներգրավված են մոտ 240 հազ. աշխատակից:

Վարկանիշում ներկայացված բանկերի թվով երկրորդ երկիրը Ուկրաինան է: Այն ունի 15 բանկ: Դրանցից խոշորագույնը «Приватбанк»-ն է, որը 14,2 մլրդ. դոլար ակտիվներով, վարկանիշային աղյուսակում զբաղեցրել է 13-րդ տեղը: Չնայած այն հանգամանքին, որ Ուկրաինան Ռուսաստանից հետո ներկայացված է բանկերի առավելագույն թվով, դրա

²¹Риарейтинг//Банковские системы стран СНГ-2012, Аналитический обзор, М.2012, с. 42.

բանկերը այդքան էլ մեծ չեն: Օրինակ, Ղազախստանում և Բելառուսում կան ավելի խոշոր բանկեր, քան «Приватбанк»-ն է, ու բացի այդ վարկանիշային աղյուսակում ընդգրկված 15 ուկրաինական բանկերի ընդհանուր ակտիվները շատ քիչ են գերազանցում վարկանիշային աղյուսակում ընդգրկված ղազախական 8 բանկերի ընդհանուր ակտիվներին՝ 78 մլրդ դոլար 62 մլրդ դոլարի դիմաց: Վարկանիշում ներկայացված են 8 ղազախական բանկեր, դրանցից խոշորագույնը՝ «Казкоммерцбанк»-ը, զբաղեցնում է 12-րդ տեղը: Բացի այդ, վարկանիշային աղյուսակի առաջատար 20 բանկերի մեջ մտնում է նաև Ղազախստանի ժողովրդական բանկը: Ամենից խոշոր ոչ ռուսական բանկը վարկանիշային աղյուսակում դարձել է АСББеларусбанк բանկը՝ Բելառուսից: Դրա ակտիվները 2011թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել են 17,6 մլրդ. դոլ., ինչը նրան թույլ է տվել տեղ զբաղեցնել ԱՊՀ 10 խոշորագույն բանկերի թվում: Վարկանիշում ընդգրկված 5 բանկերի ընդհանուր ակտիվները գտնվում են 35 մլրդ. դոլար մակարդակի վրա: 2011թ. մայիսին Բելառուսում տեղի ունեցավ ազգային արժույթի նշանակալի դեվալվացիա (ավելի քան 35 %-ով) և այդ պատճառով էլ դոլարային արտահայտությամբ բելառուսական բանկերի ակտիվները նշանակալիորեն կրճատվել են: Խոշորագույն բանկերի մեջ մտավ նաև Ադրբեջանի միջազգային բանկը, որը վարկանիշային աղյուսակում զբաղեցրեց 33-րդ տեղը: Այս երկրի մյուս բանկերը չմտան վարկանիշային աղյուսակի մեջ, չնայած, որ դրանց մի մասը բավականին մոտ էին դրան: Այնպես, որ եթե վարկանիշային աղյուսակ կազմվի հաջորդ տարիների համար, առավել հավանական է, որ Ադրբեջանը կներկայացվի բանկերի ավելի մեծ թվով: ԱՊՀ խոշորագույն բանկերի մեջ մտավ նաև Ուզբեկստանի ВЭД ազգային բանկը (48-րդ դիրքը՝ 4,3 մլրդ. դոլար ակտիվներով): Եվս երկու բանկ Ուզբեկստանից (Аска-банк և Пахта-банк) բավականին մոտ էին վարկանիշային աղյուսակի մեջ ընդգրկվելուն, ու կրկին, հնարավոր է, որ հաջորդ տարիներին զբաղեցնեն իրենց տեղը վարկանիշային աղյուսակում: Վրաստանում ևս միայն մեկ բանկ մտավ վարկանիշային աղյուսակ (85-րդ տեղը):

Մոտ տարիներին չպետք է ակնկալել վարկանիշային աղյուսակի կառուցվածքի էական փոփոխություն: Ռուսական բանկերը նախկինի պես առաջատար դեր կսկեն խաղալ, ինչպես թվաքանակի, այնպես էլ ակտիվների առումով: Միևնույն ժամանակ,

հավանական է, որ վարկանիշային աղյուսակում իրենց տեղը կբարձրացնեն Ղազախստանի և Ուկրաինայի բանկերը, որոնք աստիճանաբար վերականգնվում են բանկային համակարգի խորը ճգնաժամից հետո, իսկ Բելառուսի բանկերն էլ կնվազեցնեն իրենց ներկայացուցչությունը՝ արժույթային ճգնաժամի ազդեցության արդյունքում:

Ներկայումս տնտեսապես ու տրամաբանորեն ավելի հիմնավորված կլինեն բանկային կառուցվածքների ինտեգրացիան նախկին ԱՊՀ-ի շրջանակներում, նախ և առաջ, այս պահին ձևավորվող Եվրասիական տնտեսական ինտեգրացիայի շրջանակներում՝ հաշվի առնելով երկրների աշխարհագրորեն մոտ լինելը, ընդհանուր սահմանը (բացի Հայաստանից), պատմականորեն ձևավորված տնտեսական կապերը, սոցիալ-տնտեսական զարգացման մոտ մակարդակները, գլոբալացման և համաշխարհային տնտեսության տարածականացման պայմաններում երկրների առջև ծառացած խնդիրների ընդհանրությունները:

Այսպիսով, ժամանակակից բանկային գործունեության միջազգայնացման գործընթացն արտահայտվում է ազգային տնտեսության վրա ոչ միանշանակ ազդեցությամբ և հատկանշական է դառնում գլոբալացման արդի պայմաններում: Սույն հակասության լուծումը հոգուտ համաշխարհային ֆինանսաբանկային շուկաների մասնակիցների՝ նկատելի է միջազգային բանկային գործողությունների զարգացման բարձր մակարդակում:

Ֆինանսական գլոբալացումից ստացված բարիքները անհավասարաչափ են բաշխվում: Ավելի շատ օգուտներ ստանում են զարգացած երկրները և մասնավորապես՝ ԱՄՆ-ը, որն, անկասկած, ֆինանսական գլոբալացման գործընթացի և դրա ստանդարտների և մեխանիզմների մշակման առաջնորդն է: Այդ իսկ պատճառով գլոբալացման դրական ազդեցությունը ամրապնդելու համար անհրաժեշտ է կատարելագործել և՛ ազգային, և՛ միջազգային (գլոբալ) հաստատությունները, որոնց շրջանակներում գործում է երկրի տնտեսությունը, ինչպես նաև օգտագործել գլոբալացման հարցերում առավել հաջողակ պետությունների փորձը:

Գլոբալացումը հանգեցնում է նրան, որ գործունեության շատ ոլորտներում առանձին պետություններ ձգտում են մոտենալ: Սակայն համաշխարհային տնտեսությունը ազգային տնտեսությունների պարզ հանրագումար չէ, այլ իրենից ներկայացնում է նոր տնտեսական

համալիր, որը տարբերվում է ազգային տնտեսություններից և զարգանում է իր օրենքներով²²: Այստեղ դրսևորվում է սիներգետիկ էֆեկտը, երբ ամբողջն օժտված է այնպիսի հատկանիշներով, որը հատուկ չէ դրա մեջ մտնող մասերից ոչ մեկին:

Միջազգային բանկային գործունեությունը ներառում է միջազգային բանկային գործողությունների համալիր, որոնցից են բանկային հաշվարկները (միջազգային ակրեդիտիվներ, բանկային ակցեպտներ, միջազգային ինկասո, միջազգային ֆոնդերի տրանսֆերտներ, միջազգային դրամական փոխանցումներ, ճանապարհային չեքեր և այլն), ոչ վարկային գործարքները (դերիվատիվներով առևտուր, արժույթային դիլինգ, բրոքերային ծառայություններ, աշխատանք ֆոնդային շուկաներում, միջազգային ֆինանսական խորհրդատվություն, միջազգային մարքեթինգային ծառայություններ), միջոցների ներգրավումը (ժամկետային ավանդներ, ցպահանջ ավանդներ, վարկային քարտեր, ավանդային սերտիֆիկատներ, փոխառություններ եվրոշուկայից, բանկի արժեթղթերի վաճառք) և բանկային ֆինանսավորումը (բանկային վարկեր, ֆակտորինգ, նախագծերի ֆինանսավորում, կլանումների և միաձուլումների միջազգային ֆինանսավորում)²³:

Միջազգային ֆինանսական համակարգին ինտեգրման գործընթացների առումով, օրինակ, Ա.Ս.Շատրակովը նշում է, որ «միջազգային ֆինանսական համակարգին բանկի ինտեգրումն այդ համակարգի այլ մասնակիցների հետ մեկ ամբողջություն կազմելն է՝ դրանց միջև առաջացած տնտեսական հարաբերությունների միջոցով բանկի կողմից իր հաճախորդներին որոշակի ծառայություններ տրամադրելիս»²⁴: Բնորոշումն անվիճելի չէ, սակայն դրա արժանիքը կարելի է համարել այն, որ հեղինակը մատնանշում է արդյունքը՝ այն, որ ինտեգրման արդյունքում ձևավորվում է միասնական ամողջություն: Սակայն մեր կարծիքով, բանկային համակարգի միջազգային ինտեգրացիան կարելի է ռացիոնալ ձևով սահմանել հետևյալ կերպ.

Բանկային համակարգի միջազգային ինտեգրումը միջազգային արժույթաֆինանսական հարաբերություններին հուսալիություն և կայունություն հաղորդելու նպատակով իրականացվող գործունեություն է՝ օտարերկրյա պետությունների շուկաներում

²²Фаминский И. П., Глобализация-новое качество мировой экономики, М; Экономика, 2009, с.11.

²³Котелкин С. В., Основы международных валютно-финансовых и кредитных отношений, Учебник/Науч. ред. д-р экон. наук, профессор В. В. Круглов, М Инфра—М; 1998, с. 132-138.

²⁴Патраков А.С., Комков К.В.О, Мерсиянов А.А. Стоимость предприятий при интеграционном процессе. Издательство - Экономика, 2008, с. 145.

դրանց մասնակցության մեծացման միջոցով:

Առաջարկվող սահմանումը թույլ է տալիս առանձնացնել ինտեգրացիայի և՛ գործընթացը, և՛ արդյունքը, ինչպես նաև հետագայում բնութագրել դիտարկվող գործունեության նպատակաուղղվածությունը: Նպատակաուղղվածության առանձնացումը թույլ է տալիս կանխագուշակել, նախագծել և կարգավորել ինտեգրացիոն միջոցառումները:

Ներկայացված սահմանումից կարելի է առանձնացնել դիտարկվող հասկացության գլխավոր առանձնահատկությունները.

1. բանկային համակարգի, վերազգային հաստատությունների և շուկաների միավորման գործընթացի արտացոլումը,

2. գործունեության բնույթը, որն ուղղված է առանձին բանկի և ազգային ամբողջ բանկային համակարգի զարգացմանը, որպես ինտեգրացիոն գործընթացի արդյունք:

Այսպիսով, համաշխարհային ֆինանսական համակարգին ինտեգրման միտումները վկայում են բանկային համակարգի ինտեգրման աճի մասին: Տնտեսական, ֆինանսական ու բանկային ազգային և համաշխարհային համակարգերի մերձեցման գործընթացների առանձնահատկությունները երևան են գալիս միջազգային ինտեգրման տարբեր ձևերում և տեսակներում, որոնց քննարկմանն է նվիրված աշխատանքի հաջորդ բաժինը:

1.2. Ինտեգրման առանձնահատկությունները միջազգային բանկային պրակտիկայում

Միջազգային տնտեսական ինտեգրման տեսակների և ձևերի վերաբերյալ հարցը գիտական տեսանկյունից բավական ուսումնասիրված չէ: Հեղինակների մեծ մասը, որպես կանոն, սահմանափակվում են միջազգային ինտեգրման տարբեր տեսանկյունների դիտարկմամբ և բավական ուշադրություն չեն հատկացնում տվյալ երևույթը համալիր, համակարգված կերպով վերլուծելու համար:

Միջազգային ինտեգրման տեսակների առանձնացումը ենթադրում է տվյալ երևույթի դասակարգում ըստ որոշակի հիմնավորումների: Ռ.Ի.Խասբուլատովը առաջարկում է առանձնացնել ինտեգրման հետևյալ տեսակները՝

- համաշխարհային տնտեսական ինտեգրում, որն ընթանում է վերազգայնացման գործընթացներով,

- ավանդական տարածաշրջանային ինտեգրում, որը ձևավորվել է որոշակի ինստիտուցիոնալ համակարգերում դեռևս 50-ական թթ-ին²⁵:

2.Մ.Օկրուտն առանձնացնում է ինտեգրում կազմակերպությունների և պետությունների մակարդակներով²⁶:

Ի.Սորոկինան առանձնացնում է ինտեգրման հետևյալ տեսակները՝ անմիջական ծուլում, միավորում, կլանում և գնում²⁷:

Կարծում ենք, ըստ թվարկված հատկանիշների ինտեգրման դասակարգումը ընդհանրական է և չի բնութագրում տնտեսության առանձին հատվածների ինտեգրման առանձնահատկությունները:

Բանկային համակարգի ինտեգրման առումով կարևորում ենք.

1. **Ինտեգրման ուղղությունը**, որի հիման վրա կարելի է առանձնացնել ուղղակի ինտեգրում (ազգային բանկերի ընդլայնում այլ երկրներում) և հետադարձ ինտեգրում (արտասահմանյան կապիտալի մասնաբաժնի աճ հայրենական բանկային համակարգում):

2. **Բանկային ինտեգրման գործընթացի նախաձեռնողները**. համաշխարհային ֆինանսական համակարգին ինտեգրման գործընթացը ազգային բանկային համակարգում նախաձեռնվում է միջազգային վարկային շուկա մտնելու հետ կապված գործընթացների պարզեցման միջոցով, ինչպես նաև օտարերկրյա կապիտալի ներգրավման նպատակով պատնեշները վերացնելու միջոցով:

3. **Ինտեգրացիոն գործընթացների մակարդակը**. բանկային ինտեգրում՝ համագործակցության տարբեր ձևեր ստեղծելով (օրինակ՝ ԱՊՀ երկրների կտրվածքով), որն իրականացվում է մակրոմակարդակում, և ոչ ֆորմալ ինտեգրումը, որի դեպքում տարբեր երկրների բանկային համակարգերի մերձեցումը իրականացվում է տարբեր բանկերի մակարդակով, այսինքն՝ միկրոմակարդակում²⁸:

Նման դասակարգումը թույլ է տալիս առանձնացնել ինտեգրման գործընթացի առանձնահատկությունները տարբեր տեսանկյուններից: Միջազգային ֆինանսական համակարգին առևտրային բանկի ինտեգրման ներուժի գնահատման մեթոդիկան, որին կանդրադառնանք հետագայում, հիմնվում է հենց ինտեգրման մեր կողմից առաջադրված

²⁵<http://www.sakharov.ru/meo/meo2/86.htm>

²⁶Նույն տեղում:

²⁷Сорокина И. О., Признаки классификации видов интегрированных объединений//Финансы и кредит, 2009, N35, с. 52.

²⁸Կազմված է հեղինակի կողմից:

դրույթների վրա:

Արդի դարաշրջանը բնութագրվում է համաշխարհային տնտեսական կապերում բանկերի դերի ուժեղացմամբ, նրանց միջազգային գործունեության ձևերի կատարելագործմամբ: Աշխարհում չկա ոչ մի խոշոր բանկ, որն ակտիվորեն չգրադվի միջազգային և ազգային մակարդակներում գործնական կապերի ընդլայնմամբ: Միևնույն ժամանակ, կիրառվում է կազմակերպչական ձևերի լայն շրջանակ՝ հաշվի առնելով համաշխարհային տնտեսության մեջ և ֆինանսական ծառայությունների շուկայում կատարվող փոփոխությունները:

Ի տարբերություն թվարկված միջազգային բանկային ինտեգրման տեսակների՝ (տարբեր չափանիշներով) ինտեգրման ձևերը, այնպես ինչպես ինտեգրման եղանակները, հանդիսանում են նրա արտաքին դրսևորումը: Բանկային ինտեգրման ձևերը գործնականում հարում են հետևյալներին.

1. 100% արտասահմանյան կանոնադրական կապիտալով ինքնուրույն բանկերի բացում,
2. ազգային բանկերի կապիտալում մասնակցություն,
3. դուստր բանկերի և մասնաճյուղերի բացում,
4. բանկերի ներկայացուցչությունների աշխատաքների կազմակերպում,
5. համատեղ ձեռնարկատիրության իրականացում,
6. ազգամիջյան բանկերի ստեղծում,
7. թղթակցային հարաբերությունների հաստատում արտասահմանյան ֆինանսավարկային կազմակերպությունների հետ:

Բանկերի ինտեգրման վերոհիշյալ ձևերը դիտարկենք հանգամանալից:

1. 100 տոկոս արտասահմանյան կանոնադրական կապիտալով ինքնուրույն բանկերի բացում: Բանկային ինտեգրման այլ ձևերի հետ համեմատած՝ սա առավել բարդ է և թանկ: Նման բանկերի օրինակ կարող է հանդիսանալ «Արմավիսբանկը»²⁹, «Հայբիզնեսբանկը»³⁰, «Մելլաթ բանկը»³¹, «ՎՏԲ –Հայաստան Բանկը»³² և այլն:

2. Ազգային բանկերի կապիտալում մասնակցություն: Օտարերկրյա բանկերի կողմից որևէ երկրի բանկային շուկա մտնելու ամենահաճախ կիրառվող ձևերից է շուկա դուրս գալը արդեն գոյություն ունեցող բանկի կամ նրա արժեթղթերի հսկիչ ծրարի ձեռք

²⁹<http://www.armswissbank.am/significant-participants>

³⁰<http://www.ambusinessbank.am/am/page/Significant-owner>

³¹<http://www.mellatbank.am/Bankwork.htm>

³²<http://www.vtb.am/ir/>

բերման կամ այլ ճանապարհով (օրինակ՝ մասնաճյուղի կամ դուստր ընկերության միջոցով): Մասնաճյուղի և դուստր ընկերության տարբերությունը կայանում է նրանում, որ մասնաճյուղ ստեղծելու ճանապարհով շուկա դուրս գալը իրականացվում է մայր ընկերության օժանդակության ներքո, մինչդեռ դուստր ընկերությունը կիրառում է իր կապիտալը:

Տարբեր երկրների բանկային շուկաներ արտասահմանյան բանկերի ներխուժման ամենակիրառելի միջոցներից մեկն այն սխեման է, որը կիրառում են Եվրոպական վերակառուցման և զարգացման բանկը (EBRD) և Միջազգային ֆինանսական կորպորացիան (IFC), (Համաշխարհային Բանկի Խմբի կազմակերպություններից մեկը, որը ներդրումներ է կատարում մասնավոր հատվածում): Սրա էությունը կայանում է նրանում, որ այս կազմակերպությունները գնում են միջին և ոչ մեծ տարածաշրջանային բանկերի բաժնետոմսերի փաթեթները, օգնում են նրանց զարգանալ, իսկ հետո իրենց մասնաբաժինը վաճառում են արտասահմանյան ներդրողներին³³:

«EBRD»-ն և «IFC»-ն այդ բանկերին առաջարկում են զարգացման իրենց ծրագրերը, որոնք փորձարկված են ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող շուկաներում, իրենց բազմամյա միջազգային փորձը, որակի կառավարման և ռիսկերի վերլուծության ստանդարտները, օգնում են բնորոշել բանկի զարգացման ռազմավարությունը և նրա իրագործման մարտավարությունը: Իր կապիտալում EBRD-ի կամ IFC-ի գոյության ընթացքում բանկն անցնում է մանրակրկիտ միջազգային աուդիտ, բիզնեսի թափանցիկության միջազգային մակարդակ է դուրս գալիս, օգտվում է առաջատար բանկային փորձագետների խորհուրդներից՝ կապված բիզնեսի զարգացման մարտավարության հետ, ստանում է էժան միջնաժամկետ և երկարաժամկետ փոխառություններ: Բնականաբար, դրանից հետո, նման բանկը բավականին գրավիչ է միջազգային կապիտալի համար:

Ի դեպ, նշենք, որ ՀՀ բանկային համակարգը ԱՊՀ-ում առաջատարն է օտարերկրյա կապիտալի մասնաբաժնով, որը կազմում է երկրի ընդհանուր բանկային ակտիվների 67%-ը (տե՛ս աղյուսակ 1.3-ը):

Այդ մասին վկայում է ամերիկյան Տնտեսական հետազոտությունների ազգային

³³Рыбин Е. В., Пути повышения конкурентоспособности российских банков, М.: Финансы и статистика, 2008, с. 129.

բյուրոյի (NBER) աշխարհի 180 երկրների բանկային համակարգերի վերաբերյալ զեկույցը³⁴։ ԱՊՀ երկրներից զեկույցում ներառված են Հայաստանը, Ռուսաստանը, Ուկրաինան, Բելառուսը, Ղազախստանը, Տաջիկստանը և Մոլդովան։ Համակարգում օտարերկրյա կապիտալի մասնաբաժնով (67%) Հայաստանը առաջ է անցել զեկույցում ընդգրկված մյուս երկրներից։

Աղյուսակ 1.3

Օտարերկրյա կապիտալի մասնաբաժինը նախկին խորհրդային միության առանձին հանրապետություններում³⁵

Պետություն	Բանկային ակտիվներ / ՀՆԱ հարաբերակցությունը (%)	100 հազ. բնակչության հաշվով բանկերի քանակը	TOP-5 բանկերի ակտիվների մասնաբաժինը (%)	Պետական առևտրային բանկերում ակտիվները	Օտարերկրյա կապիտալի մասնաբաժինը	Մեկ բանկի հաշվով պրոֆ. Վերահսկողների թիվը
Հայաստան	46	0.7	46	0	67	1.7
Ռուսաստան	75	0.7	48	41	18	4.3
Ուկրաինա	100	0.4	37	17	48	1.8
Բելառուս	77	0.3	84	72	27	4.2
Ղազախստան	տ.չ.	0.2	72	23	17	1.1
Տաջիկստան	25	տ.չ.	84	14	6	տ.չ.
Մոլդովա	60	0.4	69	13	42	3.1
Լիտվա	86	0.6	80	0	81	3.1
Էստոնիա	140	1.3	93	0	99	3.9

ՀՀ-ում առևտրային բանկերի ընդհանուր կապիտալի մեջ նշանակալից մասնակցություն ունենալու տեսանկյունից միջազգային ֆինանսական կազմակերպություններից առավել ակնհայտ է Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի դերը։ Առևտրային բանկերի համագործակցությունը միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ բարձրացնում է տվյալ առևտրային բանկերի ֆինանսական ցուցանիշները, ամրապնդում է նրանց դիրքերը ՀՀ բանկային համակարգում, ինչպես նաև ապահովում է վարկային պորտֆելի բազմազանեցում։

3. Դուստր բանկերի և մասնաճյուղերի բացում։ Մասնաճյուղի կամ դուստր ընկերության ստեղծման միջոցով շուկա մտնելու հաջողությունը կախված է կոնկրետ երկրի տնտեսական վիճակից և շուկա մտնելու ժամանակահատվածից։ Այդ իսկ պատճառով՝

³⁴<http://www.nber.org/papers/w18733.pdf>, Bank Regulation and Supervision in 180 Countries from 1999 to 2011, James R. Barth, Gerard Caprio Jr, Workin Paper 18733, p. 47.

³⁵<http://www.banks.am/am/news/newsfeed/7804/>

արտասահմանյան երկրի բանկային շուկա մտնելիս կարևորագույն գործոն է հանդիսանում բանկի ունիվերսալ լինելը: Ունիվերսալ բանկի առավելությունը կայանում է նրանում, որ այն նոր շուկաներում կարող է առաջարկել բանկային ապրանքների և ծառայությունների լայն ընտրանի՝ հետևաբար յուրաքանչյուր առանձին ապրանքի կամ ծառայության նկատմամբ պոտենցիալ պահանջարկը ցածր կլինի որևէ մասնագիտացված բանկի ծառայության պոտենցիալ պահանջարկի հետ համեմատած, որի համար շուկայական սահմանափակումները պարտադիր կձևեն շուկա մտնելու ավելի թանկ եղանակներ:

Ունիվերսալ արտասահմանյան բանկերը Հայաստանում ունեն զգալի մրցակցային առավելություններ՝ հայրենական բանկերի հետ համեմատած: Ի տարբերություն մասնավոր տեղական բանկերի, որոնք հաճախակի ռեսուրսների դեֆիցիտ ունեն, արտասահմանյան բանկերը կարող են իրենց թույլ տալ պարբերաբար աշխատել առանց եկամտի: Հայրենական բանկերը նման հնարավորություններ չունեն և նրանք պետք է եկամուտ ստանան հնարավորինս արագ:

4. Բանկերի ներկայացուցչությունների աշխատանքների կազմակերպում: Բանկային շուկայում շատ սահմանափակ հնարավորություններ ունեն արտասահմանյան բանկերի ներկայացուցչական գրասենյակները: Նրանց թույլ չի տրվում իրականացնել բանկային գործարքներ, նրանք միայն հեշտացնում են փոխադարձ գործունեությունը տեղական կոնտրագենտների հետ և տեղեկատվություն տրամադրում շուկայի և տեղական տնտեսության ներկայացուցիչների հետ ձևավորված գործարար կապերի վերաբերյալ: Կոնկրետ երկրի բանկային ծառայությունների զարգացման նկատմամբ վերահսկման տեսանկյունից ներկայացուցչության բացումը բավականին արդյունավետ միջոց է այդ շուկա մտնելու համար:

5. Համատեղ ձեռնարկատիրության իրականացում: Համատեղ ձեռնարկատիրությունը նշանակում է երկու կամ մի քանի երկրների գործընկերների արտադրատնտեսական գործողությունների մի ողջ համալիր, որի բովանդակությունը կոոպերացիոն արտադրության, առևտրի, գիտատեխնիկական, ներդրումային և սպասարկման ոլորտներում համատեղ գործունեությունն է: Որոշ երկրների օրենսդրությամբ կարող է նախատեսված լինել՝ բանկերին թույլ տալ զբաղվել ֆինանսական գործունեությունից բացի այլ գործունեությամբ:

6. Ազգամիջյան բանկերի ստեղծում: Միջազգային ինտեգրման ձևերից է նաև

ազգամիջյան բանկերի ձևավորումը³⁶: Որպես օրինակ կարող է ծառայել Ասիական զարգացման բանկը (ԱԶԲ)³⁷: Այն ստեղծվել է 1966թ. ՄԱԿ-ի նախաձեռնությամբ Ասիական-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում աղքատությունը նվազեցնելու նպատակով: ԱԶԲ-ի անդամակցությունը բաց է այս տարածաշրջանի երկրների համար, եթե նրանք ՄԱԿ-ի կամ նրա հատուկ գործակալությունների անդամներ են: Անդամակցության նման չափորոշիչները հանգեցրին նրան, որ նրա կառավարման մեջ ձայների մեծամասնությունը պատկանում է զարգացած երկրներին՝ ԱՄՆ (16%) և Ճապոնիա (16%):

ԱԶԲ-ի անդամներ են դարձել հետխորհրդային Անդրկովկասի և Միջին Ասիայի որոշ երկրներ (Հայաստանը, Ադրբեջանը, Ղազախստանը, Ղրղզստանը, Տաջիկստանը, Թուրքմենստանը, Ուզբեկստանը), ինչը նրանց թույլ է տալիս օգտվել ԱԶԲ-ի վարկային աջակցությունից տնտեսական զարգացման ծրագրերը իրականացնելիս: Օրինակ, Ղրղզստանը ԱԶԲ-ից դրամական միջոցներ է ստացել 1998թ. Ջելբադում ջրհեղեղի հետևանքների վերացման համար: Բացի այդ, երկիրը օգտվում էր վարկային օգնությունից «Մեծ մետաքսի ուղու» ճանապարհների կառուցման համար, հանրակրթության, գյուղատնտեսության զարգացման նպատակով:

ՀՀ անդամակցությունը ԱԶԲ-ի հետ թույլ է տալիս ընդլայնել համագործակցությունը Ասիական-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի երկրների հետ: Կապված այն բանի հետ, որ ֆինանսավորման հիմնական աղբյուրը զարգացած երկրներն են և նրանք էլ իրականացնում են վերահսկողությունն ու կառավարումը, ուստի բոլոր ծրագրերը իրականացնում են այդ երկրների ֆիրմաները: Անդամակցելով ԱԶԲ-ին՝ հայաստանյան ընկերությունները կարող են մրցակցել արևմտյան կազմակերպությունների հետ ասիական շուկաներում և ընդլայնել իրենց ապրանքների և ծառայությունների արտահանման ոլորտները: ՀՀ մասնակցությունը ԱԶԲ-ին թույլ կտա հայրենական բիզնեսին ընդլայնել արտահանման ծավալները դեպի Հնդկաստան, Չինաստան, Վիետնամ, ԱՊՀ երկրներ: Ներկայումս ԱԶԲ-ից վերցրած վարկային միջոցներով ՀՀ-ում մասամբ ֆինանսավորվում է «Հյուսիս-Հարավ» մայրուղու կառուցումը:

Այդ ճանապարհով գնացել են Ռուսաստանը և Ղազախստանը՝ 2006 թ. ստեղծվել է Եվրասիական զարգացման բանկը (ԵԱԶԲ), որի կանոնադրական կապիտալը ներկա պա-

³⁶Рыбин Е. В., Пути повышения конкурентоспособности российских банков, М.: Финансы и статистика, 2008, с. 100-102.

³⁷ Asian Development Bank. URL.: <http://www.adb.org/дата обращения 01.05.2011/>

հին կազմում է 1.5 միլիարդ դոլարից ավելի (մոտ 1 մլրդ. դոլար ներդրել է ՌԴ-ը, մնացած մոտ 0.5 մլրդ դոլարը՝ Ղազախստանը)³⁸ : Հայաստանի մասնակցությունը կանոնադրական կապիտալում ի համեմատ այս երկրափ բավականին փոքր է՝ 100 հազ. ԱՄՆ դոլարի չափով³⁹: Այն հիմնադրվել է մասնակից երկրների տնտեսությունների կայուն զարգացումը ապահովելու, տնտեսական աճի բարձր տեմպերի հասնելու, մասնակից երկրների միջև առևտրատնտեսական կապերի ընդլայնման, անդամ պետությունների կազմակերպությունների մասնակցությամբ ներդրումային նախագծերի իրականացման համար: Միևնույն ժամանակ, բանկի կապիտալի և հիմնադիրների կազմի մեջ մտնել կարող է ԱՊՀ ցանկացած երկիր, սակայն, ամենից առաջ, այն պետությունները, որոնք Եվրասիական տնտեսական միության անդամներ են⁴⁰: Նշենք նաև, որ ՀՀ ֆինանսների նախարարության տվյալներով բանկի ներդրումային պորտֆելի կառուցվածքում Հայաստանում իրականացվող նախագծերի բաժինը կազմում է մոտ 2%:

Վերը նշված բանկը պետք է դառնա հետխորհրդային տարածաշրջանի պետությունների առավել ակտիվ տնտեսական ինտեգրման, նրանց ժամանակակից տնտեսական նախագծերի զարգացման գործիք և, որն առավել արդյունավետ պետք է լինի, քան Միջպետական բանկը, որը ստեղծվել է 1993թ. ԱՊՀ 10 երկրների կողմից (Հայաստան, Ղազախստան, Բելառուս, Ղրղզստան, Մոլդովա, Ռուսաստան, Տաջիկստան, Թուրքմենստան, Ուզբեկստան, Ուկրաինա), որը, սակայն, զգալիորեն չի ազդում ԱՊՀ-ում տնտեսական գործընթացների վրա:

Եվրասիական զարգացման բանկի գործունեության և նրա ուղղակի մրցակից Ասիական զարգացման բանկի միջև գոյություն ունեն մի շարք էական տարբերություններ: Եթե Եվրասիական զարգացման բանկին անդամակցությունը սահմանափակված է տարածաշրջանի շրջանակներով, ապա ԱԶԲ-ն ձգտում է իր շարքերում ներգրավել ողջ աշխարհի զարգացած երկրները, ինչը թույլ է տալիս նրան կենտրոնացնել էական վարկային և ներդրումային ռեսուրսներ: Մասնավորապես՝ սրա հետ կապված ԱԶԲ-ն կարող է իրեն թույլ տալ վերաֆինանսավորել իր նախագծերը մասնակից պետությունների անդամավճարներից, իսկ Եվրասիական զարգացման բանկը դրա համար ներգրավում է փոխատվական

³⁸ През.банка ЕАБР: http://www.eabr.org/media/img/rus/about/presentation/EDB_presentation_rus_edited_ES_59_april2011.pdf

³⁹ <http://www.mfe.am/index.php?hdr=156&lang=1>

⁴⁰ Рыбин Е. В., Пути повышения конкурентоспособности российских банков, М; Финансы и статистика, 2008, с. 87.

միջոցներ կապիտալի միջազգային շուկայից: Եվ նման տարբերությունները քիչ չեն:

7. Թղթակցային հարաբերությունների հաստատումը արտասահմանյան ֆինանսավարկային կազմակերպության հետ: Այս ձևը ամենապարզն է, սակայն և ամենասահմանափակը՝ ստացվող օգուտների տեսանկյունից:

Այս կամ այն բանկային պրոդուկտին նախապատվություն տալու օտարերկրյա բանկի որոշումը զգալիորեն կախված է այդ բանկի կողմից լիցենզիայի ձեռք բերման հետ: Բանկային գործունեության լիցենզավորման քաղաքականությունը տարբեր երկրներում և տարբեր ժամանակահատվածներում տարբեր է եղել: Վերլուծությունը ցույց է տալիս, որ արտասահմանյան բանկները, որպես կանոն, կիրառում են շուկա մտնելու առավել նախընտրելի ձևերի համադրություն, որոնք համապատասխան ձևով պետք է հավասարակշռվեն հենց արտասահմանյան բանկի կողմից, որը բազմաթիվ ծառայություններ է առաջարկում նոր տեղական շուկային:

Հետխորհրդային երկրների բանկային ծառայությունների շուկա արտասահմանյան բանկերի մուտք գործելու ռազմավարությունը ձևավորվում է բանկային ոլորտում պետության միջամտության երկու հիմնական տարրերի ազդեցությամբ՝

- լիցենզիաների տրամադրմամբ,
- իրենց երկրների բանկային համակարգերում արտասահմանյան կապիտալի մասնաբաժնի կարգավորմամբ:

Ինչպես ցույց է տալիս փորձը, նոր ֆինանսական շուկայում բանկի ներկայությունից առավելագույն օգուտ կարելի է ստանալ բավականին փոքր ներդրում կատարելով: Ներդրումների ծավալը միայն գործոններից մեկն է տվյալ ֆինանսական շուկայում այս կամ այն բանկի ներկայության արդյունավետությունը որոշելու համար, քանի որ գոյություն ունեն նաև այլ կարևոր գործոններ, ինչպիսիք են՝ արժույթային ռիսկերը, կազմակերպության պրոֆիլը, տվյալ բանկի կամ այլ բանկերի նկատմամբ նրա պարտավորությունները, մրցակցային միջավայրը, շուկայի չափերը և այլն⁴¹:

ՀՀ-ում արտասահմանյան բանկերի զգալի մասը պասիվ քաղաքականություն են վարում և չեն ձգտում ընդլայնել ազդեցությունների ոլորտները: Միևնույն ժամանակ արտասահմանյան բանկերը, որպես կանոն, նոր կառույցներ չեն ստեղծում, այլ ձեռք են

⁴¹Суворов А. В., Некоторые особенности формирования европейского рынка банковских услуг//Деньги и кредит, 2006, №3, с. 58.

բերում գործող տեղական ֆինանսավարկային կազմակերպությունները: Միջազգային միաձուլումները և կլանումները դարձել են ժամանակակից պայմաններում բանկերի զարգացման ռազմավարության հիմնական եղանակներից մեկը:

Բանկային ծառայությունների շուկայում արտասահմանյան բանկերի գործունեության բացասական հետևանքների շարքին կարելի է դասել այն, որ վերջիններս հայրենական բանկերին դուրս են մղում շուկայի մի շարք կարևոր հատվածներից: Սակայն այս նույն բացասական հետևանքները ապագայում կարող է հանգեցնել դրական փոփոխությունների: Արտասահմանյան բանկերի մուտքը հայրենական շուկա ստեղծում է անհրաժեշտ մրցակցային միջավայր: Այն ստիպում է հայրենական բանկերին միավորվել և կատարելագործել իրանց աշխատանքները հաճախորդների հետ, ավելի լավ արդյունքների հասնել մրցակցային պայքարում:

Այսպիսով, ՀՀ բանկային համակարգը դեռևս գտնվում է անցումային փուլում, առանց որի հաղթահարման չի կարելի ապահովել նրա կայունությունը և դինամիկ զարգացումը: Սրա հետ կապված չի կարող հետաքրքրություն չառաջացնել բանկային ինդուստրիայի զարգացումը արտասահմանում, քանի որ ֆինանսական ինստիտուտների համաշխարհային պրակտիկան մեծ չափերով կանխորոշում է ժամանակակից հայրենական բանկային համակարգի կայունացումը, այն մոտեցնում է միջազգային ստանդարտներին և պայմանավորում է հայրենական բանկերի ելքը դեպի միջազգային մակարդակ:

1.3. Կլանումներն ու միաձուլումները բանկային համակարգերի ինտեգրման գործընթացում

Բանկերի կլանման և միաձուլման գործընթացները կարելի է դիտարկել որպես միկրո մակարդակում ընթացող ինտեգրում: Կլանման և միաձուլման գործարքների հիմնախնդրի հետազոտության արդիականությունը պայմանավորված է նաև հայրենական շուկայում արտասահմանյան բանկային ծառայությունների ընդլայնումով: ՀՀ բանկային համակարգի ցածր կապիտալացման և հայրենական ու արտասահմանյան բանկերի միջև մրցակցության սրման ժամանակ այս գործընթացը, որպես մրցակցային պայքարի և բանկային կապիտալի կենտրոնացման արագացման միջոց, մեծ նշանակություն է ստանում: ՀՀ կենտրոնական բանկը մեծ նշանակություն է տալիս կլանման և միաձուլման

գործընթացներին, քանի որ այն հետաքրքրված է բանկային համակարգի կապիտալացման բարձրացումով⁴²:

Ֆինանսական ոլորտի կազմակերպությունների կլանման և միաձուլման գործընթացները միասնական ֆինանսական շուկայի ձևավորման ճանապարհին առաջին քայլերն էին: Ազգային և միջազգային կլանման ու միաձուլման ակտիվ գործընթացը ուղղված էր համաշխարհային նշանակություն ունեցող ընկերությունների ստեղծմանը և, որոնք մատուցում են ֆինանսական ծառայությունների լայն շրջանակ և առաջարկում տարաբնույթ ֆինանսական արտադրանքներ:

Միաձուլումը ենթադրում է 2 հավասարազոր կազմակերպությունների միավորում, իսկ կլանումը՝ մի կազմակերպության կողմից մեկ այլ կազմակերպության գնում, որի արդյունքում առաջին կազմակերպությունը դառնում է առավել խոշոր, իսկ երկրորդը դադարում է գործել: Միաձուլումների և կլանումների գլխավոր նպատակը սիներգիան է, այսինքն՝ առավելությունը համատեղ գործունեությունից:

Կլանումների ու միաձուլումների ազդեցությունը գնահատվում է ոչ միանշանակ: Հաճախ դա հանգեցնում է մրցակցության թուլացմանը, շատ դեպքերում նաև վերացմանը: Զարգացող երկրներում ազգային կազմակերպությունների կլանումները կարող են հանգեցնել օտարերկրյա տիրապետության ամրապնդմանը տնտեսության առանձին ճյուղերում և դրանով իսկ վտանգել ազգային տնտեսական անվտանգությունը: Որոշակի դժվարություններ կարող են առաջանալ կազմակերպությունների ինտեգրման ժամանակ, ինչպես նաև խնդիրներ անձնակազմի հետ: Կլանումների ու միաձուլումների դեպքում բարձր է նաև իրավիճակի գնահատման ռիսկը, ինչպես նաև կորպորատիվ մշակույթների անհամապատասխանության հնարավորությունը: Այնուամենայնիվ, կլանումներն ու միաձուլումներն ապահովում են որոշակի առավելություններ, որոնցից կարելի է առանձնացնել.

- նպատակներին արագ հասնելու հնարավորությունը,
- մասշտաբի հաշվին տնտեսումը,
- գործառնական ծախսերի կրճատումը,
- հնարավոր կարճ ժամկետներում անհրաժեշտ ակտիվների ձեռքբերումը,
- անձնակազմի կրճատումը,

⁴²Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ ԴՎԲ հիմնական ուղղությունները, http://www.cba.am/CBA_SITE/about/history/pat6.html?__locale=hy

- կառավարման որակի բարձրացումը,
- շուկայական մասնաբաժնի մեծացումը և այլն:

Գոյություն ունեն կլանումների և միաձուլումների տարբեր դասակարգումներ: Ամենատարածվածներից մեկը հետևյալն է⁴³.

- ընկերության ճյուղային և տարածաշրջանային պատկանելիությունը,
- իրականացվող ինտեգրման եղանակը,
- ընկերության անձնակազմի վերաբերմունքը նման գործարքին:

Ըստ ընկերությունների «ազգային պատկանելության»՝ կարելի է առանձնացնել միաձուլումների և կլանումների 2 տեսակ.

- ազգային կլանումներ և միաձուլումներ, երբ գործ ունենք մեկ երկրի շրջանակներում գտնվող ընկերությունների միավորումների կամ գնումների հետ,
- արտասահմանյան կլանումներ և միաձուլումներ. տարբեր երկրներում գտնվող ընկերությունների միաձուլում, այլ երկրների ֆիրմաների ձեռք բերում:

Որակական առումով առանձնացնում են կլանումների երկու տեսակ.

- ագրեսիվ կլանումներ, որոնց դեպքում նպատակային (կլանվող) ընկերության ղեկավար կազմը համաձայն չի նախատեսված գործարքի հետ,
- «բարեկամական» կլանումներ՝ հիմնված երկկողմ փոխհամաձայնության վրա⁴⁴:

Տարբերում են նաև միաձուլումների հետևյալ տեսակները.

- հորիզոնական միաձուլում. միևնույն ճյուղի ընկերությունների միավորում, որոնք արտադրում են միատեսակ արտադրանք,
- ուղղահայաց միաձուլում. տարբեր ճյուղերի ընկերությունների միավորում, որոնք կապված են միմյանց հետ պատրաստի արտադրանքի արտադրության տեխնոլոգիական գործընթացով (օրինակ՝ լեռնաարդյունահանող, մետալուրգիական և մեքենաշինական ընկերությունների միաձուլում),
- կոնգլոմերատային միաձուլում. տարբեր ճյուղերի ընկերությունների միավորում, որոնք չունեն ո՛չ արտադրական, ո՛չ տեխնոլոգիական, ո՛չ էլ նպատակային ընդհանրություն, այսինքն, այնպիսի ընկերությունների միավորում, որոնք չեն հանդիսանում

⁴³Горелов В.В., Банковские слияния и поглощения как фактор диверсификации рынка банковских услуг, М: Банковские услуги, 2010, №11.

⁴⁴Рид Ст. Ф., Лажу Ал. Р. Искусство слияний и поглощений., М.: Альпина Паблишер, 2011, с. 15-16.

ո՛չ մատակարար, ո՛չ սպառող, ո՛չ էլ մրցակից: Այսպիսի միաձուլումների հիմնական նպատակներից են արտադրական շղթայի, ինչպես նաև շուկայի ընդլայնումը⁴⁵:

Միաձուլումները կարող են լինել ինչպես արտադրական, որի դեպքում միավորվում են երկու և ավելի ընկերությունների արտադրական հզորությունները, այնպես էլ ֆինանսական, որը ենթադրում է ֆինանսական քաղաքականության կենտրոնացում արժեթղթերի շուկայում՝ սեփական դիրքերի ամրապնդման, ինչպես նաև նորարարական ծրագրերի ֆինանսավորման համար:

Միջազգային տերմինաբանությանը համապատասխան, բանկերի միաձուլում ասելով, հասկացվում է երկու կամ ավելի տարբեր բանկերի միավորում⁴⁶: Նեղ իմաստով, միաձուլում ասելով, հասկացվում է միավորված ընկերությունների ինքնուրույն գործընթացի դադարեցում, իսկ լայն իմաստով՝ միաձուլումը տանում է կլանման: Կլանման գործընթացը առանձնանում է նրանով, որ այստեղ ձեռքբերող (կլանող) ընկերությունը գնում է ձեռքբերվող (կլանվող) ընկերության բաժնետոմսերի մեծ մասը կամ բոլոր բաժնետոմսերը: Այսպիսով, կլանված ընկերության բաժնետերերը նոր միավորված ընկերությունում կորցնում են կապիտալի մեջ իրենց մասնաբաժնի նկատմամբ ունեցած իրավունքները: Դրա հետ մեկտեղ կլանված իրավաբանական անձինք կամ դադարեցնում են իրենց գործունեությունը, կամ էլ վերահսկվում են կապիտալի մեջ մասնակցության ճանապարհով:

Գործնականում «կլանում» և «միաձուլում» տերմինները սերտորեն կապվում են իրավաբանական անձի վերակազմակերպման հասկացության հետ⁴⁷, քանի որ այն նրա տարբերակներից մեկն է⁴⁸: Ընկերությունների վերակազմակերպման ձևերը կարելի է բաժանել երկու խմբի.

- առանց ներգրավելու արդեն գոյություն ունեցող ընկերությունը (բաժանման, առանձնացման կամ վերակազմավորման ճանապարհով),
- արդեն իսկ գոյություն ունեցող իրավաբանական անձանց մասնակցության ճանապարհով (ընկերությունների միաձուլման կամ միավորման ճանապարհով

⁴⁵Эванс Ф.Ч., Бишоп Д. М. Оценка компаний при слияниях и поглощениях. Создание стоимости в частных компаниях, М; Альпина Паблишер, 2009.

⁴⁶Саркисянц А, Слияния, поглощения и банкротство в банковской сфере: последние тенденции// Бухгалтерия и банки, 2009, N11, С.44.

⁴⁷Տե՛ս նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 63-րդ հոդվածը («Իրավաբանական անձի վերակազմակերպում»), ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, Եր., «Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ, 2012, էջ 30-31:

⁴⁸Мовсесян А., Либман А., Современные тенденции в развитии и управлении ТНК//«Проблемы теории и практики управления», 2004, №1. стр. 34.

վերակազմակերպում):

Ընկերությունների վերակազմակերպման երկրորդ խումբը մեր հետազոտության համար գիտական հետաքրքրություն է ներկայացնում, քանի որ հենց այս վերակազմակերպումների ժամանակ է տեղի ունենում ընկերությունների աճ և ընդլայնում, որը թույլ է տալիս վերակազմավորումները դիտարկել որպես նրանց ռազմավարության զարգացման տարրեր: Զարգացման ընթացքում շատ ընկերություններ ձգտում են աճել շուկայական տնտեսության պայմաններում: Գոյություն ունեն աճի երկու սկզբունքային տարբերակներ՝ արտաքին կառուցվածքի ձեռքբերում (միաձուլում կամ միավորում) կամ սեփական զարգացում: Բանկային հատվածում հետաքրքրություն է ներկայացնում միայն հորիզոնական միաձուլումը⁴⁹, այսինքն՝ մեկ ճյուղի կազմակերպությունների միավորումը, քանի որ ուղղահայաց միաձուլումները բանկային ինտեգրման հետազոտության շրջանակներում չեն ներառվում:

Շուկայի պայմաններում կլանման և միաձուլման գործարքները շատ բազմազան են և ներկայացված են գծապատկեր 1.2-ում:

Միջազգային գործարքների մեջ կողմերից մեկը դոմինանտ է, որը հաճախ նպաստում է միավորվող կառույցների ինտեգրացիոն գործընթացների ավելի արդյունավետ իրականացմանը:

Որպես կանոն, առանձնացնում են կլանման և միաձուլման գործընթացների զարգացումը խթանող ներքին և արտաքին⁵⁰ գործոններ: Այլ կերպ ասած՝ բանկային հատվածում կլանման և միաձուլման գործընթացների շարժիչ ուժը ներքին կոնսոլիդացիան է, ինչպես նաև արտասահմանյան բանկերի ընդլայնումը: Չնայած ներքին տնտեսական շարժառիթներն ունեն բավականին մեծ դեր կլանման և միաձուլման գործընթացների պլանավորման ժամանակ՝ որոշումների ընդունման ժամանակ արտաքին պայմանները նույնպես մեծ ազդեցություն են ունենում: Դրա հետ մեկտեղ, երկու գործընթացներն էլ փոխկապակցված են, միայն կոնկրետ դեպքերում կարելի է խոսել այս կամ այն գործոնի գերիշխանության մասին:


ՀՀ-ում կայուն և հուսալի բանկային համակարգի ձևավորման, ինչպես նաև համաշխարհային տնտեսության մեջ ինտեգրման գործընթացների ուժգնացման պայմաններում ի

⁴⁹Бланк И.А. Финансовый менеджмент. Учебный курс-К. Ника Центр. Эльга, 2002, с. 519.

⁵⁰Орлова Н. , Модели слияний-поглощений в международной банковской сфере// Финансист, 2000 ,N9, с. 72-76.

հայտ է գալիս ՀՀ բանկերի գործունեության կատարելագործման անհրաժեշտությունը, բանկային գործի ազգային ներուժի կիրառման հետ մեկտեղ օբյեկտիվորեն պահանջվում է կլանման և միաձուլման գործընթացների ոլորտում միջազգային փորձի և ժամանակակից միտումների կիրառումը, ինչպես նաև հայրենական բանկային համակարգը արտասահմանյան բանկերից պաշտպանելու անհրաժեշտությունը: Բացի այդ, տնտեսության գլոբալացման գործընթացները և այլ մակրոտնտեսական տեղաշարժերը հանգեցնում են մրցակցային միջավայրի փոփոխությանը, որն իր հերթին ազդում է ընթացող գործունեության արդյունավետության նվազման վրա և ստիպում է փնտրել զարգացման նոր ուղիներ:

Առանձին բանկի տեսանկյունից այլ բանկի հետ միաձուլումը, այլ բանկի կլանումը կամ ուրիշ բանկի կողմից կլանված լինելու համաձայնությունը այն հիմնավորված որոշումն է, որը պետք է կապված լինի մարտավարական խնդիրները լուծելու ձգտման հետ: Այս խնդիրը նախ և առաջ շուկայի կառուցվածքի փոփոխման հետևանքն է: Հենց շուկայի կառուցվածքի փոփոխությունները կարող են հանդիսանալ *կլանման և միաձուլման գործընթացների արտաքին պատճառները*:



Գծապատկեր 1.2. Ինտեգրման գործընթացի տեսակները⁵¹

ՀՀ-ում բանկերի կլանումներն ու միաձուլումները վերջին տարիներին զարգանում են բավականին արագ տեմպերով՝ հանդիսանալով բանկային հատվածի շարունակական բարեփոխումների և զարգացումների ակտուալ գործընթացներ: Դա բացատրվում է

⁵¹Игнатишин Ю., Слияния и поглощения: стратегия, тактика, финансы.-СПБ.:Питер, 2005, с. 24.

նրանով, որ տնտեսական աճը, որն անկայունություն է դրսևորում Հայաստանում, պահանջում է ֆինանսական և բանկային համակարգի կողմից մշտական հոգածություն: Moody's գործակալությունը ակնկալում է կլանման և միաձուլման գործարքների աճ, որն իր մեջ կրում է բանկերի ավելի ուժեղ ներուժ ստեղծելու հնարավորություն:⁵²

Վերջին տարիներին աշխարհում տեղի ունեցող ճգնաժամային իրավիճակների ազդեցությամբ բանկային հատվածում կլանումների և միաձուլումների գործարքների միջին արժեքը նվազման միտում է դրսևորում, ինչը բացատրվում է դրանց ֆոնդային կապիտալացման զգալի նվազմամբ և բարձր գների անկայունության պատճառով սկսված խոշոր գործարքի անավարտությամբ⁵³: Նկատենք, որ կենտրոնացման, միաձուլումների և կլանումների միտումները շոշափեցին զարգացած բոլոր երկրների բանկային համակարգերը, ինչը էապես փոխեց ուժերի դասավորվածությունը համաշխարհային բանկային համակարգում:

Վերջին տարիներին առավելապես սուր մրցակցություն է ծավալվել ամերիկյան և եվրոպական վերազգային բանկերի միջև: Հատկանշական են նաև 2007-2009 թթ. ֆինանսական ճգնաժամի տարիներին ԱՄՆ բանկային համակարգում տեղի ունեցող միաձուլումների ու կլանումների գործընթացները: Խնդրահարույց հիփոթեքային վարկերի ազդեցությանը չհաջողվեց դիմակայաել նաև ամերիկյան ամենահին և ամնաազդեցիկ բանկերից մեկին՝ «Bears Stearns»-ին: Վերջինս պատկանում էր ամերիկյան ամենազդեցիկ հինգ առևտրային բանկերի խմբին: Խորոշագույն հնգյակի մեջ էին մտնում նաև աշխարհահռչակ «Goldman Sacks»-ը, «Lehman Brothers»-ը, «Morgan Stanley»-ն, որոնցից այսօր մնացել են 3-ը՝ «Goldman Sacks», «Morgan Stanley» և «Bank of America»: 2008 թ. նշանավորվեց 2 կարևորագույն իրադարձություններով. «Lehman Brothers»-ը հայտարարեց իր սնանկացման մասին, իսկ «Merrill Lynch»-ը՝ վաճառքի մասին: Արդյունքում՝ «Bank of America»-ն ընդամենը 50 մլրդ ԱՄՆ դոլարով գնեց «Merrill Lynch»-ը, իսկ բրիտանական «Barclays»-ը 1,75 մլրդ ԱՄՆ դոլարով գնեց «Lehman Brothers»-ը⁵⁴: Բանկային այս մեծ հնգյակի մյուս երկու մասնակիցներն իրենց՝ ներդրումային բանկի կարգավիճակը փոխարինեցին բանկային հոլդինգի:

⁵²<http://news.am/information/aboutbankingintegration>.

⁵³Шапран В.С., Слияния и поглощения: тенденции с поправкой на перемены//Банковское дело, 2009, N1, с. 46.

⁵⁴Bank of America Corporation, <http://www.hoovers.com/company-information/company-search.html?term=%20%20Bank%20of%20America%20Corporation%20>

Սակայն առավել խոշորագույն փոփոխությունները տեղի ունցան ճապոնական բանկային համակարգում: Երեք բանկերի՝ «Dai-Ichi Kangyo Bank»-ի, «Industrial Bank of Japan»-ի և «Fujii Bank»-ի միավորման արդյունքում 2002թ. ձևավորվեց աշխարհի թերևս խոշորագույն միասնական համակարգը՝ «Mizuho Financial Group»-ը գործունեության երեք հիմնական ուղղություններով՝ կորպորացիաների վարկավորում (այստեղ վարկավորվում է աշխարհի յուրաքանչյուր երրորդ կորպորացիան), մանրածախ գործարքներ («կողմնակի» գործարքների ընդհանուր շուկայի 15%-ը) և ներդրումային բանկային գործունեություն⁵⁵:

Բացի այդ, այս ոլորտի միտումների վրա մեծ ազդեցություն են թողնում պետական կարգավորումները: Լիազոր մարմինների ազդեցությունը կլանման և միաձուլման գործարքների խթանման վրա համարվում է ՀՀ բանկային հատվածի վերակառուցման գերարդիական հիմնախնդրներից մեկը: Համաաշխարհային փորձը ցույց է տալիս, որ տարածաշրջանի կտրվածքով կապիտալի կենտրոնացման հետ կապված ամենատարածված սահմանափակումը 65%-ի սահմանը 4 առաջատար բանկերի գծով կամ տարածաշրջանի բանկային ծառայությունների շուկայի 35%-ը, որը մատուցվում է 1 բանկի կողմից⁵⁶: ՀՀ-ում այդպիսի սահմանափակում ամրագրված չէ:

Հարկ է նաև նշել, որ կլանման և միաձուլման հետ կապված գործարքները էապես կախված են միավորվող բանկերի կազմակերպատիրական ձևից: Կլանումները և միաձուլումները ավելի պարզ են ընթանում, երբ միավորվող բանկերն ունեն բաժնետիրական ընկերության ձև (ԲԲԸ կամ ՓԲԸ) և համեմատաբար ավելի բարդ՝ այլ կազմակերպատիրական ձևերի դեպքում:

Բանկային հաջող գործունեությունն օբյեկտիվորեն առնչվում է սահմանափակ կապիտալին: Կապիտալի համակենտրոնացման գործընթացը հնարավորություն է տալիս որոշակիորեն հաղթահարել այդ սահմանափակումը: Քանի որ հայրենական բանկային համակարգի համար հատուկ է կապիտալի բարձր ապակենտրոնացումը, ինչը բանկերին թույլ չի տալիս կենտրոնացնել ռեսուրսները խոշոր ներդրումային նախագծերի իրականացման համար, ապա իրենց դիրքերը ՀՀ բանկային շուկայում պահպանելու համար հայկական բանկերը խոշորանում են վերակազմավորման ճանապարհով:

Թերևս հենց այս խնդրի լուծմանն է ուղղված նաև բանկային կապիտալի ստորին շեմի

⁵⁵ Աղբյուրը՝ Mizuho Financial Group-ի պաշտոնական կայք, <http://www.mizuho-fg.co.jp/english/company/info/profile.html>

⁵⁶ Рыбин Е.В. Пути Повышения конкурентоспособности российский банков. М. Финансы и статистика, 2008, с. 114.

բարձրացման ՀՀ ԿԲ քաղաքականությունը: ՀՀ բանկային բիզնեսի խոշորացման գլխավոր շարժառիթներն են՝ բանկային գործունեության շահութաբերության, մրցունակության և հաճախորդների սպասարկման որակի բարձրացումը, նոր շուկաների գրավումը գործունեության մասշտաբների մեծացման հաշվին, սիներգետիկ էֆեկտի ապահովումը հաճախորդների բազայի ընդլայնման հաշվին: Սեփական շահույթի հաշվին կապիտալի ավելացումը պահանջում է բավականին երկար ժամանակ: Կլանումներն ու միաձուլումները թույլ են տալիս այդ խնդիրը լուծել զգալիորեն ավելի արագ: Սահմանելով կապիտալի ստորին շեմ, որը 6 անգամ գերազանցում է գործող մակարդակին՝ ԿԲ-ը նպատակ է հետապնդում մեծացնել առևտրային բանկերի դերը տնտեսության մեջ: Կախված նրանից, թե ՀՀ առևտրային բանկերն ինչպես կլուծեն այս խնդիրը՝ արդեն 2017թ. կամ պետք է ունենանք ավելի մեծ կապիտալով բանկեր, որոնց թիվը չի պակասի, կամ կշարունակենք ականատես լինել կլանման ու միաձուլման գործընթացների ու բանկային կապիտալի խոշորացման՝ ի հաշիվ բանկերի թվի կրճատման, ինչպես արդեն սկսվել է:

Սակայն, բացառված չեն և բավականին մեծ է հավանականությունը, որ կլանումներ ու ձուլումներ հնարավոր են նաև միջազգային բանկային ինտեգրման միջոցով ու ՀՀ համար առավել կարևոր է լուծել այն խնդիրը, թե ինչպիսի բանկային ձուլումներն և կլանումներն են ի վիճակի լուծել հայրենական բանկային հատվածի խնդիրները՝ ցանկացած, թե՛ միայն հայրենական կապիտալների միջև: Մեր տնտեսությունում կլանումներն ու միաձուլումները զգալի տեմպով են աճում, բայց ոչ բոլորն են հանգեցնում դրական արդյունքի: Տնտեսագետների կարծիքով ՀՀ բանկային ոլորտում կլանումներն ու միաձուլումները բարեհաջող ավարտ են ունենում, եթե բանկերը մեծ չեն: Խոշոր բանկերի դեպքում առավել մեծ է հավանականությունը, որ գործարքը կունենա ցածր արդյունավետություն⁵⁷:

Մինչև 2017թ. ընդհանուր կապիտալի նվազագույն չափի ապահովման ԿԲ նոր պահանջը լուրջ փորձություն կդառնա Հայաստանի շատ բանկերի համար: Ըստ որոշ փորձագետների՝ կարգավորողի կողմից ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվը ներկայիս 5 մլրդ դրամից 2017թ. հունվարի 1-ին մինչև 30 մլրդ դրամ սահմանումը ոչ միայն կխթանի բանկային շուկայում վաղուց սպասվող միաձուլումների և կլանումների գործընթացը (Mergers and Acquisitions, M&A), այլև չի բացառվում, որ դաշտից

⁵⁷Исследования слияния и поглощения банков не всегда успешны, URL: www.rosinvest.com.news/324840

դուրս կբերի շուկայի որոշ թույլ և վտանգավոր մասնակիցների՝ դրանց հաշվեկշիռներում քողարկված թունավոր ակտիվների մեծ ծավալի առկայության տեսանկյունից:

Այսպիսով՝ ՀՀ բանկային համակարգի միջազգային ինտեգրացիան զգալիորեն ապահովվում է օտարերկրյա ներդրումների ներգրավման հաշվին, որը ոչ միայն լուծում է բանկային հատվածի ցածր կապիտալացման խնդիրը (դրական հետևանք), այլ նաև իր մեջ կրում է բանկային հատվածի նկատմամբ վերահսկողության կորստի և հայրենական բանկերի մրցունակության նվազեցման վտանգ (բացասական հետևանք): ՀՀ-ում բանկային համակարգի կանոնադրական կապիտալում օտարերկրյա մասնակցությունը 2013թ. մայիսին կազմել է 73.2%՝ տարեսկզբի համար կրճատվելով 0.2%-ով: ՀՀ ԿԲ տվյալների համաձայն՝ 2007-2012թթ. հայկական բանկերի կապիտալում ոչ ռեզիդենտների մասնաբաժինն աճել է՝ 2007թ.-ի 58%-ից հասնելով 2010թ.-ի պիկային 78.9%-ի⁵⁸: Սակայն 2010թ.-ից սկսվեց նկատվել կապիտալում օտարերկրյա մասնակցության կրճատման միտում, և 2012թ.-ին տվյալ ցուցանիշը կազմեց 73.1%՝ 2011թ.-ի 75.1%-ի դիմաց:

Պետք է նշել, որ այս բնագավառի միտումների վրա մեծ դեր ունեցավ համաշխարհային ֆինանսական ճգնաժամը: Կարելի է առանձնացնել մի քանի առանձնահատկություններ, բանկային հատվածի կլանման և միաձուլման գործարքների հետ կապված, որոնք ձևավորվել են տնտեսության մեջ ճգնաժամային երևույթների ազդեցության ներքո.

- բազմաթիվ բանկերում բաժնետոմսի ֆոնդային արժեքի նվազեցումը հանգեցրել է գործարքային գների նշանակալի նվազեցման, որն իր հերթին ազդել է, կլանման և միաձուլման գործարքների հետ կապված, ֆինանսական խորհրդատուների պարզևատրման ծավալների վրա (2008 թ.-ի առաջին 9 ամիսներ ընթացքում նվազումը հասել է մինչև 26 միլիարդ ԱՄՆ դոլար⁵⁹),
- կլանումներն ու միաձուլումները ավելի շատ սկսեցին կիրառվել որպես բանկերի սնանկության նախազգուշացման միջոց, քան որպես բանկերի միավորումից եկամուտների աճի միջոց.
- չնայած կարգավորող մարմինների ձգտմանը՝ բանկային համակարգում կապիտալի կենտրոնացման մակարդակի բարձրացման ջանքերին, ռիսկերից պաշտպանելու նպատակով, կլանման և միաձուլման գործընթացները դանդաղել

⁵⁸ <http://www.armbanks.am/hy/2013/07/25/58695/>

⁵⁹ Шапран В.С. Указ соч.; с. 47.

են: Կարելի է ենթադրել, որ դա կապված է որոշակի սահմանի ձեռքբերման հետ, որի դեպքում բանկային կառույցների հետագա միավորումները կհանգեցնեն օլիգոպոլիաների առաջացման տվյալ շուկայում:

ՀՀ տարածքում հենց օտարերկրյա բանկային կապիտալի կողմից մրցակցությունն է դառնալու այն երևույթը, որի ազդեցության տակ մեր հանրապետությունում բանկային հատվածի զարգացման նոր ժամանակահատված կսկսվի: Հենց այդ մրցակցության արդյունքներից հիմնականում կախված կլինի, թե ինչ ճանապարհով կանցնի հայրենական բանկային հատվածի զարգացումը. ներքին և միջազգային ֆինանսական շուկաներում կդառնա լուրջ, ինքնուրույն խաղացող, թե կդառնա գլոբալ բանկերի տեղական հավելում:

Հայրենական ֆինանսական կազմակերպությունների միջազգային շուկաներ դուրս գալու, տեղական շուկա օտարերկրյա հսկայածավալ բանկային կապիտալի մուտք գործելու, տեղական ընկերությունների համար կապիտալի միջազգային շուկայից փոխառություններ ստանալու պայմաններում հայրենական բանկերը կանգնում են երկընտրանքի առաջ՝ կամ դառնալ իսկապես մրցունակ, խոշոր, ունիվերսալ բանկեր կամ սահմանափակվել տեղի միջին և փոքր բիզնեսի սպասարկմամբ, ավելի գրավիչ հաճախորդներին թողնելով ոչ ռեզիդենտ բանկերի դուստր ինստիտուտներին և դրանց մայր բանկերին:

Այսպիսով, համաշխարհային ֆինանսական համակարգում բանկային համակարգի ինտեգրումն իրենից ներկայացնում է բանկային համակարգի տարրերի գործունեության ընդլայնման գործընթաց, որը կատարվում է արտասահմանյան պետությունների շուկաներում նրանց մասնակցության ուժեղացմամբ կամ նրանց մուտքով վերազգային տնտեսական կառույցներ, որի նպատակը նոր կապեր հաստատելն է կամ զարգացնելը՝ ինտեգրման սուբյեկտների միջև արդեն գոյություն ունեցող կապերի վերազգային կամ այլ կարգավորման հիման վրա: Միջազգային ինտեգրումը բանկի՝ միջազգային հարաբերություններ հաստատելուն և զարգացնելուն ուղղված գործընթաց է տնտեսական և, հիմնականում, այլ շահույթներ ստանալու նպատակով:

Որպես բանկային ինտեգրացիայի դասակարգման լրացուցիչ չափանիշներ աշխատանքում առաջարկված են՝ ինտեգրման ուղղությունը, բանկային ինտեգրացիոն գործընթացների նախաձեռնողը, ինտեգրման գործընթացների մակարդակը:

ԳԼՈՒԽ 2. ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՅԻՆ ՇՈՒԿԱՅԻՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Միջազգային բանկային ծառայությունները և զարգացման միտումները

Առաջատար օտարերկրյա բանկերի, ինչպիսիք են՝ «Չեյզ Մանհեթեն բանկը», «Սթիփ-բանկը» (ԱՄՆ), «Դոյչե բանկ», «Դրեզդներ բանկ», «Ֆերայնց բանկը» (Գերմանիա), «ԻՆԳ-Բերինգը», «Ռաբո-բանկը» (Հոլանդիա), «Սույետե Ժեներալը» (Ֆրանսիա) և այլն, բանկային ծառայությունների ուսումնասիրման արդիականությունը պայմանավորված է միջազգային վարկային շուկային ինտեգրվող բանկերի բանկային ծառայությունների տրամադրման պայմաններին ու որակի ստանդարտներին ադապտացման անհրաժեշտությամբ: Ժամանակակից հետազոտողները դիտարկում են առաջատար օտարերկրյա բանկերի բանկային ծառայությունների տրամադրման փորձի կիրառման գծով հիմնախնդիրների համալիրը:

Ատենախոսության սույն բաժնում կարևորում ենք նաև ժամանակակից միջազգային բանկային ծառայությունների զարգացման միտումների վերլուծությունը, քանի որ դա թույլ կտա միջազգային վարկային շուկային ինտեգրվող բանկին օգտվելու ծառայությունների տրամադրման ժամանակակից տեխնոլոգիաներից: Համաշխարհային տնտեսության գլոբալացման պայմաններում արտաքին տնտեսական գործունեության սպասարկման գծով բանկային ծառայությունների նշանակությունը մշտապես աճում է, մեծանում է ներդրումային, խորհրդատվական, տեղեկատվական ծառայությունների դերը, ակտիվների կառավարումը, առաջին պլան են մղվում ինտերնետի օգտագործմամբ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում բանկային ծառայությունները:

Հեռահաղորդակցության տարբեր միջոցների օգտագործմամբ բանկային ծառայությունների տրամադրումը բանկային ծառայությունների զարգացման հիմնական միտումներից է: Բանկային ծառայությունների շուկայի զարգացման հիմնական միտումը, ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, այն է, որ գնալով ավելի մեծանում է առանց բանկ հաճախելու բանկային ծառայություններից օգտվելու պրակտիկան և

բանկային ծառայությունների տրամադրման ժամանակ աճում է տարբեր շարժական սարքերի, հեռախոսի, ֆաքսի ու ինտերնետի նշանակությունը: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ միջինում համակարգչայնացման ծախսերի բաժինը կազմում է բանկի տարեկան ծախսերի ընդհանուր նախահաշվի 17%-ը⁶⁰:

Միջազգային վարկային շուկային ինտեգրվող բանկը բախվում է օտարերկրյա բանկերի միջոցով հաշվարկներ կատարելու և համաշխարհային բանկային պրակտիկայում ընդունված ստանդարտներ պահպանելու անհրաժեշտության հետ: Սակայն, միջազգային վարկային շուկայում հաջողությամբ գործելու համար բանկին անհրաժեշտ է հասնել զարգացման բարձր մակարդակի հատկապես նոր տեխնոլոգիաների ոլորտում⁶¹:

Ժամանակակից միջազգային վարկային շուկայի պայմաններում առավելագույն հետաքրքրություն է ներկայացնում ինտերնետ-բանկինգը: Համացանցի միջոցով առցանց բանկային ծառայությունները (Internet banking) և ինտերնետի միջոցով բանկային հաշիվների վարումն այսօր դարձել են մեր կյանքի արդեն իսկ անբաժանելի մասը և եթե ընդամենը մի քանի տարի առաջ ինտերնետի միջոցով սեփական բանկային հաշվից միջազգային փոխանցումներ և տարատեսակ վճարումներ իրականացնելը թվում էր ոչ ավանդական, ապա այսօր շատերն ուղղակի գերադասում են սեփական բանկային հաշիվների կառավարման այս տարբերակը⁶²: Այնուամենայնիվ, հայ հասարակության տարբեր շերտերում բանկային ծառայությունների ներթափանցմանը զուգահեռ աճում է նաև համացանց օգտագործողների թվաքանակը և ինտերնետ բանկինգը, որպես ավանդական բանկային սպասարկման հավելյալ ծառայություն, եթե նույնիսկ առայժմ մեծ պահանջարկ չի վայելում, ապա առնվազն արդեն ճանաչելի է:

Իր հերթին, մասնաճյուղերի ու բաժանմունքների արդյունավետությունը ժամանակակից վերազգային բանկերի առաջնահերթ հիմնախնդիրն է: Մի կողմից, այնպիսի բանկերը, ինչպիսիք են՝ «Չեյզ Մանհեթեն բանկը», «Սիթիբանկը», «Դոյչե բանկը», զարգացած մասնաճյուղային ու թղթակցական ցանցերի շնորհիվ տրամադրում են բանկային ծառայությունների համալիր պորտֆելներ՝ անկախ հաճախորդի աշխարհագրական դիրքից: Մյուս կողմից՝ առաջատար բանկերի հիմնախնդիրներից է

⁶⁰Рудакова О. С., Банковские электронные услуги. М.: Банки и биржи, Юнити, 1997, с. 30.

⁶¹Закарян И. О., Интернет как инструмент для финансовых инвестиций. СПб.: BHV Санкт-Петербург, 1999, с. 29.

⁶²Broschinski G. Konsistente Wertpapierberatung im Multi Channel Banking//Bank.2002, #3, pp. 82-87.

մասնաճյուղային ցանցի վերակազմավորումը, քանի որ բազմամասնաճյուղային բանկերի կառավարման ժամանակակից համակարգերը հանգեցնում են բանկային ծառայությունների թանկացմանը և լրացուցիչ ծախսերին: Այսպիսով, բանկային ծառայությունների իրացման ուղիները պետք է մի կողմից ապահովեն վաճառքների օպտիմալ մակարդակ, իսկ մյուս կողմից՝ ծախսերի նվազեցում: Ժամանակակից բանկերն այս հիմնախնդիրը լուծում են մետերներտի օգտագործմամբ նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման միջոցով: Բանկային սպասարկման առցանց ռեժիմին անցնելու հետ էապես նվազում է մասնաճյուղերի այցելուների թիվը և, համապատասխանաբար, նվազում է մասնաճյուղային գործարքների ծավալը՝ 44%-ից մինչև 28%, ինչի արդյունքում բանկերի ծախսերը նվազում են 8%-ից 20%-ի չափով⁶³:

Ժամանակակից բանկի ռազմավարական կարևոր խնդիր է ծառայությունների տրամադրման երեք տարբերակների միջև հավասարակշռության սահմանումը. 1)ստանդարտացված բազային ծառայություններ առանց խորհրդատվությունների, 2)ծառայության մատուցում ակտիվ խորհրդատվություններով և 3)միկրոսեգմենտավորմամբ և ինտենսիվ խորհրդատվություններով ֆինանսական հիմնախնդիրների լուծում:

Ընդհանուր առմամբ, մոտակա տարիներին բանկային ծառայությունների զարգացման հեռանկարները հիմնվելու են բանկային հատվածում կառուցվածքային փոփոխությունների հետևյալ երեք գործոնների վրա.

1. մուտք տվյալ ճյուղ,
2. բանկի գործունեության բազմազանեցում՝ արտահաշվեկշռային ծառայությունների տրամադրման հաշվին,
3. փոխատվական կապիտալի շուկայում ծառայությունների զարգացում⁶⁴:

«Ճյուղ մտնել»-ը ենթադրում է վերազգային կորպորացիաների կողմից «ներքին բանկերի» ստեղծում:

Արտահաշվեկշռային ծառայությունների տրամադրման հաշվին բանկային գործունեության բազմազանեցումը պայմանավորված է խորհրդատվական ու տեղեկատվական ծառայությունների դերի բարձրացմամբ: Զգալիորեն շատացել են խորհրդատվական

⁶³Володина В. Н., Банковское обслуживание частного клиента с использованием мобильной связи//Банковские услуги, 2001, #9, с. 6.

⁶⁴ Keraudy E., La titrisation au secours des financements de project//Banque magazine.P., 2001, #629, pp.16-19.

ծառայությունները՝ ֆինանսական միաձուլման ու կլանման, ռազմավարական ներդրողների որոնման հետ կապված:

Նկատենք, որ ժամանակի ընթացքում չի բացառվում, որ մարդիկ ընդհանրապես դադարեն բանկ այցելել և բանկի ծառայություններից օգտվելու համար անհրաժեշտ չի լինի ունենալ մասնաճյուղերի ու սպասարկման կետերի մեծ ցանց: Սա, ըստ էության, նաև բանկային համակարգում արդյունավետ ինտեգրման ուղղություն կարող է դառնալ և տարբեր երկրներում բանկերի մասնաճյուղեր բացելու փոխարեն, ինչպես ներկայումս արդեն անում են շատ առաջավոր բանկեր, մեծացնում են իրենց թղթակցային հարաբերությունները և հնարավորություն տալիս օգտվել իրենց ծառայություններից՝ անկախ այդ տարածքում գտնվելու անհրաժեշտությունից:

Բանկային ծառայությունների զարգացման գործում կարևոր տեղ են զբաղեցնում փոխատվական կապիտալի շուկայում իրականացվող ծառայությունները: Միջազգային վարկային շուկայում զգալիորեն մեծանում է վերազգային կորպորացիաների վարկավորման գծով նոր բանկային ծառայությունների բաժինը: Այսպես, օրինակ՝ ճյուղավորված միջազգային ցանցով խոշոր բանկերն իրենց հաճախորդներին տալիս են վարկի երկիրը, արժույթը և տոկոսադրույքն ընտրելու իրավունք: Վարկավորման այդ տեսակը կոչվում է բազմարժույթային վարկային գիծ: Դա գործիք է, որը թույլ է տալիս ստանալ վարկ միաժամանակ մի քանի արժույթով ընդհանուր լիմիտի սահմաններում⁶⁵: Մեծ հեղինակություն են ձեռք բերում բազմաօպցիոնային վարկային գծերը՝ սովորական վարկային գծերի զուգակցումը ֆինանսական շուկայի տարբեր գործիքներ ընտրելու փոխառուի իրավունքի հետ, ինչը թույլ է տալիս հաճախորդին ընտրել բանկային ծառայությունների լայն շրջանակից ֆինանսավորման առավել էժան աղբյուրները⁶⁶:

Վերջին տարիներին հստակ մատնանշվել է փոխատվական կապիտալի շուկայում բանկային ծառայությունների մեծացման միտումը, որտեղ բանկը հանդես է գալիս իբրև միջնորդ՝ փոխառուի ու վարկատուի միջև, ընդ որում՝ այս ծառայությունները պատկանում են արտահաշվեկշռային բանկային ծառայությունների շարքին: Այդպիսի ծառայությունների թվին են դասում երաշխիքային վարկային նամակներն ու այլ ֆինանսական երաշխիքները,

⁶⁵ <http://www.mtbank.by/corporate/credits/kredity-dlya-biznesa>

⁶⁶ Афанасьева О. А., Тенденции развития и направления совершенствования краткосрочного кредитования предприятий//Банковское дело, 2002, #6, с.13.

արժեթղթավորումը, փոխառությունների վաճառքը⁶⁷:

Փոխատվական կապիտալի շուկայում միջնորդային բանկային ծառայությունների ընդլայնումը պայմանավորված է նրանով, որ կորպորացիաները նպատակ ունենալով տնտեսումներ կատարել բանկային տոկոսի հաշվին՝ անմիջականորեն իրականացնում են փոխառություններ՝ կապիտալի միջազգային շուկաներում պարտատոմսային փոխառությունների և ֆինանսական շուկայի այլ գործիքների միջոցով: Տվյալ փաստն էականորեն ազդեց բանկային ծառայությունների վերաբաշխման վրա, այսինքն՝ փոխատվական կապիտալի շուկայում միջնորդային ծառայությունները ընդլայնվեցին և դասական բանկային վարկային ծառայությունները նվազեցին:

Բանկային ծառայությունների զարգացման վերոնշյալ միտումների ամբողջականությունը՝ համաշխարհային առևտրի ծավալների մեծացման, արդյունաբերության մեջ ու ֆինանսական ոլորտում կլանման ու միաձուլման գործընթացների ակտիվացմամբ և վերազգայնացմամբ պայմանավորեցին միջազգային բանկային ծառայությունների աճը: *Միջազգային բանկային ծառայությունների շարքին մենք դասում ենք հաճախորդի արտաքին տնտեսական գործունեության բանկային սպասարկման հետ կապված ծառայությունները:*

Վերջին տարիներին էապես ավելացել են միջազգային առևտրի մասշտաբները: Այսպես, ներկայումս համաշխարհային մակարդակով ապրանքների արտահանումը մեծացել է՝ հասնելով 20 տրլն ԱՄՆ դոլարի: Միջազգային առևտրի աճը պայմանավորեց միջազգային հաշվարկներով միջազգային բանկային ծառայությունների մեծացումը: Միջազգային հաշվարկներով ժամանակակից միջազգային բանկային ծառայությունները զարգանում են ռիսկերի նվազեցման ուղղությամբ, զանազան նոր ֆինանսական գործիքների օգտագործման շնորհիվ և ներկայանում են այլ ծառայությունների՝ վարկավորման, երաշխավորման, խորհրդատվության փաթեթների հետ միասին: Հենքային ծառայությունները կրում են ունիֆիկացված բնույթ⁶⁸:

Միաձուլումների ու կլանումների գործընթացը, որն ընթանում է բանկերի անմիջական մասնակցությամբ, նպաստում է միջազգային խորհրդատվական ու ներդրումային

⁶⁷Бандурина Н. В., Требование об обязательности письменной формы кредитного договора с предпринимателями, Московская академия экономики и права, 2007, с. 85-89.

⁶⁸ Mohan R., Monetary policy in a Globalised World: A Practitioner's View. New Delhi: Oxford University Press, 2009, p. 36.

բանկային ծառայությունների մեծացմանը: Սկսում են իրականացվել «ինքնախորհրդատվության» սկզբունքով խորհրդատվական ծառայությունների տրամադրման գծով ինտերնետ-նախագծերը, երբ «հարց/պատասխան» կառուցվածքային ալգորիթմի հենքի վրա օգտագործողն ավտոմատ կերպով ստանում է ներդրումային նախագծերի վերաբերվող խորհրդատվություններ⁶⁹:

Կապիտալ ներդրումների ազատականացումը հնարավոր դարձավ միջազգային բանկային ցանցերի շնորհիվ, որոնց օգնությամբ բանկերը սկսեցին տրամադրել միջազգային բանկային ծառայություններ⁷⁰:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ համաշխարհային տնտեսության և միջազգային վարկային շուկայի զարգացման միտումները վկայում են այն մասին, որ ժամանակակից կյանքը ձեռք է բերում արտահայտված միջազգային բնույթ: Դա իր արտացոլումը գտավ միջազգային տնտեսական ու առևտրային հարաբերությունների ակտիվացման գործում, որոնք հնարավոր դարձան տեխնիկապես հզոր բանկերի գործունեության և դրանց կողմից տրամադրված միջազգային բանկային ծառայությունների շնորհիվ: Այսպիսով, բանկային բիզնեսի զարգացման հիմնական միտումներից է միջազգային բանկային ծառայությունների դերի մեծացումը:

Միջազգային վարկային շուկայի շրջանակներում առաջնահերթ նշանակություն ունի հաշվարկների կազմակերպումը: Միջազգային հաշվարկների կազմակերպման համար մշակված են տարբեր վճարային համակարգեր՝ սկսած գլոբալներից, ինչպիսին է՝ ՍՎԻՖՏ-ը, վերջացրած առանձին բանկերի թղթակցային ցանցերի վրա հիմնված համակարգերով: Այս կամ այն վճարային համակարգն ունի իր առանձնահատկությունները, որոնք անմիջականորեն ազդեցություն են գործում միջազգային վճարահաշվարկային բանկային ծառայությունների մրցունակության վրա, ինչը շատ կարևոր է միջազգային վարկային շուկային բանկի ինտեգրման գործընթացի մեջ:

Ներկայումս ավելի ու ավելի մեծ տարածում են ստանում SWIFT համակարգով միջազգային փոխանցումները: Այսօր SWIFT-ը ներգրավում է ավելի քան 3700 ֆինանսական ինստիտուտներ՝ բանկեր, բրոքերային գրասենյակներ, դիլերային և ապահովագրական

⁶⁹ Lopinto M. Internet et banque privée//Banque magazine, 1999, #66, pp. 256-259.

⁷⁰ Саломатина С. А., Международные корреспондентские сети московских коммерческих банков накануне первой мировой войны, //Экономическая история.Обзорение/Под ред Л. И. Бородкина, Выпк. 11 М., 2005, с. 8-36.

ընկերություններ և այլն:

SWIFT համակարգի հետ մեկտեղ գոյություն ունեն նաև այլ համակարգեր: ԵՄ-ում միջազգային հաշվարկներն իրականացվում են հետևյալ վճարային համակարգերից մեկով՝ անդրեվրոպական իրական ժամանակում համախառն հաշվարկների ավտոմատացված էքսպրես-համակարգով՝ ՏԱՐԳԵՏ, Եվրոպական բանկային ասոցիացիային կից Եվրոպական քլիրինգային համակարգով (ԵԲՀ) և այլն:

Գործող վճարային համակարգերի հետ մեկտեղ ԵՄ անդամ երկրների բանկերն ավանդական ծառայություններ են մատուցում թղթակցային հարաբերությունների միջոցով վճարների իրականացման ժամանակ: Վճարային ծառայությունների այս տեսակը վերաբերում է փոքր ու միջին բանկերին: Վերազգային բանկերը տրամադրում են թղթակից-բանկերին վճարային ծառայություններ, որոնք հիմնված են սեփական լոկալ ցանցերի՝ մասնաճյուղերի, դուստր բանկերի ու լորո թղթակցական հաշիվների վրա: Դրանք ապահովում են հաշվարկների անցկացման արագությունն ու նվազագույն թղթակցային վարձատրությունը:

ԵՄ-ում մեծ առավելություններ ունեն հետևյալ չափանիշներին բավարարող բանկերի ծառայությունները.

1. հաշվարկների իրականացման համար իրացվելի միջոցների բավարար պաշար ապահովող ակտիվների ու կապիտալի չափը,
2. անմիջական մուտքը դեպի ԵՄ և այլ երկրների հաշվարկային հիմնական համակարգեր,
3. զարգացած մասնաճյուղային ու թղթակցական ցանցի առկայությունը,
4. մրցունակ սակագները սպասարկման բարձր որակի պայմաններում⁷¹:

Վերոնշյալ չափանիշներին առավելապես համապատասխանում են «Դոյչե բանկը» (Գերմանիա), «ԱԲՆ ԱՄՐՕ Բանկը» (Հոլանդիա), «Սոսյետե Ժեներալը» (Ֆրանսիա) և «Սիթիբանկը» (ԱՄՆ): Տվյալ բանկերի վճարային ծառայությունների զարգացման ռազմավարությունն ուղղված է նոր հաճախորդների ու թղթակից-բանկերի ներգրավմանը՝ ցածր սակագների, ծառայությունների բարձր որակի, զարգացած մասնաճյուղային ենթակառուցվածքի, խոշորագույն եվրոպական վճարային համակարգերում (ՏԱՐԳԵՏ, ԵԲՀ) վճարների իրականացման պայմաններին, հաշվարկների անցկացման ժամկետների ադապտացման վրա:

⁷¹ Giddy I., Global financial markets. Lexington, Massachusetts: D.C. Heath and Compnsi, 2000, p. 78.

Վճարահաշվարկային ծառայությունների շուկայում Արևմտյան Եվրոպայի վերազգային բանկերի հիմնական մրցակիցները ամերիկյան բանկերն են: ԱՄՆ-ում գործում են երկու խոշոր վճարային համակարգեր՝ ՖԵԴՎԱԵԻՐ (FEDWIRE) և ՉԻՊՍ (CHIPS), որոնք իրականացնում են դոլարով վճարային ծառայությունների ընդհանուր ծավալի ավելի քան 80%-ը: ՖԵԴՎԱԵԻՐ համակարգում վճարների մոտ 40%-ը՝ միջբանկային գործարքներն են, 10%-ը՝ գործարքները եվրոդոլարներով, 10%-ը՝ առևտրային վճարներն են⁷²:

Ամերիկյան բանկերի հիմնական վճարահաշվարկային ծառայությունները ներկայացված են աղյուսակ 2.1-ում:

Այնպես, ինչպես Եվրոպական բանկերը, ԱՄՆ բանկերը նույնպես մեծ ուշադրություն են դարձնում հաշվարկային համակարգերում ռիսկերի նվազեցմանը: Այդ ռիսկերի հեջավորման կարևոր գործիքներից է օվերդրաֆտի գծով մեկօրյա վարկը, որն իրականացվում է ամերիկյան միջբանկային շուկայում՝ սկսած 1994թ.-ից: Արդյունքում ամերիկյան բանկերի կողմից տրամադրվող օվերդրաֆտի գծով մեկօրյա վարկը բացառեց «դոմինոյի արդյունքի» առաջացման հնարավորությունը վճարային համակարգի մասնակիցներից մեկի ֆինանսական անկարողության պայմաններում:

Միջազգային վարկային շուկային բանկի ինտեգրման ընթացքում մեծ նշանակություն ունի հաճախորդի արտաքին առևտրային պայմանագրերի սպասարկման գծով միջազգային վճարահաշվարկային բանկային ծառայությունների խումբը՝ կանխավճարների իրականացումը, բեռնումից հետո վճարումը, բաց հաշվով առևտուրը, ակրեդիտիվների բացումն ու հաստատումը, ինկասոյի գծով ծառայությունները:

Միջազգային հաշվարկներում յուրաքանչյուր երկրի բանկ ձևավորել է որոշակի ավանդույթներ: Այսպես, անգլիական բանկերի և ԵՄ երկրների բանկերի միջև առևտուրն իրականացվում է հիմնականում բաց հաշվով, իսկ Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հետ առևտրում անգլիական բանկերը նախընտրում են օգտագործել փաստաթղթային ակրեդիտիվներ ու փաստաթղթային ինկասո⁷³ :

Աղյուսակ 2.1

⁷² http://www.federalreserve.gov/paymentsystems/pfs_about.htm

⁷³ Миловидов В, Д., Современное банковское дело. Опыт организации и функционирования США, М.: МГУ, 1992, с. 25.

Ամերիկյան բանկերի հիմնական վճարահաշվարկային ծառայությունները⁷⁴

Վճարահաշվարկային ծառայությունների տեսակները	Վճարահաշվարկային ծառայություններ
1	2
Հաշիվները վարելու հետ կապված ծառայություններ	1. Դոլարով և թղթակից-բանկերի այլ արտարժույթով հաշիվների բացում ու վարում ԱՄՆ-ի տարածքում: 2. Դոլարով և այլ տարադրամով կորպորատիվ հաճախորդների ու մասնավոր ներդրողների հաշիվների բացում ու վարում: 3. Դոլարով և այլ տարադրամով դեպոզիտային հաշիվների բացում և վարում: 4. Նոստրո հաշիվների բացում ու վարում միջազգային բանկերում:
Ծառայություններ դրամական միջոցներ փոխանցելու գծով	1. Դոլարով և այլ արտարժույթով վճարների իրականացում՝ ՍՎԻՖՏ համակարգի, փոստային փոխանցումների, հեռագրի օգտագործմամբ կամ թղթակից-բանկերի վրա դուրս գրված բանկային տրատների օգնությամբ: 2. Հաճախորդներին մատուցվող ծառայություններ՝ կանխիկով չեկերի վճարման գծով:
Ծառայություններ ներբանկային վճարներումների իրականացման գծով	1. Հաճախորդների ու թղթակից-բանկերի հաշիվների վրա վարկային մուտքերի մշակում և հաշվարկում: 2. Դոլարով և տեղական բանկերի վրա դուրս գրված այլ արտարժույթով չեկերի ինկասավորում: 3. Քլիրինգային փոխհաշվարկների իրականացում: 4. Աշխատանքային օրվա վերջի դրությամբ ՍՎԻՖՏ ՄՏ 950 ֆորմատով հաշվարկով քաղվածքի ստացում: 5. Աշխատանքային օրվա ավարտի դրությամբ ՍՎԻՖՏ ՄՏ 940 ֆորմատով կանխիկ դրամի քաղվածքի դուրս գրում: 6. Հաշվի վիճակի մասին տեղեկատվություն ստանալու գծով ծառայություն: 7. 24 ժամվա ընթացքում հեռախոսով բանկային փոխանցումներ կատարելու հնարավորություն: 8. Հաշիվների մնացորդները ԱՄՆ-ի բարձր իրացվելի պետական արժեթղթերում ներդրում կատարելու հնարավորություն:
Արտաքին առևտրի պայմանագրերի հետ կապված վճարահաշվարկային ծառայություններ	1. Վճարների իրականացում՝ նպատակ ունենալով իրականացնել կանխավճարներ, վճարներ բեռնումից հետո, առևտուր բաց հաշվով: 2. Ակրեդիտիվ: 3. Ինկասո:

Միջազգային հաշվարկներով բանկային ծառայությունների տրամադրման ժամանակ կարևոր նշանակություն ունի այն գործիքը, որի միջոցով իրականացվում է վճարը, այսինքն՝ հաշվարկների մեթոդը:

⁷⁴Կազմված է մեր կողմից ԱՄՆ առաջատար բանկերի ինտերնետային կայքերի ուսումնասիրությունների հիման վրա:

Հաշվի առնելով թղթակցային հարաբերությունների կարևորությունը, բանկերն իրենց քաղաքականությունն են մշակում այլ բանկերի նկատմամբ՝ սահմանելով թղթակից-բանկերի ցանցի ստեղծումը արտաքին տնտեսական գործունեության սպասարկման և հաճախորդների գործունեության աշխարհագրության ընդլայնման համար: Բոլոր խոշոր օտարերկրյա բանկերում գոյություն ունի հատուկ ստորաբաժանում՝ թղթակցային հարաբերությունների բաժին, որի միջոցով բանկը կառավարում է թղթակցային հաշիվների, միջազգային հարաբերությունների համակարգը, վերլուծում է օտարերկրյա բանկերի ֆինանսական վիճակը և կոնկրետ երկրների մակրոտնտեսական դրությունը: Թղթակցային հարաբերությունների ոլորտում բանկի ռազմավարությունն ու քաղաքականությունը սահմանում է գլխավոր գրասենյակը. այն ներդնում է նոր արդյունքներ ու ծառայություններ, հսկում է գլոբալ վարկային ռիսկերը կոնտրագենտ-բանկերի նկատմամբ, սահմանում է վարկային գծեր երկրների ու տարածաշրջանների համար, որոշումներ է ընդունում մասնաճյուղային ցանցի զարգացման մասին: Տարածաշրջանային ստորաբաժանումները, իրենց հերթին, իրականացնում են տեղական բանկերի թղթակցային հարաբերությունների բաժինների հետ համագործակցություն⁷⁵:

Վերազգային բանկերը հաճախորդներին տրամադրում են հետևյալ ծառայությունները թղթակցային հարաբերությունների ոլորտում.

1. հաշվարկների իրականացում արտասահմանյան գործընկերների հետ թղթակցային հաշիվների ու վերազգային բանկերի մասնաճյուղերի միջոցով,
2. դրամական շուկայի կարճաժամկետ գործիքների մեջ հաճախորդների հաշիվներում եղած միջոցների ներդրում,
3. «ավտոմատացված օվերնայթ», այսինքն՝ հաշվարկային հաշվում լիմիտն անցած մնացորդների ավտոմատացված տեղադրում եկամտաբեր ֆինանսական գործիքներում,
4. հաճախորդների արտաքին առևտրային գործարքների իրականացման ժամանակ ռիսկերի վերլուծություն և կառավարում:

Ժամանակակից ֆինանսական համակարգի կոշտության պայմաններում բարձր պահանջներ են առաջ քաշվում այն բանկերի նկատմամբ, որոնք հաճախորդների միջազգային բիզնեսի սպասարկման ժամանակ կառավարում են տարբեր ռիսկերը: Տվյալ

⁷⁵World Economic Outlook Database.Washington, DC:IMF, 2009.

գործունեությունն առանձնանում է միջազգային բանկային ծառայությունների առանձին տեսակի մեջ:

Ռիսկերի կառավարման գծով բանկերի միջազգային ծառայությունները ենթադրում են առանձին երկրների, տարածաշրջանների, առևտրային բանկերի, ֆինանսական ինստիտուտների համար ռիսկերի լիմիտների սահմանում և դրանց կառավարում, բանկի կողմից արտարժույթային, վարկային, վճարային, քաղաքական և այլ ռիսկերի ընդունում կապված հաճախորդների արտաքին տնտեսական գործարքների հետ (հաստատելով ակրեդիտիվներ ու երաշխիքներ, ակցեպտավորելով տրատտաներ, տրամադրելով հանդիպակաց երաշխիքներ), բանկի ռիսկերի ու հաճախորդների ապահովագրություն՝ կապված արտաքին տնտեսական գործարքների հետ⁷⁶:

Ռիսկերի հեջավորման գծով բանկերի առավել տարածված ծառայություններն են՝

1. օտարերկրյա կազմակերպության հետ պայմանագրի կնքման փուլում խորհրդակցություններ, որոնք ուղղված են օպտիմալ պայմանների և հաշվարկների ձևերի ձեռքբերմանը,
2. հաճախորդի օտարերկրյա գործընկերների ու նրանց բանկերի վերլուծություն՝ արտաքին առևտրային պայմանագրի հետ կապված պարտականությունների կատարման գծով,
3. խորհրդատվություններ արտարժույթային ու տոկոսային ռիսկերի հեջավորման գործիքների (օպցիոնների, ֆյուչերսների) ընտրության գծով,
5. ակրեդիտիվների ու երաշխիքների տրամադրում⁷⁷:

Միջազգային բանկային ծառայությունների շարքում հատուկ տեղ են զբաղեցնում արտաքին առևտրի վարկավորման գծով ծառայությունները, որոնք կախված են միջազգային հաշվարկների միջոցների և ձևերի ընտրությունից, արտաքին առևտրային գործարքի կառուցվածքից, հաճախորդի վարկավորման անհրաժեշտությունից:

Համաշխարհային պրակտիկայում առանձնացնում են հաճախորդների արտահանման-ներմուծման գործարքների վարկավորման գծով հետևյալ բանկային ծառայությունները.

⁷⁶Баканов М, Основы управления кредитными рисками в коммерческом банке//Финансист.-1997, #10, с. 28-35.

⁷⁷Обозинцев А., Орлов В., Управление ресурсами и рыночными рисками коммерческих банков. Организационный аспект//Рынок ценных бумаг., 2002, #1, с. 15-16.

1. հաշվի օվերդրաֆտի տրամադրում,
2. արտահանողի կամ ներմուծողի համար վարկային գծի տրամադրում,
3. արտահանողի կողմից դուրս գրված տրատայի վարկավորում կամ բանկային վարկ՝ «փաստաթղթեր ակցեպտի դիմաց» պայմանով,
4. ինկասային փաստաթղթերի վարկավորում,
5. արտահանողի վարկավորում առաջնակարգ բանկի կողմից դուրս գրված փաստաթղթային ակրեդիտիվի միջոցով,
6. մինչև 3 ամիս ժամկետով կարճաժամկետ վարկերի տրամադրում,
7. 1-ից 5 տարի ժամկետով կապիտալ բարիքների մատակարարման վարկավորում,
8. արտահանողի կողմից դուրս գրված տրատաների ակցեպտավորում,
9. ներմուծողի վարկավորում,
10. ներմուծող բանկի ակրեդիտիվների ու երաշխիքների հաստատում, կոնտրերաշխիքների բացթողում,
11. արտահանողին կամ ներմուծողին վարկավորման համար բանկային սինդիկատի կազմակերպում⁷⁸:

Միջազգային ֆինանսական շուկաների զարգացման և նոր ֆինանսական գործիքների առաջացման հետ մեծանում է միջազգային ներդրումային բանկային ծառայությունների նշանակությունը: Այդ ծառայությունների տրամադրումը վկայում է միջազգային վարկային շուկային բանկի ինտեգրման բարձր մակարդակի մասին, քանի որ ենթադրում է սերտ համագործակցություն դրա բոլոր մասնակիցների հետ: Հիմնական միջազգային ներդրումային բանկային ծառայությունների շարքին են դասվում.

1. ներդրումների ներգրավման հետ կապված բանկերի ծառայությունները,
2. կորպորատիվ ֆինանսների ոլորտում բանկերի ծառայությունները,
3. ֆինանսական ակտիվների կառավարման հետ կապված բանկերի ծառայությունները⁷⁹:

Միջազգային վարկային շուկայի հիմնական գործառույթներից է ֆինանսական ռեսուրսների արդյունավետ վերաբաշխումը: Այդ շուկային ինտեգրված առաջատար օտարերկրյա բանկերը այդ գործառույթի անմիջական կատարողներն են, ինչն

⁷⁸Гиляровская Л. Т., Паневина С. К., Комплексный анализ финансово-экономических результатов деятельности банка и его финансов. СПб.: Питер, 2003, с. 59.

⁷⁹Верников А. В., Иностранные банки и качество корпоративного управления//Деньги и кредит., Сентябрь, 2004, с. 11-16.

արտահայտվում է ներդրումների ներգրավման գծով միջազգային ծառայությունների տրամադրման մեջ: Ներդրումների ներգրավման գծով հիմնական միջազգային բանկային ծառայությունների թվին են պատկանում՝ եվրապարտատոմսերի թողարկման հետ կապված ծառայությունները, սինդիկացված վարկավորման ծառայությունները, արժեթղթավորման վրա հիմնված ներդրումների ներգրավման գծով ծառայությունները⁸⁰:

Ներկայումս եվրապարտատոմսերի շուկան դինամիկ կերպով զարգացող համաշխարհային ֆինանսական շուկա է, իսկ եվրոպարտատոմսերի բացթողումն ու այդ շուկայում դրանց տեղադրումը՝ արտասահմանից վարկային կապիտալի ներգրավման հիմնական միջոցներից մեկը: Ընդհանուր առմամբ, առանձնացվում է եվրոպարտատոմսերի թողարկման մի քանի փուլ⁸¹:

1. նախնական փուլ.

1. հաճախորդի ֆինանսական վիճակի ու փոխառության նկատմամբ պահանջարկի վերլուծություն,
2. փոխառության տեսակների հետ կապված հանձնարարականների նախապատրաստում,
3. միջազգային աուդիտի անցկացում և միջազգային վարկային վարկանիշի ստացում,
4. թողարկվող արժեթղթերի քանակական բնութագրիչների սահմանում (թողարկման ընթացակարգի սահմանում, արժեթղթերի մարման ժամկետների սահմանում):

2. ծրագրի ձևավորման փուլ.

1. առաջատար ներդրումային բանկերի շարքում արժեթղթերի թողարկման տենդերի նախապատրաստում և անցկացում,
2. ներդրումային բանկի ստուգողական ճանաչողական առաքելության իրականացում,
3. գրավի մասին որոշման կայացում,
4. էմիտենտ-ընկերության մասին տեղեկատվական հիշատակարանի նախապատրաստում, որը ներառում է բորսայական ստանդարտներին համապատասխան հետևյալ բաժինները՝ ծրագրի պայմանները, արժեթղթերի թողարկման նպատակները, էմիտենտի ֆինանսական վիճակը, պարտատոմսերի շրջանառության պայմանները,
5. եվրապարտատոմսերի թողարկման ծրագրի իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ու տեղեկատվական նյութերի նախապատրաստում:

⁸⁰ Логовинский Е., Еврооблигации: международная практика выпуска // Рынок ценных бумаг, 2001, #21.

⁸¹ Лазин А., Организация выпуска еврооблигаций: мировой опыт и российская специфика, Рынок ценных бумаг, 23/2004, с. 2.

3. Էմիսիայի և ուղեկցման փուլ.

1. փոխառության թողարկում և տեղաբաշխում,
2. փոխառության հետ կապված գործարքների անցկացում:

Ծրագրի կազմակերպման մոտավոր ժամկետը տատանվում է 4-6 ամիս սահմաններում և ենթադրում է որոշակի ծախսեր, որոնք փոխառուն կրում է իր պարտքային պարտավորությունների թողարկման ու տեղաբաշխման ժամանակ: Ծախսերի մեծությունը կախված է թողարկողի վարկանիշից ու տատանվում է տեղաբաշխվող արժեթղթերի արժեքի 0,2-ից մինչև 2,5%⁸²:

Եվրապարտատոմսերի թողարկումը սպասարկվում է ներդրումային բանկային ծառայությունների համալիրով, որոնցից են՝ պարտատոմսերի թողարկումը և դրանց պահպանումը: Ներդրումային բանկային ծառայությունների շուկայում եվրապարտատոմսերի թողարկման հետ կապված խոշորագույն օպերատորներ են հանդիսանում այնպիսի բանկեր, ինչպիսիք են՝ «Goldman Sachs», «J.P.Morgan», «SBC Warburg Dillon Read», «Credit Suisse First Boston», «Nomura Securities», «Morgan Stanley», «Salomon Brothers», «ABNARMO Bank» և այլն:

Ներդրումային բանկերի կողմից տրամադրվող առավել տարածված ներդրումային ծառայությունների շարքին են դասվում⁸³.

1. բանկի՝ իբրև հարկային գործակալի ծառայությունները (ներկայացնում է էմիտենտի և պարտատոմսերը գնողների շահերը՝ հարկադրույքների բարելավման և եվրոպարտատոմսերի պորտֆելի կառավարման համար),
2. բանկի՝ իբրև էմիտենտի կողմից նշանակվող և Լոնդոնի ֆոնդային բորսայում թողարկման գրանցման համար պատասխանատու գնանշող գործակալի ծառայությունները,
3. բանկի՝ իբրև վճարող գործակալի ծառայությունները, որը նշանակվում է էմիտենտի կողմից ու պատասխանատու է ներդրողներին պարտատոմսերի գումարի կուտակման ու մարման գրաֆիկին համապատասխան վճարման համար,
4. դեպոզիտար-բանկի ծառայությունները (գրառվում է պահառության գործարքներով),
5. իրավաբանական խորհրդատուի խորհրդատվական ծառայությունները, որը նշանակվում է էմիտենտի ու լիդ-մենեջերի համատեղ որոշմամբ:

⁸²Михайлов Д. М., Международные расчеты и гарантии. М.:ФКБ-ПРЕСС, 1998, с. 139.

⁸³Шапран Н. С., Еврооблигации: технология выпуска и обращения, Инвестиционный банкинг 2006, 6, с. 2.

Բացի եվրապարտատոմսերի տեղաբաշխումից՝ օտարերկրյա բանկերն առաջարկում են առևտրային թղթերի և ֆոնդավորման այլ ժամանակակից գործիքների տեղաբաշխման գծով ծառայություններ:

Եվրապարտատոմսերի թողարկման կազմակերպման մասշտաբայնությունն ու բարդությունը պահանջում է այդպիսի ծառայություն տրամադրող բանկից սերտ համագործակցություն միջազգային վարկային շուկայի բազմաթիվ մասնակիցների հետ: Բանկերը տնտեսական հարաբերությունների մեջ են մտնում այլ բանկերի հետ՝ սինդիկատի կազմակերպման, տեղաբաշխման հետ կապված գործակալի նշանակման հարցերով, ինչպես նաև աուդիտորական և վարկանշային ընկերությունների հետ՝ միջազգային աուդիտի անցկացման և միջազգային վարկային վարկանիշի ստացման հարցերով, ներդրողների հետ՝ փոխառուների մասին տեղեկատվություն տրամադրելու հարցերով, ֆոնդային բորսաների հետ՝ արժեթղթերի լիսթինգի ու բացթողման հարցերով:

Ներդրումների ներգրավման հետ կապված կարևորագույն միջազգային բանկային ծառայություն է սինդիկացված վարկավորման գծով ծառայությունը: Սինդիկացված փոխառությունը (Syndicated Loan⁸⁴) տրամադրվում է վերազգային բանկերի սինդիկատի կողմից: Սինդիկացված եվրովարկն ունի մի շարք առավելություններ ավանդական վարկի հետ համեմատ, որն այն գրավիչ է դարձնում ինչպես վարկատուների, այնպես էլ փոխառուների համար: Սինդիկացված վարկի հիմնական առավելություններն են՝ ցածր արժեքը սովորական վարկերի հետ համեմատ, կարճ ժամկետներում զգալի գումարների ներգրավման հնարավորությունները: Միջազգային սինդիկացված վարկերը առևտրային բանկերին հնարավորություն են տալիս կատարել ռիսկերի դիվերսիֆիկացիա տարբեր շուկաներում տարբեր արժույթներով ակտիվների տեղաբաշխման հաշվին: Սինդիկացված վարկավորման գծով բանկային ծառայություններն են՝

1. վարկատուների ակումբի կազմակերպումը,

2. ֆոնդավորման նախապատրաստումը,

3. մասնակիցների միջև այնպիսի դերերի բաշխումը, ինչպիսիք են՝ փաստաթղթերի վարումը, վճարային գործակալի գործառույթների կատարումը, ստորագրման արարողակարգի նախապատրաստումը, զանգվածային լրատվամիջոցների հետ փոխգոր-

⁸⁴ http://en.wikipedia.org/wiki/Syndicated_loan

ծակցությունը, վարկավորման ռազմավարության համաձայնեցումը փոխառուի հետ,

4. սինդիկատը կառավարող անձնակազմի ձևավորումը,

5. վարկային համաձայնության նախապատրաստումը,

6. տեղեկատվական մատյանի նախապատրաստումն ու դրա տրամադրումը սինդիկատի պոտենցիալ մասնակիցներին⁸⁵:

Սինդիկացված վարկի տրամադրման ժամանակ բանկերը այլ բանկերի հետ մտնում են տնտեսական հարաբերությունների մեջ հիմնականում սինդիկատի կազմակերպման և սինդիկատի մասնակից բանկերի միջև գործառույթների բաշխման հարցերով:

Այսպիսով, սինդիկացված վարկը երկու կամ ավելի բանկերի, վարկային կազմակերպությունների տրամադրած մեկ միասնական վարկն է, որը սովորաբար տրվում է լողացող տոկոսադրույքով (հիմնված LIBOR տոկոսադրույքի վրա և ճշգրտված յուրաքանչյուր երեք կամ վեց ամիսը մեկ), ամրագրված ժամկետով և մարման սահմանված ժամանակացույցով:

Ներկայումս սինդիկացված վարկերը տրվում են որոշակի ոլորտների մասնագիտացված կազմակերպություններին, հիմնականում՝ էներգետիկայի, տրանսպորտի, բարձր տեխնոլոգիաների, շինարարության, ինքնաթիռաշինության նախագծերի, ձեռնարկությունների հիմնական միջոցների արդիականացման, արտահանմանն ուղղված գործունեության տեսակների, տարածաշրջանային նախագծերի ֆինանսավորման համար⁸⁶:


Ըստ որոշ գնահատականների՝ փոխատվական կապիտալի համաշխարհային շուկայում նախագծային ֆինանսավորման մասնաբաժինը կազմում է 20%, ընդ որում՝ նախագծային ֆինանսավորման համար անհրաժեշտ ներդրումային ռեսուրսների ներգրավման գործում գերիշխող դիրք ունեն զարգացող երկրները:

Սինդիկացված վարկավորման ծավալների անընդհատ աճի մասին է խոսում այն, որ ամբողջ աշխարհում սինդիկացված վարկավորման ծավալը 2015 թ. կազմել է 4,7 տրիլ ԱՄՆ դոլար՝ 2014 թ. համեմատ աճելով 3,1%-ով, իսկ գործարքների թիվը կազմել է 10561՝ նախորդ տարվա համեմատ մնալով գրեթե նույնը (2014 թ. կազմել է՝ 10500): Հատկանշական է, որ այս վարկերի առավելագույն մասնաբաժինը՝ մոտ 56%-ը, պատկանում է ամերիկյան աշխարհամասին, Եվրոպայում և Ասիայում տեղաբաշխված է սինդիկացված վարկերի

⁸⁵Бояренков А.В. , Зарубежный опыт синдицированного кредитования и его применение в России// Финансы и кредит. 2004, №1(139), с. 28-32.

⁸⁶Ղազակյան Վ., Սինդիկացված վարկավորումը և դրա հետևանքները ՀՀ բանկային համակարգում: «Հայաստան. Ֆինանսներ և էկոնոմիկա», N 1(78), 2007, էջ 179:

համապատասխանաբար 23.5%-ը և 16.9%-ը, իսկ Միջին Արևելքում և Աֆրիկայում սինդիկացված վարկավորման ծավալը դեռևս կազմում է փոքր տեսակարար կշիռ՝ համապատասխանաբար 2.5% և 0.9% (տե՛ս, գծապատկեր 2.1-ը):



Գծապատկեր 2.1. Սինդիկացված վարկավորման ծավալը՝ ըստ տարածաշրջանների 2015 թ. (տրլն ԱՄՆ դոլար)⁸⁷

Ինչ վերաբերում է սինդիկացված վարկավորման ոլորտում միջազգային խոշորագույն ֆինանսավորողներին, ապա 2015 թ. 2.9 տրլն ԱՄՆ դոլարը կամ մոտ 67%-ը բաժին է ընկել թվով 25 ֆինանսավարկային կազմակերպությունների, որոնց թվում են այնպիսի ֆինանսաբանկային հաստատություններ, ինչպիսիք են՝ «Citi»-ն (ԱՄՆ), «Bank of America»-ն «Merill Lynch»-ը (ԱՄՆ), «JP Morgan»-ը (ԱՄՆ) և այլն (տե՛ս աղյուսակ 2.2.):

Կախված ֆինանսական հոսքերի աղբյուրներից՝ զարգացող երկրները բաժանվում են 2 խմբի: Առաջին խմբի մեջ են մտնում տնտեսական զարգացման ցածր տեմպ ունեցող երկրները, որոնք արտաքին ռեսուրսներ են հայթայթում առավելապես պաշտոնական աղբյուրներից, իսկ մասնավոր ռեսուրսները վերջիններիս պակաս հասանելի են շուկայական խիստ պայմանների պատճառով:

Երկրորդ խմբի մեջ են մտնում համեմատաբար զարգացած երկրները, որոնք արտաքին ֆինանսական միջոցներ են ստանում հիմնականում մասնավոր աղբյուրներից և միայն ծայրահեղ դեպքում են դիմում պաշտոնական աղբյուրների օգնությանը:

⁸⁷ Global Syndicated Loans Review: Managing Underwriters, Full Year 2014. Thomson Reuters, p. 2.

**2014 թ. աշխարհի 25 խոշորագույն ֆինանսաբանկային կազմակերպությունները
ըստ սինդիկացված վարկավորման ծավալների⁸⁸**

N	Ֆինանսավորող կազմակերպության անվանումը	Ֆինանսավորման ծավալը	Տես. կշիռը	Ֆինանսավորած գործարքների քանակը
1	Bank of America Merrill Lynch	320,552.5	6.8%	1689
2	JP Morgan	316,601.5	6.8%	1510
3	Citi	224,092.5	4.8%	917
4	Mitsubishi UFJ Financial Group	199,105.5	4.2%	1508
5	Wells Fargo & Co	193,633.7	4.1%	1289
6	Barclays	163,397.7	3.5%	793
7	HSBC Holdings PLC	149,400.9	3.2%	1072
8	Deutsche Bank	146,616.2	3.1%	734
9	BNP Paribas SA	134,409.0	2.9%	877
10	Mizuho Financial Group	129,959.5	2.8%	931
11	RBS	129,655.9	2.8%	818
12	Sumitomo Mitsui Finl Grp Inc	115,909.9	2.5%	1035
13	RBC Capital Markets	102,071.1	2.2%	560
14	Credit Suisse	95,328.5	2.0%	465
15	Credit Agricole CIB	78,933.2	1.7%	559
16	Goldman Sachs & Co	77,429.7	1.7%	384
17	Morgan Stanley	76,873.0	1.6%	329
18	US Bancorp	63,072.1	1.3%	538
19	ING	62,975.0	1.3%	537
20	BMO Capital Markets	60,202.3	1.3%	466
21	Societe Generale	60,133.0	1.3%	476
22	Bank of China Ltd	56,335.7	1.2%	299
23	Industrial & Comm Bank China	56,047.1	1.2%	500
24	Scotiabank	55,812.9	1.2%	311
25	TD Securities Inc	49,295.9	1.1%	268
	Ընդամենը 25 խոշորագույն	3,117,844.3	66.6%	
	Ընդամենը	4,690,634.9	100.0%	

Ներդրումների ներգրավման գծով ծառայությունների տրամադրման առավել ժամանակակից ձևերից է արժեթղթավորումը: Արժեթղթավորումը ենթադրում է նոր պարտքային պարտավորությունների թողարկում, որոնք ապահովված են փոխառուի դեբիտորական պարտավորությամբ⁸⁹: Համաշխարհային պրակտիկայում մշակվել են տարբեր տեսակի ակտիվների արժեթղթավորման սխեմաներ փոխառուների որոշակի կատեգորիաների համար (տե՛ս աղյուսակ 2.3-ը):

⁸⁸ Տե՛ս նույն տեղում:

⁸⁹ Рачкевич А. Ю., Алексеева И. А., Секьюритизация: характерные признаки и определения, Деньги и кредит, 8/2008, с. 2-3.

Արժեթղթավորված ակտիվների տեղաբաշխումը տնտեսության ճյուղերում⁹⁰

Տնտեսության ճյուղը	Արժեթղթավորված ակտիվների տեսակները
1	2
Բանկեր	Առևտրային վարկեր, պարտքային գործիքների պորտֆելներ
Կորպորացիաներ	Առևտրային գործունեությունից սպասվելիք մուտքեր, անշարժ գույք
Արտահանման գործակալություններ	Արտահանողներին տված վարկերից սպասվող մուտքեր
Ֆինանսական ընկերություններ	Մուտքեր հաճախորդների վարկային քարտերի հաշիվների գծով, վճարներ փոքր և միջին ձեռնարկություններին տրված ապահովված ու չապահովված վարկերի գծով
Ապահովագրական ընկերություններ	Ապագա ապահովագրական պարգևավճարներ
Տարածաշրջանային վարչություններ	Հարկային և այլ բյուջետային մուտքեր
Նավթային ընկերություններ	Ապագա մուտքեր նավթամթերք ներմուծողներից
Պետություն	Հարկային ու բյուջետային մուտքեր, արտարժույթային մուտքեր արտաքին դեբիտորներից
Հեռահաղորդակցային ընկերություններ	Մուտքեր հեռահեռարձակման համար, վարձավճար սարքավորումների օգտագործման համար և վճար երկարաժամկետ պայմանագրերի համար:

Ներկայումս մեծ տարածում է ստացել առաջնակարգ ընկերությունների նախագծերի ֆինանսավորման գծով ծառայությունը՝ այդ ընկերություններին բանկային վարկի արժեթղթավորման միջոցով: Այս ծառայությունը դասական սինդիկատիկացված վարկավորման այլընտրանքն է ու կրում է «CLO նախագիծ» անվանումը (Project CLO – collateralized loan obligation – վարկերով ապահովված պարտատոմսերի թողարկման նախագիծ)⁹¹:

CLO նախագծի էությունը կայանում է նրանում, որ բանկը, որը տրամադրել է վարկեր նախագծերի ֆինանսավորման համար, գիշում է նախագծերով պարտքային պարտավորությունները (որը, որպես կանոն, ներառում է 35-40 նախագծերի պարտքեր) հատուկ նպատակային հիմնադրամին (SPV – special purpose vehicle): Հիմնադրամը թողարկում է բանկի վարկերով ապահովված արժեթղթեր (CLO) և վաճառում է դրանք ներդրողներին, ընդ որում՝ նախապես ստուգելով ու գնահատելով վարկերի որակը, այդ թվում՝ նաև հաշվի առնելով վարկանիշային գործակալությունների գնահատականները: «Standard & Poor's» գործակալությունը մշակել է նման հիմնադրամների գնահատման հստակ մեթոդաբանություն, որը ներառում է հիմնադրամի հենքային ակտիվների ցանկի կազմումը, չվճարման կամ վարկի ոչ ժամանակին մարման ռիսկի վերլուծությունը,

⁹⁰ Яблонская О., Секьюритизация активов как финансовая инновация в коммерческих банках // Вестник НАУФОР, 2003/6, с. 43.

⁹¹ http://www.securitization.net/pdf/fmg_clo_100102.pdf

յուրաքանչյուր նախագծի գծով ֆինանսական հոսքերի կանխատեսումների կազմումը:

CLO շուկայի նման արագ զարգացումը բացատրվում է նրանով, որ այդ մեխանիզմը ստեղծում է էական շահեր ներդրողների համար, որոնցից են՝

1. գործարքների թափանցիկությունը: Յուրաքանչյուր արժեթուղթ թողարկվում է 35-40 պարտքային պարտավորությունների հիման վրա, որոնք կապված են տարբեր նախագծերի հետ,
2. ներդրումների դիվերսիֆիկացիան: Քանի որ CLO-ները թողարկվում են դիվերսիֆիկացված պարտքային պարտավորությունների հիման վրա, դրանք նվազեցնում են ռիսկը⁹²:

Փոխառուի համար CLO նախագիծը նույնպես բավականաչափ շահավետ է, քանի որ թույլ է տալիս մուտք գործել կապիտալի շուկաներ շատ ավելի հեշտ ու արդյունավետ: Բացի այդ, այն վարկ է ստանում ավելի շահավետ պայմաններով, քան միակ նախագծի ֆինանսավորման դեպքում:

CLO նախագիծը մեծ ոգևորությամբ ընդունվեց ֆինանսական գործիչների կողմից: Նման համագործակցությունը թույլ տվեց ստեղծել հիմնադրամներ մեծ մասշտաբի CLO-ի թողարկման համար: 2012 թ. դրությամբ իրացվել է 5270 մլն. դոլարի CLO-ի նախագիծ (տե՛ս աղյուսակ 2.4-ը):

Այսպիսով, արժեթղթավորման գծով միջազգային բանկային ծառայությունների տրամադրումը ենթադրում է տնտեսական հարաբերությունների մեջ մտնել այլ բանկերի հետ՝ կապված համատեղ ֆոնդերի ստեղծման և հաշվարկների իրականացման հետ, ներդրումային հիմնադրամների հետ՝ պարտքի զիջման և պարտատոմսերի թողարկման հարցերի հետ կապված, վարկանիշային գործակալությունների հետ՝ կապված պարտքային պարտավորությունները վարկանշելու հետ, ներդրողների հետ՝ կապված պարտքային պարտավորությունների տեղաբաշխման և դրանց հետագա մարման հետ:

Աղյուսակ 2.4

⁹²Prased E., Rogoff K., Wei S. and Kose A., The Effects of Financial Globalization on Developing Countries: Some Empirical Evidence, International Monetary Fund Occasional Paper 220, 2003, pp.22-23.

2012 թ. դրությամբ CLO նախագծեր իրացնող բանկեր⁹³

Բանկեր	Գումար, մլն. դոլ.	% ընդամենը
1	2	3
1. CFSB	2695	51,1
2. Bank of America Merrill Lynch	561	10,6
3. Deutsche Bank	488	9,2
4. BNP Paribas	444	8,4
5. Goldman Sachs	271	5,1
6. H. P. Morgan Chase	172	3,2
7. Barclays	133	2,5
8. ABN-Amro Rothschild	99	1,8
9. Europarthners	84	1,5
10. Credit Agricole Indosuez	83	1,5
11. DGBank	83	1,5
12. IntesaBci SpA	81	1,5
13. Caixa d'Estavis de Catalunya	76	1,4
Ընդամենը	5270	100,0


2013 թ. ընթացքում նախագծային ֆինանսավորման համաշխարհային ծավալը կազմել է 204.1 մլրդ ԱՄՆ դոլար, որը նախորդ 2012 թ. տարվա համեմատ աճել է 3.4%-ով⁹⁴: Սակայն, պետք է նշել, որ նախագծային ֆինանսավորման նկատմամբ պահանջարկը մեծանում է հատկապես զարգացող երկրներում: Ըստ կանխատեսումների՝ մինչև 2030 թ.-ը միայն ՏՀԶԿ երկրներում ճանապարհաշինարարության, էներգետիկայի, ջրամատակարարման, օդանավակայանների, երկաթուղիների և հեռահաղորդակցության ոլորտներում իրականացվելիք նախագծային ֆինանսավորման համար կպահանջվի տարեկան ավելի քան 500 մլրդ ԱՄՆ դոլար⁹⁵:

2014 թ.-ի առաջին 9 ամիսների ընթացքում համաշխարհային տնտեսության մեջ իրականացված նախագծային ֆինանսավորման հիմնական մասն ուղղվել է էներգետիկայի (29%), նավթի ու գազի արդյունահանման (21%) և տրանսպորտի (21%) ոլորտներ (տե՛ս գծապատկեր 2.2-ը):

⁹³ Կազմված է ազգային կենտրոնական բանկերի տվյալների հիման վրա:

⁹⁴ Raffaele Della Croce, Stefano Gatti, “Financing infrastructure – International trends.” OECD Journal: Financial Market Trends, Volume 2014/1, OECD, 2014, p. 129.

⁹⁵ Edoardo Reviglio, “Global perspectives for project financing”. Joint EC-EIB/EPEC Private Sector Forum/Financing Future Infrastructure: EU 2020 and Long Term Financing, regulatory aspects. Bruxelles, 6 June 2012, p. 6.



Գծապատկեր 2.2. Նախագծային ֆինանսավորման համաշխարհային ծավալները 2014 թ.-ի հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում՝ ըստ ոլորտների⁹⁶

Առաջատար օտարերկրյա բանկերի գործունեության կարևոր ոլորտ են դարձել կորպորատիվ ֆինանսների ոլորտում իրականացվող ծառայությունները: Այդ ոլորտում միջազգային բանկային ծառայություններն ուղղված են ժամանակակից վերազգային ընկերությունների գործունեության մի շարք ուղղությունների գծով ֆինանսական խորհրդատվության պահանջների բավարարմանը: Կորպորատիվ ֆինանսների ոլորտում միջազգային բանկային ծառայություններն են՝ ֆինանսական խորհրդատվությունը, միաձուլումների և կլանումների կազմակերպումը, սեփականաշնորհումը, բաժնետոմսերի թողարկումը, պարտավորության վերակառուցումը, ռազմավարական գործընկերոջ որոնումը, համատեղ ձեռնարկությունների ստեղծումը⁹⁷:

Ֆինանսական խորհրդատվությունը կորպորատիվ ֆինանսների ոլորտում բոլոր բանկային ծառայությունների հիմքն է և ներառում է հետևյալ ծառայությունները՝ ընկերության համալիր ստուգման իրականացում, ֆինանսական մոդելավորում, ներդրումային գրավչության գնահատում, ընկերության բիզնես-ծրագրի կազմում, ներդրողների և գործարքի մասնակիցների համար տեղեկատվական մատյանի նախապատրաստում, պոտենցիալ ներդրողների ընտրություն, բանակցությունների անցկացում:

⁹⁶ Global Project Finance Review: Managing Underwriters, First Nine Months 2014. Thomson Reuters, p. 2.

⁹⁷ Сарчев А. М., Ведущие коммерческие банки в мировой экономике. М.: Финансы и статистика, 1992, с. 55.

Կորպորացիայի հիմնադրական կապիտալի մեծացման նպատակով բաժնետոմսերի տեղաբաշխման գծով բանկային ծառայությունները, որոնք ձևավորվում են միաձուլումների ու կլանումների ճանապարհով, էլ ավելի բարդ ու բազմափուլ գործընթաց են ենթադրում, ինչը տևում է ավելի քան 40 շաբաթ և ներառում է⁹⁸.

- պոտենցիալ ներդրողի կամ թիրախային ընկերության որոնում, փաստաթղթերի պատրաստում (տեղեկատվական նախնական հուշագիր, տեղեկատվական հուշագիր),
- գործարքի ռազմավարության մշակում, բանակցությունների և գործընթացի կառավարում,
- աջակցություն ֆինանսական և իրավաբանական ստուգումների կազմակերպման, հաշվետվությունների կազմման և ներկայացման գործընթացներում,
- գործարար ծրագրի մշակում, ֆինանսական մոդելավորում և զգայունության վերլուծություն,
- բիզնեսի արժեքի և սիներգետիկ արդյունքի գնահատման հաշվետվությունների կազմում,
- աջակցություն գործարքի իրականացման գործում. ներառյալ՝ վարկի ստացման և փոխառու միջոցներով ֆինանսավորման հետ կապված հարցերում, գործարքի հետ կապված վճարումների, սեփականատիրական կառուցվածքի փոփոխության, ընկերությունների և իրավունքների գրանցման/վերագրանցման հետ կապված հարցերում, ինչպես նաև պետական մարմինների կողմից հակամենաշնորհային թույլտվությունների ստացման հետ կապված հարցերում,
- իրավաբանական փաստաթղթերի պատրաստում (մտադրությունների մասին նամակ, գաղտնիության համաձայնագիր, նախնական պայմանների վերաբերյալ համաձայնագիր, բաժնետոմսերի առուվաճառքի պայմանագիր, բաժնետերերի միջև համաձայնագիր) և աջակցություն բանակցային գործընթացում,
- հետգործարքային ուսումնասիրություններ և վերլուծություն:

Տրամադրելով կորպորատիվ ֆինանսների ոլորտում միջազգային բանկային ծառայություններ՝ բանկերը տնտեսական հարաբերությունների մեջ են մտնում նոր բաժնետոմսերի գնման հարցերով ներդրողների հետ, բորսաների հետ՝ հաճախորդի բաժնետոմսերը

⁹⁸Иванов А. Н., Банковское обслуживание корпоративных клиентов в области внешнеэкономической деятельности//Деньги и кредит, М., 1999, #10, с. 102.

տեղակայման և բորսայում հետագա գնահատման կազմակերպման հարցերով, այլ բան-
կերի հետ՝ սինդիկատի կազմակերպման հարցերով, ռազմավարական գործընկերոջ ընտ-
րության և հաճախորդի համար տարբեր տեսակի տեղեկատվության ստացման հարցերով
տեղեկատվական գործակալությունների հետ և ֆիրմաների հետ, որոնց հետ բանկի հաճա-
խորդները կկարողանային ստեղծել համատեղ ձեռնարկություն, իրականացնել միաձու-
լումներ և կլանումներ:

Միջազգային ֆոնդային շուկաների զարգացման հետ մեկտեղ մեծ հեղինակություն են
ստացել հաճախորդների ակտիվների կառավարման գծով բանկերի ծառայությունները:
Ակտիվների կառավարման գծով միջազգային բանկային ծառայություններն իրենցից
ներկայացնում են միջազգային շուկայում բաժնետոմսերի ու պարտատոմսերի ներդրու-
մային պորտֆելի ձևավորման գծով ծառայությունները:

Հաճախորդների պորտֆելի ձևավորման գծով հիմնական ծառայությունը բաղկացած
է հաջորդական փուլերից, որը ներառում է՝

1. տարածաշրջանի միկրոտնտեսական հետազոտությունները, շուկաների
վերլուծությունը,
2. ըստ տարածաշրջանների ներդրումային պորտֆելի կառուցման քաղաքականության
ձևավորումը (երկրների վարկանշային գնահատում և ներդրումային գործիքների
ընտրություն),
3. ըստ երկրների պոտենցիալ ներդրումային պորտֆելի բաշխումը՝ ելնելով հետևյալ
չափանիշներից. վերլուծվող երկրների մակրոտնտեսական ցուցանիշների գնահատում,
դրանց բյուջեի եկամտային մասի ցուցանիշների համեմատում, իրացվելիության և
ֆոնդային շուկաներում աշխատանքի մատչելիության գնահատում, ռիսկերի գնահատում,
4. ըստ երկրների պորտֆելի դիվերսիֆիկացիայի վերանայում և ըստ յուրաքանչյուր
տարածաշրջանի ներդրումային գործիքների ընտրության ռազմավարության ձևավորում,
5. ներդրողի պորտֆելի վերջնական ձևավորում ու կառավարում:

Վերջին ժամանակներում մեծանում է պահանջարկը խոշոր և ունևոր մասնավոր հա-
ճախորդների ակտիվների կառավարման գծով միջազգային բանկային ծառայությունների
նկատմամբ: Դրանց թվին են պատկանում հետևյալ չափանիշներին բավարարող
ֆիզիկական անձինք.

- առնվազն 250 հազ. դոլարին հավասար հսկայական ունեցվածքին տիրելը. երբ նրանց ունեցվածքի արժեքը գերազանցում է 10 մլն դոլարը, իրենք պատկանում են «խոշոր մասնավոր կապիտալով անձանց» թվին (HNWI – High Net Worth Individual).
- իրենց ծագման երկրների ազգային սահմաններից դուրս սեփական ունեցվածքի անձնական կառավարումն ապահովելու ձգտումը:

Այդպիսի հաճախորդներին սպասարկող բանկերը պետք է տրամադրեն որակյալ ծառայությունների ողջ շրջանակը ցանկացած արժույթով, որոնք պետք է լինեն մատչելի աշխարհի ցանկացած տարածաշրջանում: Merrill Lynch-ի և Gemini Consulting-ի գնահատմամբ առաջիկա տարիներին ունևոր հաճախորդների վիճակը կաճի երկնիշ թվով: Հարուստ հաճախորդներին տրամադրվող բանկային ծառայությունների միջազգային շուկան կազմում է 7 տրլն դոլար և մոտակա 5-10 տարիներում այն կմեծանա տարեկան մինչև 10%-ով: Այսօր աշխարհում հաշվում են ավելի քան 6 մլն մարդ, ում ֆինանսական ակտիվները գերազանցում են 1 մլն դոլարը:

VIP հաճախորդների ունեցվածքի ու ակտիվների կառավարումը՝ բանկային գործունեության առավել եկամտաբեր ու պակաս ռիսկային տեսակ է: Ունևոր հաճախորդների կազմում գնալով պակասում է հարուստ ժառանգների բաժինը և մեծանում է ձեռնարկատերերի ու ձեռնարկություններ ղեկավարողների տեսակարար կշիռը, որոնց բաժին է ընկնում այսօր ստեղծվող հարստության մոտ 70%-ը:

VIP հաճախորդների կառավարման գծով միջազգային բանկային ծառայությունների տրամադրման գործընթացը ներառում է երեք փուլ՝

1. հնարավորությունների ուսումնասիրում և բիզնես-պլանի կազմում (շուկաների ռազմավարական վերլուծություն, հաճախորդների, արդյունքների ու ծառայությունների հատվածավորում),
2. հայեցակարգի մշակում (գործառնական վերլուծություն, ռազմավարություն, մարքեթինգ, իրավաբանական ու հարկային կողմերի մանրամասն ուսումնասիրություն, անվտանգության հիմնախնդիրների հետազոտում),
3. նախագծի իրացում (տեղեկատվական համակարգի զարգացման ուղղությունների ու պարամետրերի սահմանում, համակարգի շահագործման կազմակերպում,

ծառայությունների վաճառքի պայմանագրերի ու հիմնական պայմանների մշակում, ապրանքների ու ծառայությունների առաջնական քաղաքականություն)⁹⁹:

Այսպիսով, հաճախորդի ակտիվների կառավարման գծով միջազգային բանկային ծառայությունները ենթադրում են տարբեր տեղեկատվական գործակալությունների, վարկանշային, խորհրդատվական և իրավաբանական ընկերությունների հետ տնտեսական հարաբերությունների զարգացում՝ նպատակ ունենալով ստանալ ժամանակակից լիարժեք ու հուսալի տեղեկատվություն:

Առաջատար օտարերկրյա բանկերի միջազգային բանկային ծառայությունների գծով մեր կողմից կատարված վերլուծությունը ցույց է տալիս, որ որոշ ծառայություններ բանկը կարող է ներկայացնել միջազգային վարկային շուկային ինտեգրման նախնական փուլում, քանի որ դա չի պահանջում այդ շուկայի մասնակիցների հետ բարդ տնտեսական հարաբերությունների կազմակերպում: Ավելի բարդ ծառայություններ, որոնք ենթադրում են բանկի և միջազգային վարկային շուկայի այլ մասնակիցների միջև բազմակողմանի տնտեսական հարաբերությունների առկայությունը, կարող են ներկայացնել միջազգային վարկային շուկային գլոբալ մասնակցություն ունեցող բանկերը: Հետազոտվող հիմնախնդրի շրջանակներում կարելի է խոսել միջազգային վարկային շուկային բանկի ինտեգրման մակարդակների և դրանց հետ կապված տնտեսական հարաբերությունների մասին: Այդ կապակցությամբ, մեր կարծիքով, նպատակահարմար է առանձնացնել միջազգային վարկային շուկային բանկի ինտեգրման չորս մակարդակ՝

1. Սովորական մակարդակ: Ոչ բարդ միջազգային վճարահաշվարկային բանկային ծառայությունների տրամադրում, ինչպիսիք են՝ արտարժույթի առքուվաճառքը, հաճախորդի հանձնարարությամբ անդրսահմանային վճարների իրականացումը և ստացումը, ակրեդիտիվների ավիզավորումը, որոնք դուրս են գրվում սովորական օտարերկրյա բանկերի կողմից և այլ ծառայություններ, որոնք ենթադրում են տնտեսական հարաբերություններ, հիմնականում, միջազգային վարկային շուկայի բանկային հատվածի ներսում:
2. Պարզ մակարդակ: Առաջին մակարդակի ծառայությունների և հաճախորդների արտաքին առևտրային գործարքների ֆինանսավորման գծով ծառայությունների

⁹⁹ Lewellyn D., The Future Business of Banking/Banking World, London, 1995, Vol.13, #LP, pp. 32-34.

տրամադրում, ակրեդիտիվների դուրս գրում, ազգային հաճախորդներին միջազգային ներդրումային բանկային ծառայությունների տրամադրման գծով առաջատար օտարերկրյա բանկերի խոշոր նախագծերում մասնակցություն: Այս մակարդակը ենթադրում է միջազգային վարկային շուկայի բանկային հատվածում ավելի բարդ տնտեսական հարաբերություններ. տնտեսական հարաբերություններ արտահանող գործակալությունների հետ, հաճախորդների օտարերկրյա գործընկերների հետ և այլն:

3. Սկզբնական մակարդակ: Նախորդ մակարդակների ծառայությունների տրամադրում ավելացրած միջազգային ֆինանսական շուկաներում ներդրումների կատարման գծով խորհրդատվական ծառայությունների տրամադրում, միջազգային ներդրումային բանկային ծառայությունների տրամադրման գծով առաջատար օտարերկրյա բանկերի մասնակցություն՝ որպես համամենեջներների՝ անկախ ծառայությունը սպառողի ազգային պատկանելիությունից: Միջազգային վարկային շուկային ինտեգրման տվյալ մակարդակում բանկը տնտեսական հարաբերությունների մեջ է մտնում դրա բազմաթիվ մասնակիցների հետ. հաճախորդի համար ներդրումային նախագծերի կազմակերպման հարցերով՝ բանկերի, տարբեր տեղեկատվական գործակալությունների, բորսաների, ֆինանսական ակտիվներով առևտրի արտաբորսայական մասնակիցների և այլոց հետ:

4. Բարդ մակարդակ: Այս մակարդակում միջազգային բանկային ծառայությունների ողջ շրջանակի տրամադրումն է, որը ենթադրում է միջազգային վարկային շուկայի բազմաթիվ մասնակիցների հետ ամենաբազմազան տնտեսական հարաբերությունների առկայություն:

Ամփոփելով վերոնշյալը՝ կարելի է եզրակացնել, որ միջազգային վարկային շուկային բանկի ինտեգրումը տեղի է ունենում հաճախորդին բանկային ծառայությունների տրամադրման ընթացքում բանկի ու միջազգային վարկային շուկայի մասնակիցների միջև տնտեսական հարաբերությունների առաջացման միջոցով: Այդ կապակցությամբ, մեր կարծիքով, արդիական է դառնում առաջատար օտարերկրյա բանկերի կողմից բանկային ծառայությունների տրամադրման փորձի և բանկային ծառայությունների զարգացման

ընդհանուր միտումների ուսումնասիրությունը:

2.2. ՀՀ բանկային համակարգի զարգացման միտումներն ու հիմնական առանձնահատկությունները

Վարկային շուկայի հասանելիության տեսանկյունից ատենախոսության մեջ կարևորում ենք ՀՀ առևտրային բանկերի գործունեության վերլուծությունը, որն առավել նպատակահարմար է կատարել ՀՀ կենտրոնական բանկի գործունեության վերլուծության համատեքստում:

1991 թ. դեկտեմբերից ՀՀ պետական բանկը սկսեց կատարել նորանկախ Հայաստանի Հանրապետության Ազգային բանկի պարտականությունները: 1993 թ. ընդունվեց «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքը, որով Ազգային բանկը վերանվանվեց ՀՀ կենտրոնական բանկ և որը ղեկավարեց 1986 թվականից պետական բանկը կառավարող Իսահակ Իսահակյանը¹⁰⁰:

Արդյունքում՝ 1990-ական թվականներից մինչև 2000-ական թթ. սկիզբը նշանավորվեցին ՀՀ բանկային համակարգի հիմնադրմամբ ու կարգավորման մեխանիզմների մշակմամբ ու ներդրմամբ: Իսկ 2006 թ-ից սկսած արդեն՝ կենտրոնական բանկը, անցնելով գնաճի նպատակադրման ռազմավարության, ստանձնեց նաև Հայաստանի ֆինանսական հատվածի կարգավորողի ու վերահսկողի դերակատարությունը:

Անդրադառնալով ՀՀ առևտրային բանկերի զարգացմանը՝ հարկ է նշել, որ վերջին երկու տասնամյակի ընթացքում այստեղ ևս եղել են էական փոփոխություններ:

Եթե 1992 թ. հունվարի դրությամբ ՀՀ տարածքում գրանցված էին և գործում էին 39 առևտրային բանկեր, արդեն 1994 թ. հունվարին դրանց թիվը հասել էր 58-ի, որոնց ընդհանուր կապիտալը կազմում էր 283 հազար դրամ: 1996 թ. բանկերի թիվը արդեն կրճատվել էր մինչև 35-ի՝ 7.2 մլրդ. դրամ ընդհանուր կապիտալով:

Վերջին մի քանի տարիների բանկային համակարգի ընդհանուր ցուցանիշները, պահպանելով զարգացման ընդհանուր միտումը, պարբերաբար փոփոխությունների են ենթարկվել, սակայն հատկանշական է, որ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի

¹⁰⁰Նյութը վերցված է ՀՀ ԿԲ պաշտոնական կայքից, <https://www.cba.am/am/SitePages/achfinancialbankingsystem.aspx>

ալիքը էական ազդեցություն չգործեց բանկային համակարգի ընդհանուր զարգացման վրա և չարձանագրվեցին շեշտակի փոփոխություններ ու ճգնաժամային իրավիճակներ:

ՀՀ բանկային համակարգի 2000-ականների վերջին մի քանի տարիների առավել համառոտ ցուցանիշները ներկայացված են աղյուսակ 2.5-ում

Նկատենք, որ 2014 թ. դրությամբ ՀՀ-ում գործող 21 առևտրային բանկերին (509 մասնաճյուղերով) և մեկ զարգացման բանկին (Համահայկական բանկ) բաժին է ընկել ֆինանսական համակարգի ակտիվների մոտ 90%-ը:

Ընդ որում ֆինանսական համակարգում գործել են նաև 32 վարկային կազմակերպություններ (149 մասնաճյուղերով), 8 ապահովագրական ընկերություններ, 2 ապահովագրական բրոքերներ, 141 գրավատներ, արտարժույթի առք ու վաճառք իրականացնող 203 փոխանակման կետեր, դրամական փոխանցումներ իրականացնող 7 կազմակերպություն, վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող 4 կազմակերպություն:

Աղյուսակ 2.5

ՀՀ առևտրային բանկերի հիմնական ցուցանիշները 2007-2014 թթ¹⁰¹. (մլրդ.դրամ)

Տարի	Բանկերի թիվ /մ-ճերի թիվ	Ընդհանուր կապիտալը	Ընդհանուր ակտիվները ¹	Ընդհանուր պարտավորությունները	Փաստացի համալրված կանոնադրական կապիտալը	Ոչ ռեզիդենտների մասնաբաժինը
2007	21/299	120.3	524.6	404.3	80.1	35.7
2008	22-347	171.6	764.5	592.9	116.5	63.3
2009	22/380	235.7	1242.0	788.5	152.5	97.5
2010	22/391	278.4	1326.0	1476.0	188.6	126.15
2011	21/405	318.9	1560.0	1241.0	203.8	151.0
2012	21/442	355.9	2670.0	1711.0	222.6	168.8
2013	21/479	400.7	2478.0	2770.0	243.0	178.2
2014	21/509	469	3411.0	2942.0	280.1	186.4

2014 թ. ընթացքում ՀՀ արժեթղթերի շուկայում որպես մասնակիցներ հանդես են եկել ներդրումային ծառայություններ մատուցող 21 բանկեր, 8 ներդրումային ընկերություններ և ներդրումային ֆոնդերի 4 կառավարիչներ:

¹⁰¹Կազմված է հեղինակի կողմից ՀՀ ԿԲ պաշտոնական կայքի տվյալների հիման վրա, <https://www.cba.am/am/SitePages/achfinancialbankingsystem.aspx>

Եթե փորձենք գնահատել, թե ՀՀ ԿԲ վարած դրամավարկային քաղաքականությունը որքանով է ուղղված ՀՀ տնտեսության մեջ առկա ֆինանսական ռիսկերի նվազեցմանը և որքանով է պաշտպանում ներքին շուկան, առաջին ամենակարևոր գործիքը, որն ակտիվորեն օգտագործվել է և այժմ էլ ԿԲ-ն դինամիկ կերպով փոփոխում է վերաֆինանսավորման տոկոսադրույքն է: Սակայն, պետք է նկատենք, որ եթե մինչև 2010թ. այդ տոկոսադրույքը չէր գերազանցում 6%-ը, ապա արդեն 2014թ. վերաֆինանսավորման տոկոսադրույքը ֆիքսվեց 10%-ի միջակայքում¹⁰²: Սա փաստում է, որ ՀՀ կենտրոնական բանկն առավել հակված է զսպողական քաղաքականության իրականացմանը: Սակայն, եթե իր գործառույթներն իրականացնելու, այն է՝ գնաճը զսպելու տեսանկյունից նման քաղաքականությունն արդարացված է, ապա նույնը չի կարելի ասել ՀՀ տնտեսության վրա ազդեցության տեսանկյունից: Վերաֆինանսավորման տոկոսադրույքի նման բարձր ցուցանիշը, մեղմ ասած, չի խթանում գործարար ակտիվությունը:

Իհարկե, այստեղ մեծ է նաև արժույթի փոխարժեքի տատանումների դերը, որի վրա ազդող գործոնները միայն ներքին շուկայով չեն պայմանավորված ու ավելի շատ կրում են արտաքին աշխարհի ազդեցությունը:

Հայտնի է, որ վերաֆինանսավորման տոկոսադրույքների աստիճանական ու կտրուկ աճողական փոփոխությունները այնքան էլ չեն նպաստում վարկային միջոցների հոսքի ավելացմանն ու գործարար ակտիվության ցուցանիշների բարձրացմանը, ինչը, վերջին հաշվով տանում է տասն տնտեսական աճի ցուցանիշների անկման:

Անդրադառնալով արժութային քաղաքականությանը, որպես կարևորագույն գործիք, պետք է նշենք, որ ՀՀ-ում տարվող արժութային քաղաքականությունը պետք է դիտարկել գնաճի նպատակադրման ռազմավարության համատեքստում:

Մեր կողմից դիտարկվել են ՀՀ դրամ/ ԱՄՆ դոլար փոխարժեքի եռամսյակային ցուցանիշները 2004-2014 թթ. համար (տե՛ս հավելված 3) և ֆոնդային բորսայում իրականացված օրական ինտերվենցիաները, որոնց հիման վրա իրականացված հաշվարկները (աղյուսակ 2.6.) ցույց են տալիս, որ 2004-2014 թթ. դոլար/դրամ փոխարժեքի տատանման դինամիկան պայմանավորված չէ մակրոտնտեսական ցուցանիշներով և իր վրա չի կրում երկարաժամկետ ազդեցության գործոնների ազդեցությունը, սակայն, եթե մինչև 2009 թ-ը (երբ

¹⁰² https://www.cba.am/AM/pmessagesannouncements/Minutes_short_24.03.2015.pdf

տնտեսական աճի ցուցանիշներն ավելի բարձր էին) դրամը կայուն կերպով արժևորվում էր ԱՄՆ դոլարի ու եվրոյի նկատմամբ, ապա ճիշտ հակառակը կարելի է ասել 2009 թ.-ից հետո ընկած ժամանակահատվածի համար: Սակայն հետաքրքրական է, որ այս իրավիճակում, այլ հավասար պայմաններում ինչպես դոլար/դրամ, այնպես էլ եվրո/դրամ փոխարժեքները պետք է աճեին, ինչի արդյունքում դիտարկվող ժամանակահատվածում դրամը պետք է արժեզրկվեր, սակայն տեղի է ունեցել սկզբունքորեն հակառակ գործընթաց՝ դրամը արժևորվել է դոլարի և եվրոյի նկատմամբ, ինչը գործնականում նպաստել է արտահանման տեմպերի նվազմանը՝ միևնույն ժամանակ խթանելով ներմուծման աճը, որի արդյունքում ներմուծողները գրանցել են գերշահույթներ: Իսկ եթե երկարաժամկետ հեռանկարում դրամն արժեզրկվեր, ապա դա կխթաներ արտահանման աճը, կբարձրանար գործարար ակտիվությունը: Միևնույն ժամանակ, արդեն 2009 թ.-ից հետո այս միտումը արձանագրել է թե՛ տնտեսական ցուցանիշների, թե՛ արտահանման շարունակական անկում:

ՀՀ ֆոնդային բորսայում տեղի ունեցած ինտերվենցիաների և փոխարժեքի միջև ռեգրեսիոն հավասարման արդյունքների վերլուծությունը ցույց է տալի, որ ստացված արդյունքները վիճակագրորեն նշանակալից են: Ինչպես երևում է աղյուսակ 2.6-ից, վերը նշված ժամանակահատվածում, ամեն օր, յուրաքանչյուր լրացուցիչ մեկ միլիոն ԱՄՆ դոլարի ինտերվենցիան կարող է հանգեցնել դրամի ԱՄՆ դոլարի նկատմամբ արժևորման 2.42 դրամի չափով: Այլ կերպ ասած, շուկան բավականին հագեցած է դոլարով, ինչը մասամբ նաև պայմանավորված է ԿԲ-ի կողմից 2009 թ. հոկտեմբերի 26-ից ուժի մեջ դրված և 2010 թ. ապրիլի 26-ից գործող նորմատիվով, որով առևտրային բանկերը պետք է արտարժույթ պահեն իրենց կապիտալի 7%-ի չափով:

Վերը նշված երևույթների պատճառահետևանքային կապի համակողմանի գնահատման համար մեր կողմից կատարվել է ՀՀ բանկային համակարգի վրա մակրոտնտեսական ցուցանիշների ազդեցության համալիր վերլուծություն:

ՀՀ ֆոնդային բորսայում իրականացված օրական ինտերվենցիաների և փոխարժեքի կապը բնութագրող ռեգրեսիոն հավասարման լուծման արդյունքները¹⁰³

Փոփոխական	Գործակիցներ	Ստանդարտ սխալ	t-վիճակագրություն	Հավանականություն
Ինտերվենցիա	-0.00000242	3.31E-07	-7.321969	0.0000
Ազատ անդամ	359.1336	2.674446	134.2834	0.0000
R ²	0.177749			

Բանկային համակարգի զարգացման և տնտեսական աճի դինամիկայի միջև կապը առաջինը չէ, որ ուսումնասիրում ենք: Տեսական գրականության մեջ այս կապի ուսումնասիրություն առաջին անգամ իրականացվել է 1873 թ. Բեյջիոտի¹⁰⁴, ապա 1913 թ.՝ Շումպետերի կողմից¹⁰⁵: Երկու հեղինակները պնդում էին, որ բանկերը մեծացնում են ներդրումների արդյունավետությունը՝ դրանով իսկ խթանելով տնտեսական աճը: Սակայն Լուկասը¹⁰⁶ և Ռոբինսոնը¹⁰⁷ այլ տեսակետի կողմնակիցներ էին: Նրանց կարծիքով բանկային համակարգը զարգանում է տնտեսության զարգացման տեմպերին համահունչ: Տվյալ ոլորտի վերջին հետազոտությունները¹⁰⁸ ցույց են տալիս, որ տնային տնտեսությունները և առևտրային կազմակերպությունները շահում են ինչպես ֆինանսական հատվածի զարգացվածության, այնպես էլ տնտեսական աճի տեմպերի արագացման արդյունքում: Առաջին դեպքում մեծանում է հասանելի ֆինանսական ծառայությունների քանակը, իսկ երկրորդ դեպքում՝ լավանում է ընդհանուր տնտեսական դինամիկան:

Ըստ մի քանի տեսական մոդելների¹⁰⁹ ֆինանսական ոլորտի զարգացումը կարող է հանգեցնել տնտեսական աճի տեմպերի մեծացմանը ի հաշիվ ներդրումների խրախուսման և լայն շրջանակի ֆինանսական ծառայությունների տրամադրման, ինչն էլ իր հերթին թույլ

¹⁰³ Հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից Eviews5 ծրագրային փաթեթի օգնությամբ՝ հիմք ընդունելով 2004-2014 թթ. համար ՀՀ դրամ/դոլար փոխարժեքի եռամսյակային ցուցանիշները և ֆոնդային բորսայում իրականացված օրական ինտերվենցիաների ծավալները:

¹⁰⁴ Bagehot W. Lombard Street. Homewood, IL: Irwin, 1873.

¹⁰⁵ Schumpeter J.A. Theorie der Wirtschaftlichen Entwicklung. Leipzig, Germany, Dunker & Humblot, 1912.

¹⁰⁶ Lucas R.E. On the Mechanics of Economic Development // Journal of Monetary Economics. 22(1). 3rd 42. July 1988.

¹⁰⁷ Robinson J. The Generalization of the General Theory. The rate of interest and other essays, London: Macmillan. 67-146. 1952.

¹⁰⁸ Allen F., Santomero A.M. What Do Financial Intermediaries Do? // Journal of Banking and Finance. 25. 271-294. 2001.

¹⁰⁹ King R., Levine R. Finance and Growth: Schumpeter Might Be Right // Quarterly Journal of Economics. 108. 717-737. 2003, Besci Z., Wang P. Financial Development and Growth // Economic Review. Federal Reserve Bank of Atlanta, Fourth Quarter. 46-62. 2007.


է տալիս դիվերսիֆիկացնել ներդրողների պորտֆելը կապիտալի շուկայում և նվազեցնել ներդրումային ռիսկերը: Սակայն այլ մոդելներում¹¹⁰ տնտեսական աճի և ֆինանսական զարգացվածության միջև եղած կապն ունի հակառակ ուղղություն, այն է՝ տնտեսական աճը հաջորդում է ֆինանսական ոլորտի զարգացմանը:

Էմպիրիկ հետազոտությունները ևս վկայում են ֆինանսական ոլորտի զարգացվածության և տնտեսական աճի միջև առկա կապի մասին: Միևնույն ժամանակ ինչպես այլ հետազոտություններում, որպես տնտեսական աճի աղբյուրներ նշվում են տարբեր ցուցանիշներ, որոնք բնութագրում են բանկային համակարգի զարգացվածության աստիճանը: Նման ցուցանիշներից են՝ տրամադրված վարկերի մասնաբաժինը ՀՆԱ-ի մեջ, ֆոնդային բորսայի կապիտալացումը:

Միևնույն ժամանակ մի շարք զարգացող երկրների տեղական շուկաների հետազոտման արդյունքում՝ վերը նշված մոդելներով իրականացված հաշվարկների հիման վրա հնարավոր չի եղել վեր հանել ֆինանսական համակարգի զարգացման և տնտեսական աճը բնութագրող վիճակագրորեն նշանակալից կապ¹¹¹:

Այժմ փորձենք վերլուծել և գնահատել ՀՀ բանկային համակարգը բնութագրող ցուցանիշների և մակրոտնտեսական գործոնների կապը բնութագրող մոդելները:

Վերլուծությունը սկսենք ՀՀ-ում առկա տնտեսական աճի տեմպերից նախաճգնաժամային և ճգնաժամի պայմաններում:



Գծապատկեր 2.3. Տնտեսական աճը 2000-2013թթ. համար ըստ ամիսների, %¹¹²

¹¹⁰ Greenwood J., Jovanovic B. Financial Development, Growth and the Distribution of Income // Journal of Political Economy. 98. 1076-1107. 2000., Galetovic A. Specialization, Intermediation and Growth // Journal of Monetary Economics. 38. 549-559. 2006.


¹¹¹ Региональные банковские системы и инвестиционные процессы, Москва, ИЭПП, 2007, стр. 19

¹¹² Գծապատկերը կառուցվել է ըստ ՀՀ ԱՎԾ համապատասխան տարիների վիճակագրական տարեգրքերի տվյալների:

Գծապատկեր 2.3.-ից ակնհայտ երևում է, որ 2000-2013 թթ. ընթացքում ՀՀ տնտեսությունը գրանցել է դրական տնտեսական աճ և միայն 2009 թվականին է անկում գրանցվել. այն էլ արդեն 2010 թ. գրեթե վերականգնվել էր 2008 թ. ցուցանիշը, որից հետո համաչափ զարգացումը բացարձակ թվերով շարունակվում է:

ԿԲ-ի կողմից տնտեսության ճյուղերի կատարված կանխատեսումների վերանայման արդյունքում 2009 թ. ակնկալվում էր շուրջ 12-15% տնտեսական անկում՝ հիմնականում պայմանավորված ՀՆԱ-ում համեմատաբար մեծ տեսակարար կշիռներ ունեցող շինարարության և ծառայությունների ճյուղերի՝ նվազման ուղղությամբ վերանայված կանխատեսումների: Արդյունքում, ցուցանիշները վկայում են տնտեսական ակտիվության բարձրացման և ՀՆԱ-ի ցուցանիշի աճի մասին, սակայն, այստեղ, եթե դիտարկենք նաև ՍԳԻ-ի ցուցանիշները, պատկերն ավելի ակնհայտ կլինի և երբ համադրում ենք ՀՆԱ-ի ու ՍԳԻ-ի ցուցանիշները, ակնհայտ է, որ հետագա տարիներին առավելապես գրանցվել է տնտեսական անկում:


Բանկերի կողմից տրամադրված վարկերի ծավալները առանձին ճգնաժամային երևույթների ազդեցությամբ ժամանակ առ ժամանակ նվազել են, սակայն, ինչպես երևում է (տե՛ս գծապատկեր 2.4-ը) տարեվերջի ցուցանիշների դինամիկայից այս ցուցանիշը ևս շարունակական ու կայուն աճ է դրսևորել և 2014 թ արձանագրվել է ավելի քան 2 միլիարդ դրամի վարկ:



Գծապատկեր 2.4. Բանկերի կողմից տրամադրված վարկերի դինամիկան 2000-2015 թթ. համար, մլն. դրամ¹¹³


¹¹³ Ըստ https://www.cba.am/Storage/AM/downloads/stat_data_arm/6-loans%20by%20sectors.xls տվյալների:

Նմանատիպ պատկեր է նաև բանկային ավանդների շուկայում: Եվ ինչպես ակնհայտ է գծապատկեր 2.5-ից, առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների ծավալները երկարաժամկետ հատվածում ևս շարունակական ու կայուն աճ են դրսևորել:



Գծապատկեր 2.5. Բանկերում պահ դրված ավանդների հավելաճի տեմպերը 2000-2015 թթ. համար, մլն. դրամ¹¹⁴

Բանկային համակարգի ընդհանուր զարգացումները առավել հստակ պատկերացնելու համար դիտարկել նաև բանկային տոկոսադրույքների շարժը:




Գծապատկեր 2.6. Տրամադրվող վարկերի միջին տոկոսադրույքը 2000-2015 թթ, %¹¹⁵

Այս տեսանկյունից, եթե վարկային տոկոսադրույքի մասով առավելապես կարելի է խոսել համեմատական կայունության մասին, ապա ավանդային տոկոսադրույքի զարգացման հիմնական միտումը եղել է աճողականը (տե՛ս գծապատկեր 2.6-ը և 2.7-ը):

¹¹⁴ Ըստ https://www.cba.am/Storage/AM/downloads/stat_data_arm/5-Deposits%20by%20sectors.xls տվյալների:

¹¹⁵ Ըստ https://www.cba.am/Storage/AM/downloads/stat_data_arm/12-Lending%20rates.xls տվյալների:



Գծապատկեր 2.7. Ավանդների միջին տոկոսադրույքը 2005-2015 թթ., %¹¹⁶

Հաշվի առնելով վերը ներկայացված տնտեսական երևույթներն ու ցուցանիշները, մեր կողմից փորձ է արվել տնտեսաչափական մոդելների միջոցով գնահատել մակրոտնտեսական գործոնների ազդեցության աստիճանը բանկային համակարգը բնութագրող ցուցանիշների վրա:

Առևտրային բանկերի կողմից տրամադրվող վարկերի միջին տոկոսադրույքի և սպառողական գների համաթվի (ինդեքսի) կապը բնութագրող ռեգրեսիոն հավասարման լուծման արդյունքները բերված են աղյուսակ 2.7-ում:

Աղյուսակ 2.7

Տրամադրվող վարկերի միջին տոկոսադրույքի և սպառողական գների ինդեքսի կապը բնութագրող ռեգրեսիոն հավասարման լուծման արդյունքները¹¹⁷

Փոփոխական	Գործակիցներ	Ստանդարտ սխալ	t-վիճակագրություն	Հավանականություն
Կախյալ անդամ	0.062300	0.069215	0.900091	0.3718
Ազատ անդամ	17.48880	0.139020	125.8010	0.0000
R^2	0.013776			

Ռեգրեսիոն հավասարման համար ընտրանքը վերցվել է 2000-2014 թթ. ամսական տվյալները: Ինչպես երևում է աղյուսակ 2.7-ի տվյալներից վարկերի տոկոսադրույքների ամսական տվյալների և սպառողական գների ինդեքսի միջև կապը վիճակագրորեն նշանակալից չէ: Վերը նշված կապը նշանակալից չէ նաև սպառողական գների ինդեքսի 1-ին, 2-րդ և 3-րդ լագերի դեպքում: Այլ կերպ ասած 2000-2014 թթ. համար վարկերի տոկոսա-

¹¹⁶ Ըստ https://www.cba.am/Storage/AM/downloads/stat_data_arm/11-Deposit%20rates.xls տվյալների:

¹¹⁷ Այս և հաջորդող հաշվարկները կատարվել են Eviews ծրագրային փաթեթի օգնությամբ՝ հիմք ընդունելով համապատասխան ցուցանիշների 2004-2014 թթ. տվյալները:

դրույքների փոփոխությունը պայմանավորված չէ սպառողական գների ինդեքսի փոփոխությամբ:

Աղյուսակ 2.8

Ավանդների միջին տոկոսադրույքի և սպառողական գների ինդեքսի կապը բնութագրող ռեգրեսիոն հավասարման լուծման արդյունքները

Փոփոխական	Գործակիցներ	Ստանդարտ սխալ	t-վիճակագրություն	Հավանականություն
Կախյալ անդամ	-0.127960	0.088002	-1.454047	0.1513
Ազատ անդամ	6.741580	0.176755	38.14084	0.0000
R ²	0.035171			

Աղյուսակ 2.8-ից երևում է, որ ավանդների միջին տոկոսադրույքի և սպառողական գների ինդեքսի կապը բնութագրող ռեգրեսիոն հավասարման արդյունքները վիճակագրորեն նշանակալից չեն 2000-2014 թթ. համար: Հետևաբար ավանդների միջին տոկոսադրույքի փոփոխությունը պայմանավորված չէ սպառողական գների ինդեքսի փոփոխությամբ:

Աղյուսակ 2.9

Ճեռնարկություններին տրամադրվող վարկերի և վարկերի միջին տոկոսադրույքի կապը բնութագրող ռեգրեսիոն հավասարման լուծման արդյունքները

Փոփոխական	Գործակիցներ	Ստանդարտ սխալ	t-վիճակագրություն	Հավանականություն
Կախյալ անդամ	-1440.693	613.2105	-2.349427	0.0222
Ազատ անդամ	26901.14	10777.40	2.496070	0.0154
R ²	0.086899			

Ճեռնարկություններին տրամադրվող վարկերի և վարկերի միջին տոկոսադրույքի կապը բնութագրող ռեգրեսիոն կախվածության արդյունքները բերված են աղյուսակ 2.9-ում, որից հետևում է, որ ճեռնարկություններին տրամադրվող վարկերի և վարկերի միջին տոկոսադրույքի կապը վիճակագրորեն նշանակալից է: Մոդելը բնութագրող արդյունքներից երևում է, որ վարկերի միջին տոկոսադրույքը 1%-ով ավելացնելու դեպքում ճեռնարկություններին տրամադրվող վարկերի ծավալը նվազում է 1.4 մլրդ. դրամով:

Արդյունաբերական արտադրանքի և ճեռնարկություններին տրամադրվող վարկերի կապը բնութագրող ռեգրեսիոն հավասարման լուծման արդյունքները (տե՛ս աղյուսակ 2.10-ը) վկայում են այն մասին, որ ճեռնարկություններին տրամադրվող յուրաքանչյուր լրացուցիչ 1 մլն. դրամ վարկի դիմաց արդյունաբերական արտադրանքը աճում է 0.88 մլն. դրամով:

Պետք է նշել, նաև որ ստացված արդյունքները վիճակագրորեն նշանակալից են և վկայում են այն մասին, որ ՀՀ-ում ձեռնարկատիրական գործունեությունը վարկավորելը անարդյունավետ է:

Աղյուսակ 2.10

Արդյունաբերական արտադրանքի և ձեռնարկություններին տրամադրվող վարկերի կապը բնութագրող ռեգրեսիոն հավասարման լուծման արդյունքները

Փոփոխական	Գործակիցներ	Ստանդարտ սխալ	t-վիճակագրություն	Հավանականություն
Կախյալ անդամ	0.879775	0.204625	4.299450	0.0001
Ազատ անդամ	55680.75	982.4263	56.67677	0.0000
R ²	0.241684			

Դիտարկելով արտահանման ծավալների և արդյունաբերական արտադրանքի կապը բնութագրող ռեգրեսիոն հավասարման լուծման արդյունքները (տե՛ս աղյուսակ 2.11-ը) պետք է փաստել, որ ՀՀ-ում վերը նշված կապը 2000-2014 թթ. համար վիճակագրորեն նշանակալից չէ: Այլ կերպ ասած այդ կապը կամ չկա, կամ աննշան է:

Աղյուսակ 2.11

Արտահանման ծավալների և արդյունաբերական արտադրանքի կապը բնութագրող ռեգրեսիոն հավասարման լուծման արդյունքները

Փոփոխական	Գործակիցներ	Ստանդարտ սխալ	t-վիճակագրություն	Հավանականություն
Կախյալ անդամ	0.361840	1.480088	0.244472	0.8077
Ազատ անդամ	9728.219	85360.27	0.113967	0.9097
R ²			0.001029	

Տնտեսական աճի տեմպերի և տրամադրվող վարկերի միջին տոկոսադրույքի կապը ևս վիճակագրորեն նշանակալից չէ (տե՛ս աղյուսակ 2.12-ը):

Աղյուսակ 2.12

Տնտեսական աճի տեմպերի և տրամադրվող վարկերի միջին տոկոսադրույքի կապը բնութագրող ռեգրեսիոն հավասարման լուծման արդյունքները

Փոփոխական	Գործակիցներ	Ստանդարտ սխալ	t-վիճակագրություն	Հավանականություն
Կախյալ անդամ	-2.97E-06	8.99E-05	-0.032992	0.9738
Ազատ անդամ	5.886497	1.592401	3.696617	0.0005
R ²			0.000019	

Ամփոփելով վերը արված հետազոտության արդյունքները՝ կարելի է նշել, որ բանկերի կողմից տրամադրվող վարկերի տոկոսադրույքի աճելու դեպքում բանկերի կողմից

տրամադրվող վարկերի ծավալները նվազել են, բանկերում պահ տրվող ավանդների տոկոսադրույքի միջին արժեքը համեմատաբար աճել է, ինչի արդյունքում ավանդների ծավալը բանկերում ևս աճել է, ձեռնարկություններին տրամադրվող վարկերի և վարկերի միջին տոկոսադրույքի կապը բնութագրող մոդելն ունի հետևյալ արդյուքները՝ վարկերի միջին տոկոսադրույքի և ձեռնարկություններին տրամադրվող վարկերի ծավալի միջև առկա է հակադարձ կախվածություն, իսկ ձեռնարկություններին տրամադրվող յուրաքանչյուր լրացուցիչ 1 մլն. դրամ վարկի դիմաց արդյունաբերական արտադրանքը աճում է 0.88 մլն դրամով: Այսինքն՝ դիտարկվող ժամանակահատվածում ձեռնարկատիրական գործունեության վարկավորումը Հայաստանում արդյունավետ չի, առևտրային բանկերի կողմից տրամադրվող վարկերի միջին տոկոսադրույքի և սպառողական գների ինդեքսի, ավանդների միջին տոկոսադրույքի և սպառողական գների ինդեքսի, արտահանման ծավալների և արդյունաբերական արտադրանքի, տնտեսական աճի տեմպերի և տրամադրվող վարկերի միջին տոկոսադրույքի կապերը բնութագրող ռեգրեսիոն հավասարման լուծման արդյունքները վիճակագրորեն նշանակալից չեն:

Միջազգային վարկային շուկային ՀՀ բանկային համակարգի ինտեգրման համար կարևորագույն չափանիշ է նաև տվյալ երկրի արտաքին պարտքի բեռը: Ընդհանրապես, միջազգային ֆինանսավարկային կազմակերպությունների կողմից թե՛ պետական, և թե՛ մասնավոր կառույցներին վարկային միջոցների տրամադրման կամ առանձին նախագծերի ֆինանսավորման համար կարևոր նշանակություն ունի տվյալ պետության պարտքային բեռը, հատկապես արտաքին պարտքի մակարդակը: Ընդունված է, որ պետության արտաքին պարտքում որքան գերակշռում է ներքին պարտքը, այնքան ավելի ցածր է արտաքին գործոններից երկրի կախվածության աստիճանը, միջազգային կամ տարածաշրջանային ֆինանսատնտեսական ճգնաժամերի ներթափանցման հնարավորությունը, իսկ ազգային արժույթն առավել կայուն է: Դա նշանակում է, որ անհրաժեշտ է մշակել արտաքին պարտքը ներքին պարտքով փոխարինելու ուղիներ՝ ներքին պետական պարտատոմսերի թողարկման շնորհիվ:


Հաշվի առնելով այն հանգամանքը, որ երկրի վճարունակությունը կախված է նաև այն հանգամանքից, թե վերջինս արտաքին պարտքի ինչպիսի ծանրաբեռնվածություն ունի,

ուստի կարևոր է պահպանել արտաքին միջազգային նորմերով ընդունելի պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը: Օրինակ, եվրոյի գոտու շրջանակներում սահմանված է, որ երկրի արտաքին պարտքը չպետք է գերազանցի ՀՆԱ-ի 60%-ը: Ընդհանուր առմամբ, ընդունված է, որ այդ հարաբերակցության առավելագույն սահմանը տատանվում է 50-60%-ի շրջանակներում: Այդ է պատճառը, որ նշված շեմը գերազանցելու դեպքում սահմանափակվում են արտաքին ֆինանսական ռեսուրսների ներգրավման հնարավորությունները, դրանց նկատմամբ հասանելիությունը նվազում է, քանի որ միջազգային ֆինանսատնտեսական կազմակերպությունները դադարեցնում կամ կրճատում են ֆինանսական միջոցների տրամադրումը ռեցիպիենտ երկրներին: Դա շարունակվում է այնքան ժամանակ, քանի դեռ պետությունը միջոցառումներ չի ձեռնարկում արտաքին պարտքի մակարդակը կրճատելու ուղղությամբ:

Ակնհայտ է, որ արտաքին պարտքի բարձր բեռի պայմաններում միջազգային ֆինանսատնտեսական կազմակերպությունները արտաքին վարկային միջոցների տրամադրման սահմանափակման նույն մոտեցումն են կիրառում նաև մասնավոր կազմակերպությունների, այդ թվում՝ առևտրային բանկերի նկատմամբ: Ահա թե ինչու պետության կողմից վարած մակրոտնտեսական քաղաքականությունն իր անմիջական ազդեցությունն է ունենում նաև ներքին տնտեսավարող սուբյեկտների, այդ թվում՝ առևտրային բանկերի վրա՝ ընդլայնելով կամ սահմանափակելով վերջիններիս հասանելիությունը արտաքին ֆինանսավարկային շուկաների նկատմամբ:

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետությանը, ապա պետք է նշել, որ մեր երկրում արտաքին պարտքը չպետք է գերազանցի ՀՆԱ-ի 50%-ը:

Ինչպես երևում է գծապտկեր 2.8-ից (տե՛ս նաև հավելված 1), 1997-2014թթ. ընթացքում արտաքին պարտք/ՀՆԱ առավելագույն հարաբերակցությունը գրանցվել է 1999 թվականին՝ կազմելով 47%, որը հետագա տարիներին աստիճանաբար նվազել է՝ 2008 թվականին հասնելով նվազագույն մակարդակի՝ 14%: Սկսած 2009 թվականից, պայմանավորված միջազգային ֆինանսական ճգնաժամով, այդ ցուցանիշի կրկին վատթարացել է՝ գերազանցելով 30%-ի մակարդակը, իսկ 2015թ. կազմել՝ 41%:



**Գծապատկեր 2.8 Արտաքին պետական պարտք/ՀՆԱ 1997-2015թթ
ցուցանիշների շարժունթացքը¹¹⁸**

Ակնհայտ է, որ որ ՀՀ-ում արտաքին պարտք/ՀՆԱ հարաբերակցությունն աստիճանաբար մոտենում է 50% մակարդակին, որը կարող է բացասաբար անդրադառնալ նաև ՀՀ առևտրային բանկերի կողմից արտաքին ֆինանսական շուկաներից վարկային միջոցների ներգրավման վրա, որն էլ լուրջ խոչընդոտ կարող է հանդիսանալ միջազգային վարկային շուկային ՀՀ բանկային համակարգի արդյունավետ և ինտենսիվ ինտեգրման համար:

2.3. Բանկային ծառայությունների զարգացման հեռանկարները ՀՀ առևտրային բանկերի մրցունակության բարձրացման համատեքստում

Մրցակցային պայքարը, ինչքան էլ, որ թվա, թե այն քառսային բնույթ է կրում, համակարգված ու կանոնակարգված չէ, ամեն դեպքում հիմնված է շուկայի մասնակիցների որոշակի ռազմավարության վրա և կոչված է պաշտպանելու հետաքրքրությունների որոշակի կոնկրետ շրջանակ:

Առևտրային բանկի մրցակցային պայքարի ռազմավարությունը որոշում է բանկի գործունեության ուղղությունները՝ ֆինանսական, արտադրական, կադրային ու գործունեության մյուս ուղղություններով, և նպատակ է հետապնդում այլ բանկերի

¹¹⁸Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայք, <http://www.armstat.am/am/>

համեմատ երկարաժամկետ հատվածում մրցակցային առավելություններ ձեռք բերելու: Հետևաբար, այն առևտրային բանկերը, որոնք կարողանում են ստեղծել, աջակցել ու գիտակցված օգտագործել մրցակցային առավելությունները, դառնում են մրցունակ:


Սակայն այստեղ պետք է նշենք, որ բանկային առանձին ծառայության (պրոդուկտի) մրցունակությունը հնարավոր է դիտարկել միայն առևտրային բանկի մրցունակության շրջանակներում, իսկ առևտրային բանկերի մրցունակությունն ամբողջությամբ պետք է դիտարկել ընդհանուր բանկային համակարգի համատեքստում:

Դա դեռևս Մ.Պորտերի կողմից առաջ քաշված գաղափարն է, ըստ որի՝ յուրաքանչյուր մակարդակի մրցունակություն պայմանավորված է մյուս մակարդակների մրցունակությունից:

Առևտրային բանկի մրցունակության վրա ազդող գործոնները դիտարկվում են երկու հիմնական խոշոր խմբերում՝ արտաքին գործոններ և ներքին գործոններ: Սակայն բանկի մրցունակության վրա ազդող գործոնները համակարգվել և ներկայացվել են ստորև բերված գծապատկերում (գծապատկեր 2.9):

Միջազգային շուկայում ինտեգրման կարևորագույն չափանիշը մրցունակ ապրանքներ, ծառայություններ և մրցունակ համակարգ ունենալն է: Այս տեսանկյունից միջազգային վարկային շուկային ինտեգրման առումով առավել կարևոր են արտաքին միջավայրի գործոնները, որոնք, ըստ էության արտացոլում են նաև ընդհանուր տնտեսության մրցունակությունը (գծապատկեր 2.10):

Առևտրային բանկերի վրա ազդող արտաքին գործոնների համալիրի՝ առանձին երկրների, երկրի բանկային համակարգի և առանձին առևտրային բանկերի մրցունակության վրա ազդեցության գնահատումը այդքան էլ հեշտ գործ չէ: Սակայն ներկայումս կան բավականին շատ ու բազմազան կազմակերպություններ, հետազոտական կենտրոններ ու գործակալություններ, որոնք փորձում են յուրաքանչյուրն իր մեթոդաբանությամբ ու ցուցանիշների համակարգով, յուրաքանչյուր գործոնի կշռի հաշվառմամբ մշակել ու ներկայացնել առանձին երկրների, բանկային համակարգերի կամ առանձին առևտրային բանկերի վարկանիշային սանդղակները:




Գծապատկեր 2.9. Առևտրային բանկի մրցունակության վրա ազդող գործոնները¹¹⁹

Միջազգային վարկային շուկային ՀՀ բանկային համակարգի ինտեգրվածությունը գնահատելու համար նպատակահարմար ենք համարել դիտարկել մի քանի կազմակերպությունների կողմից ՀՀ բանկային համակարգին տրված գնահատականները:

Մասնավորապես, Հայաստանի ֆինանսական համակարգի կայունության գնահատման նպատակով 2012 թ. փետրվար ամսին Արժույթի միջազգային հիմնադրամի և Համաշխարհային բանկի կողմից համատեղ կարգով իրականացվել է ֆինանսական համակարգի գնահատման ծրագիր (FSAP)¹¹⁹՝ գնահատելով գործող համակարգի համապատասխանությունը բանկային համակարգի արդյունավետ վերահսկողության հիմնարար սկզբունքներին:

¹¹⁹ Կազմված է հեղինակի կողմից:



Գծապատկեր 2.10 Առևտրային բանկերի մրցունակության վրա ազդող արտաքին գործոնները¹²⁰


FSAP գնահատման համաձայն ՀՀ ֆինանսական համակարգը մոտ 93%-ով բավարարում էր նշված սկզբունքներին «Ամբողջությամբ» կամ «Հիմնականում» մակարդակով, մինչդեռ նախորդ՝ 2005 թվականին իրականացված գնահատման արդյունքներով¹²¹ նույն ցուցանիշը կազմում էր 67% (տե՛ս գծապատկեր 2.11-ը):

Արված վերլուծության հիմքով նշվում է, որ ՀՀ Կենտրոնական բանկն ունի անկախության, թափանցիկության և ռեսուրսներով ապահովվածության բավարար մակարդակ, ներդրված են ամուր հիմքեր ունեցող կարգավորման դաշտ և վերահսկողական համակարգ, առկա է բարձր կապիտալի համարժեքության և իրացվելիության մակարդակ ունեցող բանկային համակարգ: Որպես կարևոր առավելություն նշվում է, որ առկա է բազմակողմանի վերահսկողություն և ներդրված է ճգնաժամերի կառավարման հայեցակարգ, որը ՀՀ ԿԲ-ին հնարավորություն է տվել արդյունավետ կերպով արձագանքել 2009 թվականի ճգնաժամին:

¹²⁰ Կազմված է հեղինակի կողմից:

¹²¹ Աղբյուրը՝ Համաշխարհային բանկի պաշտոնական կայք, [http://lnweb90.worldbank.org/FPS/fsapcountrydb.nsf/\(attachmentwebFSA\)/Armenia_FSA_Update.pdf/\\$FILE/Armenia_FSA_Update.pdf](http://lnweb90.worldbank.org/FPS/fsapcountrydb.nsf/(attachmentwebFSA)/Armenia_FSA_Update.pdf/$FILE/Armenia_FSA_Update.pdf)

Բացի այդ, էական առաջընթաց է արձանագրվել ՀՀ Կենտրոնական բանկի կողմից համակարգային ռիսկերի մոնիթորինգի ոլորտում, իսկ վճարունակության գնահատման խիստ և վստահելի սթրես - թեստերի արդյունքների համաձայն՝ Հայաստանի բանկային համակարգը բավականին կայուն է և ունակ դիմակայելու տարբեր ցնցումների:



Գծապատկեր 2.11 FSAP թիմի եզրակացությունը ֆինանսական համակարգի կայունության վերաբերյալ¹²²

Հատկանշական է, սակայն, որ 2015 թ. համար «Մուդիզ» վարկանիշային կազմակերպությունը հրապարակել է հայտարարություն, որով Հայաստանի սուվերեն վարկանիշը փոխել է «կայուն»-ից «բացասական»: Այս վարկանիշի ձևավորմանը նպաստել են մի քանի ենթավարկանիշներ: Մասնավորապես, «Մուդիզը» մեկ մակարդակով իջեցրել է Հայաստանի արտադրյալի ու ազգային արժույթով երկարաժամկետ պարտավորությունների թողարկման վարկանիշը և սահմանել «Ba3» նախկին «Ba2»-ի փոխարեն: Մեկ մակարդակով իջեցրել է նաև երկարաժամկետ պարտատոմսերի թողարկման վարկանիշի վերին սահմանաչափի գնահատականը և նախկին Ba1-ի փոխարեն սահմանվել է Ba2:

¹²² Գծապատկերը կազմվել է համաշխարհային բանկի պաշտոնական կայքի տվյալների հիման վրա, <http://lnweb90.worldbank.org/FPS/fsapcountrydb.nsf/FSAExternalcountryreports#> Հայաստանի մասով վերլուծությունը հասանելի է հետևյալ հղումով՝ [http://lnweb90.worldbank.org/FPS/fsapcountrydb.nsf/\(attachmentwebFSA\)/Armenia_Update_FSA.pdf/\\$FILE/Armenia_Update_FSA.pdf](http://lnweb90.worldbank.org/FPS/fsapcountrydb.nsf/(attachmentwebFSA)/Armenia_Update_FSA.pdf/$FILE/Armenia_Update_FSA.pdf), pp.5-6.

Ընդհանուր առմամբ, Հայաստանի սուվերեն վարկանիշի «բացասական» դարձնելը, ըստ գործակալության փորձագետների, պայմանավորված է Հայաստանի հիմնական առևտրային գործընկեր երկրների (Ռուսաստանի և Եվրոպական մի քանի երկրների) տնտեսական աճի դանդաղման հետ կապված տնտեսական անորոշության ռիսկով:

«Մուդիզ» գործակալության կողմից Հայաստանին շնորհված սուվերեն վարկանիշերի մակարդակների, վերին սահմանաչափերի գնահատականների և վարկանիշերի հեռանկարների փոփոխությունների դինամիկայի դիտարկումը (տե՛ս աղյուսակ 2.13-ը) ցույց է տալիս, որ պատկերն այնքան էլ հուսադրող չէ և բոլոր վարկանիշային ցուցանիշներով անկում է արձանագրվել:

Աղյուսակ 2.13

Մուդիզ միջազգային վարկանիշային կազմակերպության կողմից Հայաստանին

շնորհված սուվերեն վարկանիշների փոփոխությունը 2006-2015թթ¹²³

	24.06.2006	24.11.2011	22.08.2013	20.09.2013	16.09.2014	15.01.2015
Արտաբյուջով կառավարության պարտավորությունների թողարկման սուվերեն վարկանիշ	Ba2	Ba2	Ba2	Ba2	Ba2	Ba3↓
Հեռանկարը	Կայուն	Բացաս.↓	Կայուն ↑	Կայուն	Կայուն	Բացաս.↓
Ազգային արժույթով կառավարության պարտավորությունների թողարկման սուվերեն վարկանիշ	Ba2	Ba2	Ba2	Ba2	Ba2	Ba3↓
Հեռանկարը	Կայուն	Բացաս.↓	Կայուն ↑	Կայուն	Կայուն	Բացաս.↓
Արտաբյուջով երկարաժամկետ պարտավորությունների թողարկման՝ երկրի վարկանիշի վերին սահմանաչափի գնահատական	Baa3	Baa3	Baa3	Ba1↓	Ba1	Ba2↓
Արտաբյուջով կարճաժամկետ պարտավորությունների թողարկման՝ երկրի վարկանիշի վերին սահմանաչափի գնահատական	P-3	P-3	P-3	NP↓	NP	NP
Արտաբյուջով երկարաժամկետ բանկային ավանդների՝ երկրի վարկանիշի վերին սահմանաչափի գնահատական	Ba3	Ba3	Ba3	Ba3	Ba3	B1↓
Արտաբյուջով կարճաժամկետ բանկային ավանդների՝ երկրի վարկանիշի վերին սահմանաչափի գնահատական	NP	NP	NP	NP	NP	NP
Ազգային արժույթով պարտավորությունների թողարկման՝ երկրի վարկանիշի վերին սահմանաչափի գնահատական	A3	Baa1↓	Baa1	Baa3↓↓	Baa3	Ba1↓
Ազգային արժույթով բանկային ավանդների՝ երկրի վարկանիշի վերին սահմանաչափի գնահատական	Baa1	Baa1	Baa1	Baa3↓↓	Baa3	Ba1↓

Եթե այս խնդիրը դիտարկենք Հայաստանի միջազգային հարաբերությունների

¹²³Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ պաշտոնական կայք, «Մուդիզ» վարկանշային կազմակերպության կողմից Հայաստանին շնորհված սուվերեն վարկանիշերն ու դրանց հեռանկարները, https://www.cba.am/AM/panalyticalmaterialsresearches/Moody's_January%202015.pdf

համակարգում, նշանակում է, որ միջազգային ու միջազգային վարկային շուկայում արձանագրվում է Հայաստանի ու Հայաստանի բանկային համակարգի վարկունակության անկում: Ընդ որում, եթե նաև հաշվի առնենք, որ Մուդիզ-ը սովերեն վարկանիշեր է տրամադրում նախկին ԽՄ 11 երկրների, նույնիսկ այս կազմում Հայաստանի վարկանիշը հուսադրող չէ, ու գերազանցում է միայն Մոլդովային (B3), Բելառուսին (B3) և Ուկրաինային (Caa3): Այս երկրներին Հայաստանը գերազանցում է նաև արտարժույթով երկարաժամկետ պարտատոմսերի թողարկման ու արտարժույթով երկարաժամկետ բանկային ավանդների վարկանիշի վերին սահմանաչափի գնահատականներով:

Խնդրի ողջ բարդությունը հասկանալու համար վարկանիշային գնահատականները դիտարկենք մի քանի երկրների նույն ցուցանիշների հետ համադրմամբ (տե՛ս աղյուսակ 2.14-ը):

Աղյուսակի տվյալներից ակնհայտ է, որ Հայաստանի հիմնական առևտրային գործընկեր պետություններում և հատկապես՝ Ռուսաստանի Դաշնությունում, արձանագրվել են ցուցանիշների անկումներ, ինչը կրկին անգամ վկայում է, որ փոքր բաց տնտեսություն ունեցող Հայաստանը, այդ թվում՝ նաև Եվրասիական տնտեսական միությանն անդամակցության շնորհիվ իր վրա կրում է գործընկեր տնտեսությունների բացասական ազդեցությունը:

Հետաքրքիրն այն է, որ մեկ այլ վարկանիշային կազմակերպության՝ ՖիԹ2-ի կողմից տրված գնահատականները, չնայած չեն հակասում, սակայն նաև նույնությամբ չեն կրկնում Մուդիզի կողմից տրված վարկանիշերը և այստեղ պատկերը փոքր-ինչ ավելի հուսադրող է (տե՛ս աղյուսակ 2.15-ը):

Նկատենք, որ միջազգային վարկանիշային կազմակերպությունների գործունեությունն ինքնանպատակ չէ և միջազգային վարկային ու ներդրումային միջոցների ներգրավման տեսանկյունից կարևոր տեղեկատվություն է պարունակում դրանց սեփականատերերի համար: Սա նաև տեղեկատվություն է պարունակում տարբեր տեսակի միջազգային բանկային ծառայությունների ներմուծման տեսանկյունից և նպաստում կամ խոչնդոտում է ՀՀ առևտրային բանկերի կողմից դրանց ներդրմանը կամ այլ կազմակերպությունների հետ համագործակցության համար վստահության ձևավորմանը:

**Մուդիզ միջազգային վարկանիշային կազմակերպության կողմից Հայաստանին և մի
շարք երկրների 2015թ.տրամադրված գնահատականներ¹²⁴**

Երկիր	Արտար- ժույթով պետա- կան պարտա- տոմսերի թողարկ- ման վար- կանիշ	Ազգային արժույ- թով պե- տական պար- տատոմ- սերի թո- ղարկ- ման վարկա- նիշ	Վարկա- նիշի հե- ռա- նկարը	Արտարժու- յթով երկա- րաժամկետ պարտա- տոմսերի թողարկման վարկանիշի վերին սահ- մանաչափ	Արտար- ժույթով կարճա- ժամկետ պարտա- տոմսերի թողարկ- ման վար- կանիշի վե- րին սահ- մանաչափ	Արտար- ժույթով եր- կարաժամ- կետ բան- կային ավանդ- ների վար- կանիշի վե- րին սահ- մանաչափ	Արտար- ժույթով կարճա- ժամկետ բանկային ավանդ- ների վար- կանիշի վերին սահման	Ազգային արժույթով պարտա- տոմսերի թողարկ- ման վար- կանիշի վերին սահման	Ազգային արժույթով բանկային ավանդ- ների վար- կանիշի վերին սահման- աչափ
ԱՊՀ երկրներ և Վրաստան									
Ղազախստան	Baa2	Baa2	Դրական	Baa1	P-2	Baa3	P-3	A 3	A 3
Ռուսաստան	Baa3↓↓	Baa3↓↓	Վերանայ- ման ընթ.	Baa3↓↓↓↓	P-3↓↓	Ba1↓↓↓	NP1	Baa2↓↓↓	Baa2↓↓↓
Ադրբեջան	Baa3	Baa3	Կայուն	Baa3	P 3	Baa3	P-3	Baa3	Baa3
Վրաստան	Ba3	Ba3	Դրական	Ba1	NP	B1	NP	Baa3	Baa3
Հայաստան	Ba3↓	Ba3↓	Բացաս. ↓	Ba2↓	NP	B1↓	NP	Ba1↓	Ba1↓
Մոլդովա	B3	B3	Կայուն	B2	NP	Caa1	NP	Ba2	Ba2
Բելառուս	B3	B3	Բացաս.	B3	NP	Caa1	NP	B1	B1
Ուկրաինա	Caa3	Caa3	Բացաս.	Caa2	NP	Ca	NP	Caa1	Caa1
Արևմտյան Եվրոպայի երկրներ									
Իռլանդիա	Baa1	Baa1	Կայուն	Aa3	P-1	Aa3	P-1	Aa3	Aa3
Իսպանիա	Baa2	Baa2	Դրական	A1	P-1	A1	P-1	A1	A1
Իտալիա	Baa2	Baa2	Կայուն	A2	P-1	A2	P-1	A2	A2
Պորտուգալիա	Baa3	Baa3	Կայուն	A3	P-2	A3	P-2	A3	A3
Իսլանդիա	Ba1	Ba1	Կայուն	Baa3	P-3	Baa3	P-3	Baa2	Baa2
Հունաստան	Caa1	Caa1	Կայուն	Ba3	NP	Ba3	NP	Ba3	Ba3
Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներ									
Չեխիա	A1	A1	Կայուն	Aa2	P-1	A1	P-1	Aa2	Aa2
Էստոնիա	A1	A1	Կայուն	Aa2	P-1	Aa2	P-1	Aa2	Aa2
Լեհաստան	A2	A2	Կայուն	Aa3	P-1	A2	P-1	Aa3	Aa3
Սլովակիա	A2	A2	Կայուն	Aa2	P-1	Aa2	P-1	Aa2	Aa2
Մայթա	A3	A3	Կայուն	A1	P-1	A1	P-1	A1	A1
Լիտվա	Baa1	Baa1	Դրական	A2	P-1	Baa1	P-2	A2	A2
Լատվիա	Baa1	Baa1	Կայուն	A1	P-1	A1	P-1	A1	A1
Բուլղարիա	Baa2	Baa2	Կայուն	A3	P-2	Baa2	P-2	A3	A3
Ռումինիա	Baa3	Baa3	Կայուն	A3	P-2	Baa3	P-3	A3	A3
Թուրքիա	Baa3	Baa3	Բացաս.	Baa1	P-2	Baa3	P-3	A3	A3
Սլովենիա	Ba1	Ba1	Կայուն	Baa1	P-2	Baa1	P-2	Baa1	Baa1
Հունգարիա	Ba1	Ba1	Կայուն↑	Baa1	P-2	Ba2	NP	Baa2	Baa2
Խորվաթիա	Ba1	Ba1	Բացաս.	Baa1	P-2	Ba2	NP	A3	A3
Մոնտենեգրո	Ba3	Ba3	Բացաս. ↓	Baa1	P-2	B1	-	-	-
Ալբանիա	B1	B1	Կայուն	Ba2	NP	B2	NP	Baa3	Baa3
Սերբիա	B1	B1	Կայուն	Ba2	NP	B2	NP	Baa3	Baa3
Կիպրոս	B3↑↑↑	B3↑↑↑	Կայուն↓	B1↑↑↑	NP	Caa1↑	NP	B1↑↑↑	Caa1↑
Բոսնիա-Հերց.	B3	B3	Կայուն	B3	NP	B3	NP	B3	B3

¹²⁴Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ պաշտոնական կայք,

https://www.cba.am/AM/panalyticalmaterialsresearches/Moody's_January%202015.pdf

Վարկանիշային գնահատականների այս վերջին տարիների անկումը, ըստ էության, 2005 թ.-ից հետո ընկած ժամանակահատվածում առաջին անգամ է դրսևորվում և ինչպես վարկանշող կազմակերպությունների փորձագետներն են նշում, այդ անկման հիմքում ընկած են այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ ՌԴ տնտեսությունից ՀՀ տնտեսության կախվածությունը և այդ հիմքով խոցելիությունը, ՌԴ-ից դրամական փոխանցումների ծավալների կրճատումը, ՀՀ կենտրոնական բանկի արտարժույթային պահուստների կրճատումը, պետական պարտքի՝ արտարժույթի փոխարժեքից կախվածությունը, թույլ ներդրումային ակտիվությունը և այլն:

Աղյուսակ 2.15

Ֆիթչ միջազգային վարկանիշային կազմակերպության կողմից Հայաստանին շնորհված սուվերեն վարկանիշերի փոփոխությունը 2006-2015թթ¹²⁵

	Արտարժույթով երկարաժամկետ պարտավորությունների թողարկման սուվերեն վարկանիշ	Արտարժույթով կարճաժամկետ պարտավորությունների թողարկման սուվերեն վարկանիշ	Ազգային արժույթով երկարաժամկետ պարտավորությունների թողարկման սուվերեն վարկանիշ	Երկրի վարկանիշի վերին սահմանաչափի գնահատական	Վարկանիշի հեռանկարը
05.06.06	BB-	B	BB-	BB	Կայուն
17.08.06	BB-	B	BB-	BB+↑	Կայուն
01.05.07	BB-	B	BB-	BB+	Դրական↑
03.07.08	BB↑	B	BB↑	BB+	Կայուն↓
13.08.09	BB↓	B	BB↓	BB↓	Կայուն
04.10.10	BB-	B	BB-	BB	Կայուն
01.09.11	BB-	B	BB-	BB-	Կայուն
23.08.12	BB-	B	BB-	BB	Կայուն
16.08.13	BB-	B	BB-	BB	Կայուն
14.02.14	BB-	B	BB-	BB-	Կայուն
07.08.14	BB-	B	BB-	BB	Կայուն
30.01.15	B+↓	B	B+↓	BB↓	Կայուն
24.07.15	B+	B	B+	BB-	Կայուն

¹²⁵ Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ պաշտոնական կայք, «Ֆիթչ» միջազգային վարկանշային կազմակերպության կողմից Հայաստանին շնորհված սուվերեն վարկանիշը, https://www.cba.am/AM/panalyticalmaterialsresearches/Fitch_January%202015.pdf

Նշված գործոնների ազդեցությամբ վարկանիշային գնահատականների անկումները, վերջին հաշվով, կարող են հանգեցնել նաև եվրապարտատոմսերի արժեկտրոնային տոկոսադրույքների բարձրացմանը, որն էլ իր հերթին կհանգեցնի արտաքին վարկերի՝ Հայաստանի համար մատչելիության նվազմանը:

Թերևս հենց սա է այն հիմնական պատճառներից մեկը, որ միջազգային վարկային միջոցների տրամադրման համար հիմնականում կարևորվում են վարկառու երկրի բարձր տնտեսական աճի որակը և կատարվող ներդրումների բարձր մակարդակը: Իրականում սա պատահական չէ, և եթե միջազգային վարկային գործընթացում ներգրավվածությունը դիտարկենք վարկերի տրամադրման պարզագույն և առաջնահերթ սկզբունքների տեսանկյունից, շատ կարևոր է վարկերի վերադարձելիության ապահովումը: Իսկ տնտեսական աճը, ներգրավված ներդրումները, արտահանումից ակնկալվող մուտքերը, հարկային եկամուտները, ֆինանսական այլ աղբյուրները արտաքին պարտքի սպասարկման հիմնական միջոցներն են: Սակայն, եթե արտահանման ծավալների ընդլայնման մասով միանշանակ է, որ պարտքի սպասարկման բարելավում տեղի կունենա, ապա նույնը չի կարելի ասել, օրինակ, հարկային բեռի ավելացման մասին, որին պետք է չափազանց զգույշ մոտեցում ցուցաբերել:

Բանկային համակարգի վստահելիության, տնտեսության վարկունակության տեսանկյունից կարևոր է նաև բանկային վերահսկողության դերը և ՀՀ բանկային համակարգում միջազգային չափանիշներին համապատասխան վերահսկողության համակարգի առկայությունը:

Հենց այստեղ կարևոր է հիշել բանկային կարգավորման ու վերահսկողության բազելյան սկզբունքների մասին:

Ձևավորվելով դեռևս 1980-ական թթ.՝ այն անմիջապես կիրառություն գտավ շուրջ 100 պետություններում ու աստիճանաբար կատարելագործվում է: 1998-2002 թթ. ֆինանսական ցնցումների ժամանակ անհրաժեշտություն առաջացավ կրկին վերանայել բանկային գործունեության կոորդինացված վերահսկողության համակարգը ու չնայած դեռևս շատ երկրներում նույնիսկ չեն էլ հասցրել լիարժեք ներդնել Բազել 2-ի

սկզբունքներին համապատասխանող համակարգեր՝ արդեն 2010-2011թթ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի դասերը պարտադրեցին կրկին փոփոխություններ անել բազելյան պահանջներում ու մշակվեց, հիմնականում, կապիտալի որակի բարելավմանն ուղղված Բազել-3 փաթեթը:

Այս փաթեթի ներդրման և բանկային գործունեության տնտեսական ցուցանիշների բարեփոխումների տեսանկյունից պետք է նկատել, որ ներկայումս տնտեսական մրցակցությունը բավականին սրված է ոչ միայն ներազգային մակարդակում, այլ նաև միջազգային ֆինանսական շուկաներում և, ֆինանսաբանկային գլոբալացումը, բանկային կառույցների խոշորացումները կրկնակի խնդիր են դարձել ազգային բանկային համակարգերի համար և հայրենական բանկային համակարգի առջև խնդիր է դրվել ամրապնդել մրցակցային դիրքերը ֆինանսական շուկայում:

Այս տեսանկյունից ՀՀ կենտրոնական բանկի՝ կապիտալի մեծացման պահանջը լիովին արդարացված կարելի է համարել:

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքները գնահատելիս բազմաթիվ հետազոտություններ ցույց են տալիս, որ ՀՀ բանկային համակարգը ոչ միայն ցուցաբերեց կայունություն, այլ նաև արձանագրեց տեղաբաշխվող միջոցների աճ ու, թերևս, հենց սա է հիմնական պատճառներից մեկը, որ ֆինանսական համակարգի մասնագետների կողմից միանշանակ չի գնահատվում Բազել-3-ի պահանջների ներդրման հարցը: Տնտեսագետների մի մասը դա դիտարկում է որպես բանկային շուկայում խոշոր գործարքների ու վարկավորման սահմանափակում և արդյունքում՝ բանկերի խոշորացում¹²⁶: Տնտեսագետներ մեկ այլ խումբ գտնում են, որ Բազել 3-ի սկզբունքները վարկավորման սահմանափակումներով կարող են նպաստել նաև տնտեսական աճի դանդաղեցմանը:

Սակայն հակառակ այս տեսակետների, 2014թ. ՀՀ-ում մեկնարկվեց Բազել3-ի քայլ առ քայլ կիրառման գործընթացը, որով նախատեսվում է, որ բանկերի կառավարումը կբարձրացվի որակապես նոր մակարդակի ու, հիմնական նորմատիվների միջոցով բարելավելով ռիսկ-մենեջմենթի որակ, կապահովվի տնտեսվարման ընթացիկ կայունություն¹²⁷: Բազել 3-

¹²⁶ http://armef.com/hy/news/erkkhosutyun/article_1364916133/

¹²⁷ <http://www.armbanks.am/hy/2013/01/31/47237>

ի դրույթներում առանձնակի ուշադրություն է դարձվում նաև ընթացիկ կայունության ապահովմանն ուղղված հակաճգնաժամային ռեսուրսների ձևավորմանը:

Այս շրջանակներում, մասնավորապես, նորմատիվային նոր պահանջներ են ներկայացվում կապիտալի պահպանմանն ու հակացիկլային բուֆերների ձևավորմանը, որը նվազեցնելու է բանկերի շահույթը և գործարար ակտիվությունը, քանի որ լրացուցիչ պահուստները ձևավորվելու են եկամուտների հաշվին:

Նշված բարեփոխումները, բնականաբար, կամրապնդեն բանկային հատվածը, սակայն որոշ բանկեր կարճաժամկետ հատվածում ստիպված կլինեն բարձր պահել տոկոսադրույքները՝ հարմարվելով կապիտալի ձևավորման նոր պահանջներին: Բացի այդ, բարձր իրացվելի ակտիվների ձևավորման պահանջների խստացմանը զուգընթաց ակնկալվում է, որ շուկայում կաճեն նաև դրանց ձեռքբերման գները, ինչը լրացուցիչ ֆինանսական լարվածություն կառաջացնի բանկերում: Հետևաբար, Բազել 3-ի պահանջների կիրառումը մի կողմից կամրապնդի բանկերի ֆինանսական ապահովությունը, սակայն մյուս կողմից որոշակիորեն կազդի վերջիններիս գործունեության շահութաբերության կրճատման և գործարար ակտիվության նվազման վրա¹²⁸: Այս առումով, կարծում ենք, տնտեսական ցուցանիշների կազմում առաջնահերթ պետք է համարվի նաև զարգացման հնարավորությունների գնահատման ցուցիչների ընդգրկումը, որոնք կբնութագրեն բանկերի գործունեության հեռանկարային կայունությունը և մրցակցային ռազմավարական դիրքերի ապահովումը ֆինանսական շուկայում:

Արդյունքում, ՀՀ բանկային համակարգում ձևավորվել է մի միջավայր, որտեղ ՀՀ բանկերը չնայած իրավական նորմատիվային չափանիշներով համապատասխանում են, բայց բավարար չափով մրցունակ չեն միջազգային շուկայում: ՀՀ առանձին առևտրային բանկերը այդ համակարգում ևս դեռևս մրցունակ չեն ու գնում են դեպի խոշորացման (կլանումների ու ձուլումների), իսկ առանձին ծառայությունների մասով կրում են արտաքին միջավայրի ազդեցությունը և լավագույն դեպքում հասցնում են ներմուծել ծառայությունների որոշ տեսակներ: Բնականաբար, օբյեկտիվորեն հարց է առաջանում, թե որտեղից սկսել

¹²⁸Բազել 3, Համառոտ տեղեկանք, ՀՀ ԿԲ, Երևան 2012, էջ 30-32:

համակարգի բարելավման աշխատանքները: Պատասխանն այնքան էլ միանշանակ չէ. հնարավոր է սկսել թե՛ ծառայությունների առանձին տեսակներից, թե՛ ընդհանուր համակարգային փոփոխություններից: ՀՀ կենտրոնական բանկը, կարծես թե ընդունել է միաժամանակ բոլոր ուղղություններով զարգացումը և աշխատանքներ են տարվում ընդհանուր բանկային համակարգի բարելավման ուղղությամբ (Բազել 3-ի ներդրում, բանկային կապիտալի խոշորացում, մրցակցային պայմանների բարելավում և այլն)՝ միաժամանակ նաև առանձին բանկերի հնարավորություն տալով զարգացնել առավել մրցունակ ծառայություններ:

Առաջին միջազգային ծառայությունները, որոնք ՀՀ առևտրային բանկերը սկսեցին տրամադրել իրենց հաճախորդներին, արտաքին տնտեսական գործարքների ֆինանսավորման ու հաշվարկների գծով ծառայություններն էին:

Միջազգային բանկային ժամանակակից ծառայություններից է նաև եվրապարտատոմսերի թողարկումը: Վերջիններս այլ երկրների արժույթներով արտահայտված պարտքային արժեթղթեր են, որոնք նախատեսված են միաժամանակ մի քանի արտասահմանյան ֆոնդային շուկաներում տեղաբաշխելու համար: Եվրապարտատոմսերի հիմնական շուկաները գտնվում են Լոնդոնում, Լյուքսեմբուրգում և Շվեյցարիայում: Եվրապարտատոմսերի տոկոսադրույքը ձևավորվում է Սինգապուրի բանկերի կողմից սահմանված տոկոսադրույքի (SIBOR) հիման վրա:

Պետք է նկատել, որ ԱՊՀ տարածքում գործընկեր պետություններից շատերն իրենց արտաքին պարտքի կառավարման գործընթացում վաղուց արդեն օգտվում են եվրապարտատոմսերի շուկաների կողմից առաջարկվող ֆինանսական գործիքներից: Զարգացող երկրների կողմից թողարկված եվրապարտատոմսերի՝ միջազգային ֆինանսական շուկա մուտք գործելու համար անհրաժեշտ է, որ դրանք ունենան վարկային ռեյթինգավորում միջազգային ռեյթինգային գործակալությունների (Moody's Investors Service, Standard & Poor's, Fitch IBCA) կողմից, ինչը բնութագրում է փոխառու երկրի վարկունակության և վստահելիության մակարդակը:

Հայաստանը Ռուսաստանից ստացված 500 մլն ԱՄՆ դոլարի գումարի վարկը մարելու նպատակով 2013 թ. սեպտեմբերին առաջին անգամ թողարկեց 700 մլն ԱՄՆ

դոլարի եվրապարտատոմս՝ 7 տարի մարման ժամկետով, որի տարեկան արժեկտրոնային տոկոսադրույքը կազմում էր 6.25% (ֆիքսված), հիմնական տեղաբաշխողներն էին «Deutsche Bank AG»-ն, «London Branch»-ը, «HSBC Bank plc»-ն և «J.P.Morgan Securities plc»-ն: Իսկ 2015 թ. մարտի 19-ին երկրորդ փուլով թողարկվեց 500 մլն ԱՄՆ դոլար գումարի արտարժութային պետական եվրապարտատոմս՝ այս անգամ 10 տարի մարման ժամկետով և ավելի բարձր՝ 7.5% արժեկտրոնային տոկոսադրույքով, որի գլխավոր տեղաբաշխողներն են եղել «Deutsche Bank»-ը, «HSBC»-ն և «JP Morgan»-ը¹²⁹, որից 200 մլն ԱՄՆ դոլար ուղղվել է առաջին փուլով թողարկված եվրապարտատոմսերի մի մասի հետգնմանը, իսկ 85 մլն ԱՄՆ դոլարը՝ ՀՀ պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորմանը¹³⁰: Թեև այս եվրապարտատոմսերի ժամկետն ավելի երկար է, սակայն, ինչպես երևում է, այս փուլում տոկոսադրույքն ավելի բարձր է, որը կհանգեցնի ՀՀ արտաքին պարտքի սպասարկման բեռի էլ ավելի ծանրացմանը: Բացի այդ, եվրապարտատոմսեր մարումը տեղի է ունենում ոչ թե որոշակի ժամանակացույցի համաձայն, այլ՝ միանվագ, ժամկետի վերջում (սա նշանակում է, որ համապատասխանաբար 2020 և 2025 թվականները լինելու են ՀՀ արտաքին պարտքի մարման ամենածանր տարիները), ինչը մեծացնում է վերաֆինանսավորման և տոկոսադրույքի վերաֆիքսման ռիսկերը:

Դիտարկելով եվրասիական տնտեսական միության և տարածաշրջանային մի շարք երկրների կողմից առաջին և երկրորդ տեղաբաշխումների պատմական վիճակագրությունը՝ կարելի է փաստել, որ հատկապես ԱՊՀ երկրների շարքում ՀՀ թողարկված եվրապարտատոմսերի արժեկտրոնային տոկոսադրույքը, այնուամենայնիվ, բավականին ցածր է: Այսպես, Ռուսաստանն առաջին թողարկումն իրականացրել է 1996 թ.-ին 1 մլրդ ԱՄՆ դոլար գումարի չափով, 5 տարի ժամկետով և 9.25% տոկոսադրույքով, երկրորդ թողարկումը՝ 1997 թ.-ին 2 մլրդ ԱՄՆ դոլար գումարի չափով, 10 տարի ժամկետով և 10.0% տոկոսադրույքով, Վրաստանն առաջին թողարկումն իրականացրել է 2008 թ.-ին 500 մլն ԱՄՆ դոլար գումարի չափով, 5 տարի ժամկետով և 7.50% տոկոսադրույքով, երկրորդ թողարկումը՝ 2011

¹²⁹ <http://www.reuters.com/article/2015/03/19/armenia-bonds-idUSL6N0WL2QT20150319>

¹³⁰ http://www.banks.am/am/news/capital_market/10609/

թ.-ին 500 մլն ԱՄՆ դոլար գումարի չափով, 10 տարի ժամկետով և 6.88% տոկոսադրույքով, Ղազախստանն առաջին թողարկումն իրականացրել է 1996թ.-ին 200 մլն ԱՄՆ դոլար գումարի չափով, 3 տարի ժամկետով և 9.25% տոկոսադրույքով, երկրորդ թողարկումը՝ 1997 թ.-ին 350 մլն ԱՄՆ դոլար գումարի չափով, 5 տարի ժամկետով և 8.38% տոկոսադրույքով, Բելառուսն առաջին թողարկումն իրականացրել է 2010 թ. հուլիսին 600մլն ԱՄՆ դոլար գումարի չափով, 5 տարի ժամկետով և 8.75% տոկոսադրույքով, երկրորդ թողարկումը՝ 2010 թ. օգոստոսին 400 մլն ԱՄՆ դոլար գումարի չափով, 5 տարի ժամկետով և 8.75% տոկոսադրույքով: Ինչ վերաբերում է մեր երկրին, ապա ի սկզբանե ՀՀ կառավարության 16.05.2013թ. ընդունված «Միջազգային կապիտալի շուկայում արտարժույթային պարտատոմսերի թողարկման» հայեցակարգի՝ դիտարկվում էր եվրապարտատոմսերի թողարկման երեք սցենար, ըստ որի՝ առաջին թողարկումը նախատեսվում էր 500 մլն ԱՄՆ դոլար, երկրորդ թողարկումը՝ 750 մլն ԱՄՆ դոլար, իսկ երրորդ թողարկումը՝ 1 մլրդ ԱՄՆ դոլար ծավալով:

Միջազգային բանկային ծառայություններից է նաև սինդիկացված վարկավորման գծով բանկերի ծառայությունները: Բոլորովին վերջերս հայաստանյան բանկերը սկսեցին դուրս գալ սինդիկացված վարկերի միջազգային շուկա՝ իբրև փոխառուներ: 2011 թ. «Արարատբանկը» 12 մլն դոլար սինդիկացված վարկի ստացման պայմանագիր ստորագրեց Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎՋԵԲ) հետ:

Խոշոր սինդիկացված վարկ է տրամադրվել նաև «Հայէկոնոմբանկին», որը Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎՋԵԲ) հետ համատեղ 2010 թ. հունիսի 30-ին կնքեց 10 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր գումարով արդեն երկրորդ սինդիկացված վարկի պայմանագիր:

Սինդիկացված վարկի հաջորդ խոշոր փոխառու «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ» բանկն է: Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը (ՎՋԵԲ) փոքր և միջին բիզնեսի վարկավորման նպատակով «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկին» 50 մլն դոլարի չափով սինդիկացված վարկ է տրամադրել:

Հատկանշական է, որ Հայաստանում ինտերնետային բանկային ծառայությունների շուկան զգալի ընդլայնվել է միայն վերջին 2 տարիների ընթացքում՝ գրանցելով նմանատիպ

ծառայություններ մատուցող բանկերի թվաքանակի աճ: Ընդ որում, եթե ֆիզիկական անձանց առաջարկվող ինտերնետային բանկային ծառայությամբ ներկայանում են ոչ բոլոր հայաստանյան բանկերն, ապա իրավաբանական անձանց առաջարկվող «բանկ-հաճախորդ» համակարգն այսօր գործում է գրեթե բոլոր բանկերում, թեև այս դեպքում էլ ոչ բոլոր բանկերում է նկատվում ծառայության նկատմամբ հետաքրքրություն: Հայաստանյան բանկերի գերակշիռ մասը ինտերնետ բանկային ծառայությունները դեռևս չեն դիտում որպես հաճախորդների բազայի ընդլայնման հիմնական միջոց, և չեն ձեռնարկվում համապատասխան քայլեր հաճախորդների շրջանում ծառայության նկատմամբ հետաքրքրության ընդլայնման ուղղությամբ: Այսօր բանկերի հաճախորդների գերակշիռ մասը ինտերնետ բանկային ծառայությունից օգտվում են առավելապես միայն բանկային հաշվի մնացորդը դիտելու նպատակով՝ չնայած որ առաջարկվում է ծառայությունների լայն շրջանակ:

Հայաստանում ինտերնետ բանկային ծառայությունների տարածմանը խոչընդոտում է նախ և առաջ կանխիկի վրա հիմնված տնտեսությունը, ինչպես նաև հայաստանյան հաճախորդների ցածր իրազեկվածության և միևնույն ժամանակ ցածր վստահելիության մակարդակը: Ուշադրության է արժանի նաև ևս մեկ փաստ. ինտերնետ բանկային ծառայություններ ներկայացնող հայաստանյան բանկերի շրջանում շատ են նաև այն հաճախորդները, ովքեր գրանցված են բանկային օնլայն-ծառայություններից օգտվելու համար, սակայն փաստացի չեն օգտվում:

Ընդհանուր առմամբ, ՀՀ բանկային համակարգում հաճախորդների շրջանում ինտերնետ բանկային ծառայությունների տարածվածությամբ առաձնանում են «Էյջ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն, «ԱԿԲԱ-Կրեդիտ ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ն և «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն: Ինչ վերաբերում է մյուս երկու բանկերի հաճախորդների շրջանում ինտերնետ բանկային ծառայությունների տարածվածության ցուցանիշներին, ապա դրանք պաշտոնապես չեն հրապարակվում, իսկ բանկերի ներկայացուցիչները խոսում են միայն միտումների մասին: Վերջիններս, իհարկե, գոհացուցիչ են և խոստումնալից:

Կարևոր է, հատկապես, բանկերի կորպորատիվ հաճախորդների շրջանում ինտերնետ բանկային ծառայությունների տարածվածությունը: Այսօր այս ծառայություններն առա-

վել մեծ հետաքրքրություն են վայելում տնտեսության այնպիսի ոլորտներում գործունեություն ծավալող ընկերությունների շրջանում, որոնք իրականացնում են արտաքին առևտրային գործառնություններ, մասնավորապես՝ ներմուծող-արտահանող ընկերություններ են, մատուցում են բազմաբնույթ ծառայություններ: Միայն Էյչ-Էս-Բի-Սի Բանկը 2010 թվականի ընթացքում գրանցել է կորպորատիվ հաճախորդների շրջանում ինտերնետ բանկային ծառայության սպառման ծավալների աճ՝ 21%-ով: Ներկայումս այս ծառայությունից օգտվում են բանկի հաճախորդ հանդիսացող 693 ընկերություններ կամ կորպորատիվ հաճախորդների 19%-ը: Հայաստանյան մյուս բանկերը նույնպես խոսում են վերջին ժամանակահատվածում կորպորատիվ հաճախորդների շրջանում ծառայության նկատմամբ հետաքրքրության աճի մասին՝ կրկին խուսափելով հրապարակել վիճակագրական տվյալներ:

Ընդհանուր առմամբ, կարելի է ասել, որ ինտերնետ բանկային ծառայությունները Հայաստանում սկսել են զարգանալ և այս ծառայությունների նկատմամբ հաճախորդների շրջանում հետաքրքրության աճը կնպաստի այս ուղղությամբ բանկերի կողմից առավել արդյունավետ քաղաքականության մշակմանը: Ինտերնետային բանկային ծառայությունների ծավալների աճը առաջիկայում միանշանակ կուղեկցվի բանկային ծառայությունների ինքնարժեքի կրճատմամբ, որն իր հերթին թույլ կտա հայաստանյան բանկերին իջեցնել սպասարկման սակագները՝ վարչական ծախսերի կրճատմանը համընթաց: Վերջին հաշվով, ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման արդյունքում կշահեն թե՛ բանկը, թե՛ հաճախորդները:

Միջազգային ֆինանսական շուկաներում աշխատանքի որոշակի փորձ կուտակելով՝ հայրենական բանկերը ընդարձակել են հաճախորդներին տրամադրվող միջազգային բանկային ծառայությունների ցանկը և առաջատար հայրենական բանկերի ինտերնետ-կայքերի վերլուծությունը թույլ տվեց առանձնացնել նրանց կողմից առաջարկվող կոնկրետ միջազգային բանկային ծառայությունների ցանկը (աղյուսակ 2.16.): Ընդ որում՝ ՀՀ առևտրային բանկերի միջազգային բանկային ծառայությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք չեն տրամադրում իրենց հաճախորդներին միջազգային բանկային ծառայությունների ողջ ցանկը, և, հետևաբար, միջազգային վարկային շուկայի մասնակիցների

հետ տնտեսական հարաբերությունները զարգացած են ոչ այնքան լիարժեք, որ հնարավոր լինի խոսել միջազգային վարկային շուկային հայաստանյան բանկերի զգալի ինտեգրման մասին:

Աղյուսակ 2.16

ՀՀ առևտրային բանկերի միջազգային բանկային ծառայությունները¹³¹

Բանկային ծառայությունների տեսակներ	Բանկային ծառայություններ
1	2
Արտարժույթային գործառնություններ	• Ֆորեքս գործարքներ • Սվոփ գործարքներ • Ֆորվարդային գործարքներ • Ֆյուչերսային գործարքներ
Միջազգային փոխանցումներ	• Թղթային եղանակով ներկայացվող վճարման հանձնարարականներ • Բանկ-հաճախորդ/ինտերնետ-Բանկինգ համակարգերով ներկայացվող վճարման հանձնարարականներ • Արագ դրամական փոխանցման համակարգեր՝ MoneyGram, InterExpress, Быстрая почта
Փաստաթղթային գործառնություններ	<u>Հարցումներ փաստաթղթերով՝ հաճախորդների հանձնարարմամբ</u>
	Ակրեդիտիվ. - REVOLVING L/C՝ Վերականգնվող ակրեդիտիվ, որի գումարը վերականգնվում է առանց ակրեդիտիվի պայմաններում էական փոփոխությունների անհրաժեշտության - TRANSFERABLE L/C՝ Փոխանցելի ակրեդիտիվ, որը իրավունք է տալիս շահառուին պահանջել բանկից փոխանցել ակրեդիտիվը ամբողջությամբ կամ մասամբ՝ մեկ կամ ավել երկրորդային շահառուներին - BACK - TO - BACK L/C՝ Հանդիպակաց ակրեդիտիվ, որը թողարկվում է թողարկված այլ ակրեդիտիվին հակընդդեմ - STANDBY L/C՝ Պահուստային ակրեդիտիվ, այսինքն՝ ակրեդիտիվի ձևով թողարկված բանկային երաշխիք, որի նպատակը պարտավորությունները չկատարելու հնարավոր ռիսկը ծածկելն է - RED/GREEN CLAUSE L/C՝ ակրեդիտիվ, որը ներառում է հատուկ դրույթ, որով հանձնարարում է կատարող բանկին վճարել կանխավճար բենեֆիցիարին՝ մինչ առաքումը Ինկասո. - Հաճախորդի պատվերով թողարկվող ինկասո/վաճառողի ինկասո - Հաճախորդի անունով թողարկված ինկասո/գնորդի ինկասո Երաշխիքային գործողություններ. - ADVANCE PAYMENT GUARANTEE/ԿԱՆԽԱՎՃԱՐԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ՝ Բանկը պարտավորվում է փոխհատուցել կանխավճարը գնորդին, եթե վաճառողը չկատարի իր պայմանագրային պարտավորությունները

¹³¹Կազմված է հեղինակի կողմից ՀՀ առևտրային բանկերի ինտերնետ կայքերի ուսումնասիրությունների հիման վրա, //www.banks.am, www.banker.am

	- PERFORMANCE BOND/ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՐԱՇԽԻՔ՝ Երաշխիք, որով բանկը պարտավորվում է փոխհատուցել բենեֆիցիարին՝ վաճառողի/ծառայություն մատուցողի պայմանագրային պարտավորությունները սահմանված ձևով չկատարելու դեպքում - BID BOND/ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ՝ Այս երաշխիքը կոչված է փոխհատուցելու ծախսերը, որ առաջանում են մրցույթի կազմակերպչի համար, եթե պատվեր ստացած կազմակերպությունը հրաժարվում է այն իրականացնել, ինչի պատճառով նոր մրցույթ է կազմակերպվում - PAYMENT GUARANTEE/ՎՃԱՐՄԱՆ ԵՐԱՇԽԻՔ՝ Այն ապահովում է գործարքով սահմանված վճարման իրականացումը - CUSTOM BOND/ՄԱՔԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ՝ Երաշխիքի հատուկ տեսակ, որը տրվում է ի շահ ՌԴ մաքսային ծառայության՝ ի ապահովումն մաքսային տուրքերի վճարման - STANDBY L/C /ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ԱԿՐԵԴԻՏԻՎ՝ Ակրեդիտիվի ձևով թողարկված բանկային երաշխիք, որի նպատակն է ծածկել պարտավորությունները չկատարելու հնարավոր ռիսկը
Վարկավորման կազմակերպում	Արտահանողների ու ներդրողների կարճաժամկետ ֆինանսավորման կազմակերպում Միջնաժամկետ և/կամ երկարաժամկետ ֆինանսավորման կազմակերպում օտարերկրյա բանկի կողմից ստացված վարկի հաշվին
Սպասարկում օտարերկրյա շուկաներում	Անմիջական մուտք դեպի NYSE, AMEX, NASDAQ
Անհատական վստահելի կառավարում	ՀՀ առևտրային բանկերն առաջարկում են իրենց ծառայությունները հաճախորդների ժամանակավոր ազատ միջոցները վստահելի կառավարման ուղղությամբ՝ տեղավորելով դրանք միջազգային ֆինանսական շուկաներում

Համաձայն միջազգային վարկային շուկային բանկի ինտեգրման մակարդակների նախորդ պարագրաֆում բերված դասակարգման՝ հայաստանյան բանկերը գտնվում են ինտեգրման առաջին երկու մակարդակներում, որոնք ենթադրում են պարզ միջազգային բանկային ծառայությունների տրամադրում, ինչպիսիք են՝ արտարժույթի առքուվաճառքը, հաճախորդի հանձնարարությամբ անդրսահմանային վճարների իրականացումը, օտարերկրյա բանկերի կողմից դուրս գրված ակրեդիտիվների ավիզավորումը, հաճախորդների արտաքին առևտրային գործարքների ֆինանսավորումը, առաջատար օտարերկրյա բանկերի խոշոր նախագծերում մասնակցությունը՝ ազգային հաճախորդներին միջազգային ներդրումային բանկային ծառայությունների տրամադրման գծով: Այս մակարդակի շրջանակներում հայաստանյան բանկերը մտնում են տնտեսական հարաբերությունների մեջ օտարերկրյա բանկային կառույցների, արտահանման գործակալությունների, հաճախորդների օտարերկրյա գործընկերների և միջազգային վարկային շուկայի այլ մասնակիցների հետ:

Ավելի բարդ միջազգային բանկային ծառայությունները, որոնք ենթադրում են սերտ

տնտեսական հարաբերություններ միջազգային վարկային շուկայի մասնակիցների հետ, ներկայացված չեն ՀՀ առևտրային բանկերի ինտերնետ-կայքերում: Դրանք բաժնետոմսերի, մուրհակների և այլ արժեթղթերի թողարկման գծով բանկային ծառայություններն են և միջազգային ֆինանսական շուկաներում դրանց տեղադրումը: Քիչ հավանական է, որ հայրենական բանկերը կարող են իրականացնել խոշորամասշտաբ նախագծեր իրենց հաճախորդների համար՝ եվրոպարտատոմսերի կամ սինդիկացված վարկերի թողարկման գծով՝ իբրև լիդ-մենեջերներ:

ՀՀ առևտրային բանկերի գինանոցում տվյալ ծառայությունների բացակայությունն ու դրանց մեծ նշանակությունը հայրենական բանկային գործի զարգացման համար հիմնավորում է օտարերկրյա բանկային համակարգերի փորձի կիրառությունը: Այս նպատակով անհրաժեշտ է տեղական բանկի կազմակերպական կառուցվածքում առանձնացնել մի ստորաբաժանում, որը պատասխանատու է միջազգային բանկային ծառայությունների զարգացման համար, որի խնդիրների մեջ կմտնեն համաշխարհային շուկայում գործունեության կոորդինացումը, միջազգային բանկային ծառայությունների զարգացումը, միջազգային դրամական հոսքերի արդյունավետության բարձրացումը, վարկանշային գործակալությունների հետ հարաբերությունների զարգացումը, միջազգային ստանդարտների հետ բանկի ֆինանսական հաշվետվությունների համաձայնեցումը, օտարերկրյա բանկերի հետ հարաբերությունների զարգացումը: Դա թույլ կտա ամրապնդել առկա տնտեսական հարաբերությունները, նոր հարաբերություններ սահմանել միջազգային վարկային շուկայի մասնակիցների հետ և այսպիսով արագացնել այդ շուկային հայրենական բանկերի ինտեգրումը:

Նպատակահարմար է օգտագործել թղթակցային հարաբերությունների կազմակերպման միջազգային փորձը: Առաջատար օտարերկրյա բանկերը ներկայումս հրաժարվում են բազմաթիվ նոստրո թղթակցային հաշիվներից այլ երկրների բանկերում, քանի որ դա հանգեցնում է գործարքային ծախսերի մեծացմանը: Օրինակ՝ «ԱԲՆ ԱՄՐՕ Բանկը» (Հոլանդիա), որը մտնում է աշխարհի խոշորագույն բանկերի տասնյակի մեջ, ունի ընդամենը 8 արտաքին թղթակցային հաշիվներ: Դա թույլ կտա ՀՀ առևտրային բանկերին մատուցել միջազգային հաշվարկներով ծառայությունների լրիվ ցանկն ավելի բարձր որակական մակարդակով՝ կոնկրետ օտարերկրյա բանկերի հետ համագործակցության ուժեղացման հաշվին: Կարևոր է հայաստանյան բանկերի կողմից վարկային գծերի բացումը թղթակցային

հարաբերությունների շրջանակներում: Դա զգալիորեն կպարզեցնի արտահանման-ներմուծման գործարքների իրականացումը՝ միջազգային վճարահաշվարկային ծառայությունների տրամադրման ժամանակ: Հեռանկարային է հաճախորդների միջազգային առևտրային գործարքների գծով միջազգային բանկային ծառայությունների տրամադրումը և բանկի հաճախորդների համար բիզնես գործընկերների որոնումը: Արևմտյան բանկային պրակտիկայում նման ստորաբաժանումները կրում են «Trade Promotion Department» անվանումը, որոնց գործունեությունը պայմանավորված է արտաքին տնտեսական հարաբերությունների ընդլայնման գործում հաճախորդների պահանջարկի ուսումնասիրությամբ:

Առևտրային գործարքների կազմակերպման գծով միջազգային բանկային ծառայությունների տրամադրման ժամանակ հատուկ արդիականություն է ձեռք բերում հաճախորդների բիզնեսի սպասարկման ժամանակ խորհրդատվական ծառայությունների մատուցման գծով օտարերկրյա բանկերի փորձը, ինչպիսիք են՝ հաճախորդների արտաքին տնտեսական պայմանագրերի վերլուծությունը, օտարերկրյա բանկերի վարկունակության և ընթացիկ ֆինանսական վիճակի վերլուծությունը, հաճախորդների գործարքների կազմակերպման գծով անհատական սխեմաների մշակումը:

Միջազգային ներդրումային բանկային ծառայությունների օտարերկրյա փորձի կիրառումը միջազգային վարկային շուկային ՀՀ բանկերի ինտեգրման գործընթացի զարգացման առանցքային գործոններից մեկն է: Հեռանկարային է արժեթղթավորման գծով ծառայությունների տրամադրումը: Գործնական հետաքրքրություն է ներկայացնում համաշխարհային ֆինանսական շուկաներում հայաստանյան բանկերի մուրհակների և հաճախորդների բաժնետոմսերի տեղադրման գծով համաշխարհային փորձի օգտագործումը: Այս ծառայությունների յուրացումը թույլ կտա հայրենական բանկերին, մի կողմից, տնտեսական հարաբերություններ հաստատել միջազգային վարկային շուկայի մասնակիցների հետ, իսկ մյուս կողմից՝ լավագույն կերպով բավարարել հաճախորդի ներդրումային պահանջարկը:

Այսպիսով՝ վերոնշյալ միջազգային բանկային ծառայությունների տրամադրումը թույլ կտա բավարարել դինամիկ կերպով զարգացող հայրենական բիզնեսի աճող պահանջները: Դրա հետ առնչվող հարցերի համալիրի լուծումը հնարավոր է միջազգային վարկային շուկայի մասնակիցների հետ ՀՀ առևտրային բանկերի տնտեսական հարաբերությունների զարգացման պայմանով:

ԳԼՈՒԽ 3. ԲԱՆԿԱՅԻՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԱԽԱԴԻՅԱԼՆԵՐՆ ՈՒ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ- ՈՒՄ

3.1. Միջազգային վարկային շուկային առևտրային բանկերի ինտեգրման ժամանակակից ուղղությունները

Համաշխարհային տնտեսության, մասնավորապես՝ համաշխարհային ֆինանսական շուկայի գլոբալացումը ենթադրում են միջազգային վարկային շուկային ՀՀ առևտրային բանկերի ինտեգրման հիմնախնդրի ուսումնասիրության և ինտեգրման օպտիմալ մոդելի մշակման արդիականությունը: Միջազգային վարկային շուկային բանկի ինտեգրման հիմնական ուղղությունները և անհրաժեշտ պայմանները մշակվել են Համաշխարհային բանկի կողմից: Դրանք ներառում են երեք տարրեր՝

- բանկի ինստիտուցիոնալ զարգացումը՝ «հզոր» բանկերի հենքային խմբի ստեղծում, որոնք կարող են օրինակ հանդիսանալ հայրենական բանկերի համար, համազգային քլիրինգային համակարգի ձևավորում, Համաշխարհային բանկի վարկերին և այլ միջազգային վարկային գծերին հասանելիության ձեռք բերում,
- առևտրային բանկերի գործունեության նկատմամբ վերահսկողության կատարելագործում՝ վերահսկողության արդյունավետ համակարգի ստեղծում, գործող օրենքների, նորմատիվ ակտերի կատարելագործում, ինչպես նաև այդ վերահսկողության ապահովման նպատակով կադրերի պատրաստում,
- անցում միջազգային բանկային սկզբունքների և ստանդարտների¹³²:

Նշենք, որ վերը թվարկված երեք ուղղություններն էլ վերջի տասնամյակում բավականաչափ մշակվել են: Ձևավորվել է ՀՀ բանկային համակարգի առանձնահատուկ ինստիտուցիոնալ կառուցվածք, հստակ ընդգծվում են բանկային համակարգի առաջնորդները՝ հինգ խոշոր բանկերի տեսակարար կշիռը բոլոր բանկերի ամբողջ ակտիվներում և

¹³² Financial infrastructure, A publication of the World Bank and the International Finance Corporation, 2009. Հասանելի է, օրինակ, <http://siteresources.worldbank.org/FINANCIALSECTOR/Resources/282044-1252596846652/FinancialInfrastructureReport.pdf> հղումով:

կապիտալում կազմում է մոտավորապես 43%¹³³: Ընդ որում՝ ՀՀ առևտրային բանկերի մեծ մասը գրանցված է ոչ ռեզիդենտների մասնակցությամբ: Դրա հետ մեկտեղ կարելի է խոսել բանկային համակարգի վերահսկողության որակի բարձրացման մասին, ինչն ամրագրվում է այդ ոլորտում նորմատիվաիրավական ակտերի մշտական և շարունակական թարմացմամբ միջազգային ստանդարտներին համապատասխան: Տվյալ ոլորտի ռեֆորմների հետ կապված հիմնական ուղղությունները ընդհանրացված տեսքով ներկայացվել են ՀՀ ԿԲ «ՀՀ բանկային համակարգի հնարավոր զարգացումները 2012-14թթ.» փաստաթղթում¹³⁴: Ընթացիկ տասնամյակը բնութագրվում է նաև բանկային համակարգի ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին անցմամբ, ինչը նույնպես նպաստում է միջազգային վարկային շուկային բանկերի ինտեգրման գործընթացին, քանի որ այն թույլ է տալիս հայրենական բանկերին դուրս գալ կապիտալի միջազգային շուկաներ:

Այս ուղղությունների ողջ ծավալով իրականացումը նշանակալիորեն պետք է նպաստի հայրենական բանկերի՝ միջազգային վարկային շուկային ինտեգրմանը: Դրա հետ մեկտեղ, հայրենական բանկերի ամբողջական ինտեգրման հիմնախնդրի լուծումը կախված է հետևյալ պայմանների իրականացումից՝

- ՀՀ-ում քաղաքական և տնտեսական կայունության ապահովում, որի բացակայությունը հանդիսանում է հիմնական գործոնը, որն արգելք է հանդիսանում մեր տնտեսության ինտեգրմանը համաշխարհային տնտեսությանը,
- ֆինանսական կայունության ձեռք բերում և միջտարածաշրջանային դրամավարկային, արժութային, ֆոնդային համակարգերի զարգացում,
- երկրի բանկային համակարգի հարմարեցումը համաշխարհային արժութավարկային շուկաների գործունեությանը և միկրոմակարդակով հայրենական բանկերի ինտեգրումը միջազգային վարկային շուկային:

Միջազգային վարկային շուկային բանկային ինտեգրացիոն գործընթացների վերլուծության արդյունքում առանձնացվում են մի քանի մոդելներ:

¹³³ https://www.cba.am/AM/pmessagesannouncements/Minutes_short_24.03.2015.pdf

¹³⁴ Հասանելի է <https://www.cba.am/Storage/AM/downloads/parberakan/verlucakan/Strateg-2012-2014.pdf> հղումով:

Բանկային ինտեգրման առաջին մոդելը առևտրային բանկի արդյունաբերական զարգացած երկրի շուկա դուրս գալն է¹³⁵։ Միջազգային վարկային շուկային բանկի ինտեգրման այս մոդելը չի ենթադրում նշանակալի ներկայություն։ Այն իրականացվում է ներկայացուցչության տեսքով և ներառում է երեք փուլ.

1. ՀՀ առևտրային բանկի ներքին պահանջների և հնարավորությունների վերլուծություն հետևյալ ուղղություններով՝
 - նպատակները, որոնք իր առջև դնում է ՀՀ առևտրային բանկը արդյունաբերական զարգացած երկրի շուկա դուրս գալիս,
 - ֆինանսական միջոցները, որոնց տիրում է բանկը և որոնք ենթադրում է ներդնել միջազգային կառուցվածքի կազմակերպման և գործունեության համար,
 - որակավորված անձնակազմի առկայությունը և հնարավորությունը այդ անձնակազմին ուսուցանելու։
2. Տեղական ներքին օրենսդրության վերլուծությունը, որը ցույց է տալիս ՀՀ առևտրային բանկի՝ արդյունաբերական զարգացած երկրի շուկա դուրս գալու հնարավորությունը հետևյալ ուղղություններով՝
 - կենտրոնական բանկի կողմից ՀՀ առևտրային բանկերին արտասահմանում գործունեություն ծավալելու թույլտվություն տրամադրելու կարգը,
 - ներքին հայրենական օրենսդրության համապատասխանությունը միջազգային ստանդարտներին և բանկի նվազագույն կապիտալին, որը գործում է ավելի քան մեկ երկրում։
3. Արդյունաբերական զարգացած երկրների նորմերի և կանոնների վերլուծություն, որոնք կանոնակարգում են օտարերկրյա բանկերի գործունեությունը իրենց տարածքում հայրենական առևտրային բանկի՝ իրենց շուկա մուտք գործելու հեշտության տեսանկյունից։

Այս մոդելը ենթադրում է երկու պայման՝ ներքին արժույթային օրենսդրությունը միջազգային ստանդարտներին համապատասխանեցնելը և բանկի ղեկավարության

¹³⁵ Воронина Л. А., Колкарева Э. Н., Ратнер С. В., Выбор стратегии интеграции банка в мировую финансовую систему, Экономический анализ: теория и практика, 2008, с.2-4.

կողմից միջազգային բանկային գործունեության զարգացման միտումների ընկալումն ու դրանց համապատասխան բանկի քաղաքականության իրականացումը:

Միջազգային վարկային շուկային *բանկի ինտեգրման երկրորդ մոդելն* ավելի գերադասելի է և ենթադրում է միջազգային մասնաճյուղային ցանցի զարգացում¹³⁶: Այս մոդելի հիմքում դրված է 20-րդ դարի կեսերի ճապոնական բանկերի արտասահմանյան ընդլայնման փորձը:

Ինտեգրման ճապոնական մոդելը կիրառելիս հայրենական բանկերի համար նպատակահարմար է գործողությունների հետևյալ հաջորդականությունը.

1. վերակառուցել ֆինանսական կենտրոններում արդեն աշխատող արտասահմանյան բանկերի ցանցը,
2. օգտվելով համաշխարհային շուկայի բարենպաստ իրավիճակից՝ ընդլայնել ներդրումները արտասահմանում, համագործակցելով այն ընկերությունների հետ, որոնց արտադրանքը ունի պոտենցիալ պահանջարկ արտասահմանում,
3. ազատականացնել հայրենական բանկերի արտասահմանյան գործունեությունը,
4. իրականացնել միջազգային ցանցի կառուցվածքի, դրա աշխարհագրության, ձևերի, բնույթի և գործարքների տեսակների որակական կատարելագործում:

Որոշ տնտեսագետներ առանձնացնում են նաև միջազգային վարկային շուկային բանկի ինտեգրման մոդելը ԱՀԿ-ին անդամակցության պայմաններում¹³⁷: Նրանց կարծիքով, երկրի անդամակցությունը ԱՀԿ-ին թույլ կտա լրացուցիչ ազդակ հաղորդել տվյալ երկրի բանկային ծառայությունների շուկայի զարգացմանը, քանի որ կներգրավի նոր կապիտալներ, ծառայությունների մատուցման որակի միջազգային ստանդարտներ, կառողջացնի իրավիճակը մրցակցության մակարդակի բարձրացման ճանապարհով, ինչպես նաև կհեշտացնի տվյալ երկրի բանկերի ելքը ֆինանսական ծառայությունների համաշխարհային շուկա: Այդ արդյունքին հասնելու համար առաջարկվում է ձևավորել ՀՀ ֆինանսական շուկա օտարերկրյա մասնակիցների մուտքի ճկուն քաղաքականություն, ներառյալ հետևյալ դրույթները.

1. Օտարերկրյա բանկերի մուտքի խթանում ՀՀ ֆինանսական շուկա ռեզիդենտ-

¹³⁶ Кураков Л. П. и др., Современные банковские системы: Учеб.пособие. М.:Гелиос АРВ, 2000, с.53.

¹³⁷ Смыслов Д. В., Международный валютный фонд на рубеже столетий.:Деньги и кредит,1999, #7, с.9.

բանկերի տեսքով, որը միաժամանակ կնպաստի բանկային ծառայությունների հայրենական արտադրողների զարգացմանը և այդ ոլորտի որակական բնութագրիչների բարելավմանը:

2. Նման բանկ-ռեզիդենտներին ազգային ռեժիմի տրամադրումը:
3. Միջնաժամկետում ֆիզիկական անձանց հետ գործարքների գծով սահմանափակումների աստիճանաբար նվազեցում, իսկ երկարաժամկետում՝ օտարերկրյա կապիտալի մասնակցության քվոտայի ընդլայնում հայրենական բանկային համակարգում:
4. Ֆինանսական շուկայի մասնակիցների պաշտպանություն «Ծառայությունների առևտրի մասին գլխավոր համաձայնագրի»¹³⁸ շրջանակներում:

Առանձնացվում է նաև միջազգային վարկային շուկային բանկի ինտեգրման մոդել՝ հիմնված օտարերկրյա բանկերի հետ թղթակցային հարաբերությունների ստեղծման, միջազգային վարկանիշի և առաջատար մասնագիտացված ընկերությունների աուդիտորական եզրակացությունների ստացման վրա¹³⁹:

Հաջորդ մոդելը միջազգային վարկային շուկային բանկի ինտեգրման մոդելն է՝ հիմնված համատեղ ձեռնարկատիրության վրա: 20-րդ դարի վերջը և 21-րդ դարի սկիզբը բնութագրվում է համաշխարհային տնտեսական կապերում բանկերի դերի մեծացմամբ և դրանց միջազգային գործունեության ձևերի կատարելագործմամբ: Այսօր գոյություն չունի որևէ համաշխարհային խոշոր բանկ, որը ակտիվ կերպով չգրառվի գործարար կապերի ընդլայնմամբ ազգային և միջազգային մակարդակներով: Նման ընդարձակման մեթոդներից մեկն է համատեղ ձեռնարկատիրությունը, որը ինտեգրման տարբերակներից մեկն է և այլընտրանք է հանդիսանում կլանումներին և միաձուլումներին: Դրա հետ մեկտեղ կոոպերացիային մասնակցող կողմերի իրավաբանական ինքնուրույնությունը պահպանվում է, այն դեպքում, երբ կլանումների և միաձուլումների դեպքում կողմերից մեկը կամ երկուսն էլ հաճախ զրկվում են ոչ միայն տնտեսական, այլ նաև իրավական ինքնուրույնությունից: Համատեղ ձեռնարկությունների

¹³⁸ <http://www.wto.am/documents/havelvac1b.pdf> // Ֆինանսական ծառայությունների մասին հավելված, էջ 20-23:

¹³⁹ Чернявский С. П., Международный офшорный бизнес и банки. М.: Финансы и статистика, 2002.

միջոցով համագործակցությունը, որը չի հետապնդում գործարքին մասնակից կողմերի իրավական կարգավիճակի փոփոխություն, բայց կապված է նոր իրավաբանական անձանց հայտնվելով, միջանկյալ դիրք է գրավում այդ երկու կատեգորիաների միջև:

Կոոպերացիայի ամենատարածված ձևերից է ռազմավարական (ստրատեգիական) միավորումները՝ դաշինքները: Քանի որ դաշինքների մեծ մասը ավարտվում է կողմերի կլանմամբ, դրանց հաճախ դիտարկում են որպես կոնսոլիդացիայի տարանցիկ փուլ: Կլանման գործընթացը ստրատեգիական դաշինքի փուլի միջոցով թույլ է տալիս նշանակալիորեն բարձրացնել միավորվող կառույցի գոյատևման հավանականությունը ապագայում: Ստրատեգիական համագործակցության ժամանակահատվածում տեղի է ունենում ոչ միայն ավելի սերտ ծանոթություն, այլ նաև հաղթահարվում են գործարար մշակույթների միջև առկա տարբերությունները, սկսվում է կազմակերպական ինտեգրման ժամանակահատված և ձեռք է բերվում համատեղ գործունեության փորձ:

Միջազգային բանկային գործունեության ոլորտում համատեղ ձեռնարկատիրության նորագույն միտումների, դրանց ձևերի հետազոտությունը տեսական հետաքրքրություն է ներկայացնում միջազգային փորձի կիրառման հնարավորությունների գնահատման համար, միջազգային վարկային շուկային հայրենական բանկերի ինտեգրման գործընթացի ժամանակ՝ հաշվի առնելով ՀՀ ազգային հետաքրքրությունները և բարձրացնելով դրա դերը միջազգային հարաբերություններում:

Առևտրատնտեսական հարաբերությունների և բանկային գործունեության ինտեգրման նորագույն միտումները վկայում են բանկերի և կազմակերպությունների կողմից միջազգային շուկաներ դուրս գալու ձևերի և մեթոդների մշտական կատարելագործման մասին: Բանկային գործունեության ինտեգրման և կազմակերպական ձևերի շրջանակի ընդլայնման կարևորագույն գործոն դարձավ ֆինանսական օրենսդրության ազատականացումը ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրներում: Մրցակցային պայքարի սրման պայմաններում ֆինանսական ծառայությունների շուկայում հենց բանկային կապիտալի կոնսոլիդացիան է դառնում համաշխարհային տնտեսական էքսպանսիայի զարգացման ավելի կարևոր տարր:

Թեև միջազգային կառույցներ ստեղծելիս բանկերը շարունակում են նախապատվությունը տալ ամբողջությամբ վերահսկելի միավորներին (մասնաճյուղեր, դուստր բանկեր 100% մասնակցությամբ, ներկայացուցչություններ), նրանք նաև ակտիվ կիրառում են համատեղ ձեռնարկատիրության գործիքակազմը: Դա արտահայտվում է համաձայնագրերի կնքմամբ, որոնք ենթադրում են համատեղ վարկավորում, մասնակցություն տարբեր քլիրինգային կազմակերպություններում, համատեղ կապիտալով բանկերի ստեղծում, որը տարբեր համամասնություններով բաժանված է երկու կամ մի շարք հիմնադիր բանկերի միջև:

Համատեղ կապիտալով բանկը կարող է ստեղծվել երկու ճանապարհով՝

- որպես դուստր ընկերություն, որը հիմնադրվում է որևէ երկրում երկու կամ ավելի բանկերի կողմից, որում նոր ստեղծվող ընկերության բաժնետոմսերի ոչ պակաս 20%-ը (բայց ոչ ավել 80%-ը) պատկանում է արդյունաբերական զարգացած երկրի վերազգային բանկին, մնացած բաժնետոմսերը գտնվում են այն երկրի բանկի տիրապետության տակ, որտեղ ենթադրվում է կազմակերպության ստեղծումը,
- երկու կամ մի քանի «մայր» ընկերությունների մասնակցության ճանապարհով, որոնցից ոչ մեկը չի գտնվում այն երկրում, որտեղ պլանավորվում է հիմնել համատեղ կապիտալով ընկերություն:

Համատեղ ձեռնարկատիրության զարգացումը վկայում է համաշխարհային տնտեսության մեջ տեղի ունեցող շրջադարձային փոփոխությունների մասին, որը շուկայի սուբյեկտներին կանգնեցնում է գործունեություն ծավալելու նոր ձևերի առջև¹⁴⁰:

Դիտարկվող հիմնախնդրի արդիականությունը պայմանավորված է համաշխարհային տնտեսությանը Հայաստանի ինտեգրման սկզբունքների կատարելագործման, մասնավորապես՝ հայաստանյան ընկերությունների և օտարերկրյա բանկերի միջև հայրենական բանկերի միջնորդային գործարքների մեխանիզմների կիրառման անհրաժեշտությամբ:

Վերջին ժամանակներում գնալով ավելի նշանակալից է դառնում օտարերկրյա

¹⁴⁰ Авраменко Ю. И., Совместные формы в международной банковской деятельности//Экономист, 2006, #4, с.58-65.

բանկերի ներկայությունը ոչ միայն Եվրոպայի զարգացած երկրների, այլ նաև Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի, Ասիայի երկրների ազգային շուկաներում: 20-րդ դարավերջի և 21-րդ դարասկզբի պրակտիկան ցույց է տալիս, որ աշխարհի 50 խոշորագույն բանկերից 28-ը իրենց գործունեության մեջ ակտիվորեն կիրառում են համատեղ ձեռնարկատիրությանը բաժնետիրական ձևով մասնակցությունը, որն իրենից ներկայացնում է ավելի ամուր համագործակցության ձև միջազգային բանկային բիզնեսում¹⁴¹: Աշխարհի խոշորագույն բանկային կորպորացիան՝ Սիթիգրուպը, որի ակտիվների մեծությունը 2014 թ.-ի առաջին եռամսյակի վերջում կազմել են 1,894.769 մլրդ դոլար¹⁴², մասնակցում է Նիգերիայի, Կոլումբիայի, Սաուդյան Արաբիայի, Պանամայի համատեղ բանկերի կապիտալներում: «HBSG Հոլդինգս»-ը, որը աշխարհի խոշորագույն վերազգային բանկային կորպորացիան է Մեծ Բրիտանիայում և 2014 թ.-ի առաջին եռամսյակի վերջի դրությամբ աշխարհի խոշոր 1000 բանկերի մեջ զբաղեցնում է 2-րդ տեղը ակտիվների ծավալով՝ 2,758.447 մլրդ դոլար, մասնակցում է Մեծ Բրիտանիայի, Կիպրոսի, ԱՄՆ-ի, Սաուդյան Արաբիայի, Եգիպտոսի համատեղ բանկերի կապիտալներում¹⁴³: «Միթցուբիշի Տոկիո Ֆայնենշլ Գրուպ» ընկերությունը, որի ակտիվների մեծությունը 2014 թ.-ի առաջին եռամսյակում կազմել է 2,508.839 մլրդ դոլար մասնակցում է Մալայզիայի, Պակիստանի, Ճապոնիայի, Հոն Կոնգի համատեղ բանկային միավորումների կապիտալներում¹⁴⁴:

Ավանդական երևույթների հետ մեկտեղ, երբ խոշոր օտարերկրյա բանկը փորձում է մտնել շուկա տեղացի գործընկերոջ հետ համագործակցելու ճանապարհով, զարգացում են ապրում համաձայնագրերը, որոնք ենթադրում են համատեղ բանկերի ստեղծում, համատեղ վարկավորում, մասնակցություն տարբեր քլիրինգային կազմակերպություններում:

Փոխգործունեության ավելի բարձր մակարդակ է առաջանում համատեղ բանկային ընկերություն՝ նոր իրավաբանական անձ ստեղծելիս: Առաջին խնդիրը, որը պետք է

¹⁴¹ The Banker`s Almanac,-2005,-July, The Banker`s Almanac,-2001,-July.

¹⁴² www.relbanks.com/worlds-top-banks/assets

¹⁴³ www.relbanks.com/worlds-top-banks/assets

¹⁴⁴ Նույն տեղում:

լուծվի համատեղ գործունեությունը պլանավորելիս, գործարքի ինքնուրույն մասնակիցների ռազմավարության միասնականությունը պահպանելն է, որոնցից յուրաքանչյուրը ունի սեփական նպատակները և իր բաժնետերերին:

Վերոնշյալ մոդելները հեղինակային չեն: Դրանք, ըստ էության, հանդիսանում են ինտեգրման ուղղություններ, որոնք համարժեք են այս հետազոտության նախորդ մասում մեր կողմից դիտարկված ուղղություններին¹⁴⁵: Մեր կարծիքով, ինտեգրման ուղղությունների բնորոշման ավելի հիմնավորված մոտեցում է հետևյալը, քանի որ այն իրենից ներկայացնում է ինտեգրացիոն հարաբերությունների մեջ մտնող սուբյեկտների փոխգործունեության մեխանիզմի պարզեցված մոտեցում:

1. ինքնուրույն ինտեգրում, որը բնութագրվում է նոր կառուցվածքի ստեղծմամբ, հաշվետվության համակարգի առկայությամբ, իր զարգացման ռազմավարությամբ և այլն: Նման կառույցի ստեղծումը թույլ է տալիս հենց սկզբից հաշվի առնել բանկային գործունեություն ծավալելու կանոնները՝ ընդունված տվյալ երկրում: Այդ ինտեգրացիոն մոդելի առավելությունն այն է, որ հնարավորություն է տալիս կիրառել ընդունող կողմին բնորոշ բիզնեսի վարման, բանկային ծառայությունների մատուցման, մարքեթինգային ռազմավարությունների ձևերը, ինչպես նաև որոշումների արագ ընդունման հնարավորություն է տալիս առանց համապատասխան համաձայնեցումների գլխավոր ընկերության հետ: Որպես այդ ինտեգրացիոն մոդելի թերություն կարելի է առանձնացնել օպերատիվ վերահսկողության բացակայությունը հիմնադիրների կողմից, ներքին ինֆորմացիայի ձևափոխման անհրաժեշտությունը հետագա վերլուծության համար,

2. համանման ինտեգրում, որը գործում է հիմնադիրներից մեկի մոդելի համաձայն և կիրառում է նրա անձնակազմի կառավարման և խթանման համակարգերը: Ինտեգրման այս մոդելի առավելությունը մայր ընկերությունում մշակված բիզնես տեխնոլոգիաների կիրառումն է: Որպես թերություն կարելի է առանձնացնել ընդունող կողմի առանձնահատկությունները հաշվի չառնելը:

¹⁴⁵ Մշակված է մեր կողմից:

Ինտեգրացիոն գործընթացների իրականացման այս փուլերի առանձնացումը նպաստում է ինտեգրացիոն միջոցառումների ավելի որակյալ գնահատմանը, միջազգային ինտեգրման համալիր քաղաքականության ձևավորմանը:

Այսպիսով, հայրենական բանկերի միջազգային վարկային շուկային ինտեգրման ժամանակակից մոդելների և ուղղությունների վերլուծությունը թույլ տվեց առանձնացնել զարգացման 4 հիմնական ուղղություններ և ավելացնել դրանց բանկային ինտեգրացիայի ևս 2 ուղղություն: Սակայն բանկի կողմից ինտեգրման այս կամ այն ուղղության ընտրության անհրաժեշտությունը պետք է հենց սկզբից հիմնվի բանկի կողմից միջազգային ինտեգրման իր հնարավորությունների և պոտենցիալի հստակ տեսլականի վրա, որոնք պետք է գնահատվեն շատ օբյեկտիվորեն: Այս հիմնախնդրի արդիականությունը հաստատում է նաև այն փաստը, որ գրականության մեջ առաջարկվող բանկի ինտեգրման հեռանկարները գնահատող մոտեցումները հաշվի չեն առնում արտաքին գործոնների ազդեցությունները ինչպես բանկի, այնպես էլ այն երկրի համար, որտեղ բանկը պետք է հիմնադրվի: Դրա հետ կապված՝ ակնհայտ է բանկի միջազգային ինտեգրման պոտենցիալի գնահատման մեթոդիկայի մշակման անհրաժեշտությունը: Դրա կիրառությունը թույլ կտա բանկի ղեկավարությանը ընդունել սկզբունքային որոշումներ բանկի ռեսուրսների բավարարության և արտաքին տնտեսական միջավայրի բարենպաստության մասին ինտեգրացիոն գործընթաց սկսելու համար:

3.2. ՀՀ առևտրային բանկերում արտասահմանյան կապիտալի ներդրման արդյունավետության գնահատումը և բանկային համակարգի ինտեգրման ներուժը

Առևտրային բանկերի՝ միջազգային բանկային համակարգին ինտեգրման ու վարկային միջոցների հասանելիության տեսանկյունից ատենախոսության մեջ մեր կողմից կարևորվել է ՀՀ առևտրային բանկերում արտասահմանյան կապիտալի առկայության և ներդրման հարցը:

Ինչպես ցույց տվեցին ատենախոսության նախորդող շարադրանքում տեղ գտած վերլուծությունները, միջազգային բանկային համակարգին ինտեգրման տեսանկյունից մեծ կարևորություն ունի նաև բազելյան սկզբունքների տեղայնացումն ու ամբողջական ներդնումը: Իսկ Բազել 3-ի հիմնական գաղափարը կայանում է նրանում, որ առավել խստացվում են կապիտալի տարրերի և կապիտալի համարժեքության ցուցանիշների նկատմամբ պահանջները:

Փորձելով գնահատել ՀՀ առևտրային բանկերի և բանկային համակարգի՝ միջազգային բանկային համակարգին ինտեգրման հնարավորություններն ու բազելյան սկզբունքներին համապատասխանությունը՝ ատենախոսության շրջանակներում փորձ է արվել գնահատել առևտրային բանկերում կապիտալի և չբաշխված շահույթի, ինչպես նաև ակտիվների ու չբաշխված շահույթի միջև եղած կապը:

Վերլուծության համար հիմք են ընդունվել 2015 թ. դրությամբ ՀՀ-ում առկա 21 առևտրային բանկերի ցուցանիշները, որոնք ներկայացված են համապատասխան բանկերի հաշվետվություններում և հնարավորության սահմաններում ճշգրտվել են եռամսյակային և կիսամյակային ցուցանիշների դիտարկմամբ:

Վերլուծության նպատակով ՀՀ առևտրային բանկերը խմբավորվել են ըստ բանկի կապիտալում միջազգային ֆինանսական կազմակերպության առկայության:

Ընդ որում, հարկ է նկատել, որ Հայաստանում գործող 21 առևտրային բանկերից միայն 4 բանկի կապիտալում է առկա միջազգային ֆինանսական կազմակերպության ուղղակի նշանակալի մասնակցություն: Այդ բանկերն են՝ «Արարատ բանկը», «Բիբլոս բանկ Արմենիան», «Ինեկոբանկը» և «Հայէկոնոմբանկը»:

Հատկանշական են նաև ՀՀ բանկային համակարգում գործող այն բանկերը, որոնց կապիտալում ուղղակի նշանակալի մասնակցություն ունեն խոշոր արևմտյան բանկերը: Դրանք են՝ «Էյչ Էս Բի Սի բանկը», «Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկը» և «Պրոկրեդիտ բանկը»:

Վերը նշված բանկերից բացի ՀՀ բանկային համակարգում մնացած 14 բանկերը ոռոսական, արաբական կամ տեղական կապիտալի վրա կառուցված բանկեր են:

Եվրասիական տնտեսական միության շրջանակներում բանկային համակարգի ինտեգրման բնութագրման համար վերջին 14 բանկերի խմբից էլ առանձնացվել են ռուսական և ղազախական կապիտալով աշխատող «ՎՏԲ Հայաստան բանկը», «Առէքսիմբանկ-Գազպրոմբանկի խումբը» և «ԲՏԱ բանկը»:

Ատենախոսության շրջանակներում փորձ է արվել վերը նշված 7 բանկերի համար առանձին վերլուծել կապիտալ-շահույթ և ակտիվ-շահույթ կապը: Նույն կապերը վերլուծվել են նաև մնացած 14 բանկերի համար, ինչպես նաև առանձին վերլուծվել են ռուսական և ղազախական բանկերում համապատասխան ցուցանիշները:

Բանկային ինտեգրման, և ընդհանրապես ինտեգրման գործընթացի հիմքում ռեսուրսների առավել արդյունավետ բաշխման ու առավել արդյունավետ օգտագործման խնդիրն է: Հետևաբար մեր առջև խնդիր ենք դրել վերլուծության հիման վրա դիտարկվող ժամանակահավաժի համար ցույց տալ, թե որքանով են արդյունավետ գործում արևմտյան կապիտալ ունեցող բանկերը ռուսական կամ տեղական կապիտալով գործող բանկերի համեմատ և ինչ հիմքեր կան միջազգային բանկային կապիտալի ինտեգրման համար:

Խնդրի լուծումը նպատակահարմար ենք համարել կատարել պանելային տվյալների հիման վրա, որն, ի տարբերություն սովորական ժամանակային շարքերի, հնարավորություն է տալիս վերլուծությունը կատարել դինամիկայի մեջ, քանի որ պանելային տվյալները փոփոխվում են միաժամանակ ըստ ժամանակի և ըստ այլ գործոնների:

Առաջադրված խնդրի լուծման համար պանելային տվյալներն ըստ 7, 14 և 3 բանկերի ներկայացված են հետևյալ ձևով՝

- յուրաքանչյուր բանկի համար ներկայացված են ակտիվների, կապիալի և չբաշխած շահույթի տվյալները,
- ակտիվների, կապիտալի և չբաշխված շահույթի տվյալները ներկայացված են եռամսյակային ցուցանիշներով 2012-2014 թթ. համար:

Պանելային տվյալներով իրականացվող հաշվարկները հնարավորություն են տալիս ստանալ մի մոդել, որի միջոցով կարելի է գնահատել ակտիվ-չբաշխված

շահույթ, կապիտալ-չբաշխված շահույթ կապը՝ ըստ առանձին բանկերի և ըստ դիտարկվող ժամանակահատվածի:

Նկատենք, որ պանելային մեթոդը նոր մեթոդ է, որն ընտրվել է վերլուծության կատարման համար, որովհետև հնարավորություն է տալիս գնահատել անկախ փոփոխականը միաժամանակ թե՛ ըստ ժամանակային, և թե՛ ըստ գործոնային մոտեցման:

Պանելային մեթոդով հաշվարկման ժամանակ մոդելներն ունեն հետևյալ տեսքը՝

$$Y=\alpha+\beta*X+\varepsilon;$$

որտեղ

Y-ը՝ մոդելի անկախ փոփոխականն է (չբաշխված շահույթ),

X-ը՝ մոդելի կախյալ փոփոխականն է (ակտիվ կամ կապիտալ),

β -ն՝ հաշվարկային գործակիցն է կամ սահմանային հակվածության գործակիցն է, որը ցույց է տալիս, թե այլ հավասար պայմաններում X-ի մեկ միավոր փոփոխման արդյունքում ինչքան միավորով կփոփոխվի Y-ը,

α -ն՝ մոդելի ազատ անդամն է, որ ցույց է տալիս թե բացի կախյալ փոփոխականներից մոդելի մեջ չընդգրկված մնացած բոլոր հնարավոր փոփոխականները գումարային ինչ ազդեցություն ունեն անկախ փոփոխականի վրա,

ε -ը՝ մոդելի սխալն է կամ մոդելի մնացորդը, որը ցույց է տալիս անկախ փոփոխականի փաստացի և հաշվարկային ցուցանիշների տարբերությունը:

Պանելային մեթոդով հաշվարկման դեպքում նույն մոդելը գնահատվում 4 տարբեր պայմանների դեպքում՝

- մոդելը հաշվարկվում է պայմանով, որ մոդելի ազատ անդամը ֆիքսված է դիտարկվող ժամանակային տիրույթի մեջ,
- մոդելը հաշվարկվում է պայմանով, որ մոդելի ազատ անդամը ֆիքսված է նշված 7 կամ 14 բանկերի դիտարկման ժամանակ,
- մոդելը հաշվարկվում է պայմանով, որ մոդելի ազատ անդամը տատանվում է դիտարկվող ժամանակային տիրույթի մեջ,

- մոդելը հաշվարկվում է պայմանով, որ մոդելի ազատ անդամը տատանվում է, ֆիքսված է նշված 7, 14 կամ 3 բանկերի դիտարկման ժամանակ:

Ֆիքսված էֆեկտի հաշվարկման ժամանակ կիրառվում է հավանականության գործակիցը՝ ստուգելու համար, թե հաշվարկային արդյունքները որքանով են վիճակագրորեն նշանակալի:

Տատանման էֆեկտը հաշվարկելիս կիրառվում է Հաուսմանի թեստը, որպեսզի ստուգվի, թե հաշվարկային արդյունքները որքանով են վիճակագրորեն նշանակալի:

Մեր կողմից տարբերակված 7 բանկերի, 14 բանկերի և 3 բանկերի համար մոդելավորվել են կապիտալ-չբաշխված շահույթ և ակտիվ-չբաշխված շահույթ կապերը: Յուրաքանչյուր մոդել հաշվարկվել է 4 անգամ և ստուգվել վերը նշված համապատասխան թեստերով արդյունքների ստուգման նպատակով:

Ընդհանուր առմամբ գնահատվել է 24 մոդել: Մոդելների հաշվարկային արդյունքները և համապատասխան թեստերի արդյունքները ներկայացված են 5 , 6 և 7 հավելվածներում:

Հարկ է նկատել, որ կապիտալում միջազգային ֆինանսական կազմակերպության բաժնեմաս ունեցող ՀՀ 7 բանկերի համար հաշվարկված կապիտալ-չբաշխված շահույթ մոդելում վիճակագրորեն նշանակալի արդյունքներ գրանցվեց, երբ մոդելի ազատ անդամը ֆիքսված է դիտարկվող ժամանակային տիրույթի մեջ:

Կապիտալում միջազգային ֆինանսական կազմակերպության բաժնեմաս ունեցող ՀՀ 7 բանկերի համար հաշվարկված ակտիվ-չբաշխված շահույթ մոդելում վիճակագրորեն նշանակալի արդյունքներ գրանցվեց, երբ մոդելի ազատ անդամը տատանվում է դիտարկվող ժամանակային տիրույթի մեջ:

Հաշվարկային արդյունքները ներկայացված են աղյուսակ 3.1-ում:

Աղյուսակ 3.1-ը ցույց է տալիս, որ կապիտալում միջազգային ֆինանսական կազմակերպության բաժնեմաս ունեցող ՀՀ 7 առևտրային բանկերի դեպքում ակտիվը 1000 դրամով ավելացնելու դեպքում նշված բանկերի չբաշխված շահույթը աճում է 1.8 դրամով, իսկ կապիտալը 1000 դրամով ավելացնելու դեպքում՝ 0.8 դրամով:

Աղյուսակ 3.1.

Կապիտալում միջազգային ֆինանսական կազմակերպության բաժնեմաս ունեցող ՀՀ 7 առևտրային բանկերի համար հաշվարկված ակտիվ-չբաշխված շահույթ և կապիտալ-չբաշխված շահույթ մոդելների հաշվարկային արդյունքները¹⁴⁶

Կախյալ փոփոխական	Գործակից	Ստյուդենտի բաշխում	Ազատ անդամ	Ստյուդենտի բաշխում
Ակտիվ - Չբաշխված շահույթ մոդել				
Ակտիվ	0.001807	2.243207	410759.7	2.214056
Կապիտալ-Չբաշխված շահույթ մոդել				
Կապիտալ	0.000825	2.050935	579821.6	2.877206

Ռուսական, արաբական կամ տեղական կապիտալի վրա գործող ՀՀ 14 առևտրային բանկերի համար հաշվարկված կապիտալ-չբաշխված շահույթ մոդելում վիճակագրորեն նշանակալի արդյունքներ գրանցվեց, երբ մոդելի ազատ անդամը տատանվում է դիտարկվող ժամանակային տիրույթի մեջ:

Ռուսական, արաբական կամ տեղական կապիտալի վրա գործող ՀՀ 14 առևտրային բանկերի համար հաշվարկված ակտիվ-չբաշխված շահույթ մոդելում վիճակագրորեն նշանակալի արդյունքներ գրանցվեց, երբ մոդելի ազատ անդամը տատանվում է դիտարկվող ժամանակային տիրույթի մեջ:

Աղյուսակ 3.2.

Ռուսական, արաբական կամ տեղական կապիտալի վրա գործող ՀՀ 14 առևտրային բանկերի համար հաշվարկված ակտիվ-չբաշխված շահույթ և կապիտալ-չբաշխված շահույթ մոդելների հաշվարկային արդյունքները¹⁴⁷

Կախյալ փոփոխական	Գործակից	Ստյուդենտի բաշխում	Ազատ անդամ	Ստյուդենտի բաշխում
Ակտիվ - Չբաշխված շահույթ մոդել				
Ակտիվ	0.004386	9.320783	-112066.6	-1.595539
Կապիտալ-Չբաշխված շահույթ մոդել				
Կապիտալ	0.041221	11.78657	-399581.8	-5.086173

¹⁴⁶ Այստեղ և հետագայում՝ հաշվարկներն իրականացվել են հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով ՀՀ առևտրային բանկերի ակտիվների, կապիտալի և չբաշխված շահույթի եռամսյակային ցուցանիշները 2012-2014 թթ. համար:

¹⁴⁷ Հաշվարկներն իրականացվել են հեղինակի կողմից:

Աղյուսակ 3.2-ից երևում է, որ ռուսական, արաբական կամ տեղական կապիտալի վրա գործող ՀՀ 14 բանկերի դեպքում ակտիվը 1000 դրամով ավելացնելու դեպքում նշված բանկերի չբաշխված շահույթը աճում է 4.3 դրամով, իսկ կապիտալը 1000 դրամով ավելացնելու դեպքում՝ 41.2 դրամով:

Միայն ռուսական և ղազախական կապիտալի վրա գործող ՀՀ 3 բանկերի համար հաշվարկված կապիտալ-չբաշխված շահույթ մոդելում վիճակագրորեն նշանակալի արդյունքներ գրանցվեց, երբ մոդելի ազատ անդամը ֆիքսված է դիտարկվող 3 բանկերի դեպքում:

Միայն ռուսական և ղազախական կապիտալի վրա գործող ՀՀ 3 առևտրային բանկերի համար հաշվարկված ակտիվ-չբաշխված շահույթ մոդելում վիճակագրորեն նշանակալի արդյունքներ գրանցվեց, երբ մոդելի ազատ անդամը ֆիքսված է դիտարկվող 3 բանկերի դեպքում:

Աղյուսակ 3.3.

Ռուսական և ղազախական կապիտալի վրա գործող ՀՀ 3 առևտրային բանկերի համար հաշվարկված ակտիվ-չբաշխված շահույթ և կապիտալ-չբաշխված շահույթ մոդելների հաշվարկային արդյունքները¹⁴⁸

Կախյալ փոփոխական	Գործակից	Ստյուդենտի բաշխում	Ազատ անդամ	Ստյուդենտի բաշխում
Ակտիվ - Չբաշխված շահույթ մոդել				
Ակտիվ	0.003857	4.384630	-233262.1	-1.660543
Կապիտալ - Չբաշխված շահույթ մոդել				
Կապիտալ	0.030476	4.468292	-308725.5	-2.051553

Աղյուսակ 3.3-ից երևում է, որ ռուսական և ղազախական կապիտալի վրա գործող ՀՀ 3 բանկերի դեպքում ակտիվը 1000 դրամով ավելացնելու դեպքում նշված բանկերի չբաշխված շահույթը աճում է 3.8 դրամով, իսկ կապիտալը 1000 դրամով ավելացնելու դեպքում՝ 30.4 դրամով:

Հաշվարկային արդյունքները համադրելուց հետո հանգում ենք հետևյալ եզրակացություններին.

¹⁴⁸ Հաշվարկներն իրականացվել են հեղինակի կողմից:

- ռուսական, արաբական կամ տեղական կապիտալի վրա գործող ՀՀ 14 բանկերի համար ակտիվների միավոր աճին բաժին ընկնող չբաշխված շահույթի աճը գերազանցում է կապիտալում միջազգային ֆինանսական կազմակերպության բաժնեմաս ունեցող ՀՀ 7 բանկերի համապատասխան ցուցանիշը 2.43 անգամ,
- ռուսական, արաբական կամ տեղական կապիտալի վրա գործող ՀՀ 14 բանկերի համար կապիտալի միավոր աճին բաժին ընկնող չբաշխված շահույթի աճը գերազանցում է կապիտալում միջազգային ֆինանսական կազմակերպության բաժնեմաս ունեցող ՀՀ 7 բանկերի համապատասխան ցուցանիշը 49.88 անգամ:
- ռուսական և ղազախական կապիտալի վրա գործող ՀՀ 3 բանկերի համար ակտիվների միավոր աճին բաժին ընկնող չբաշխված շահույթի աճը գերազանցում է կապիտալում միջազգային ֆինանսական կազմակերպության բաժնեմաս ունեցող ՀՀ 7 բանկերի համապատասխան ցուցանիշը 2.11 անգամ,
- ռուսական և ղազախական կապիտալի վրա գործող ՀՀ 3 բանկերի համար կապիտալի միավոր աճին բաժին ընկնող չբաշխված շահույթի աճը գերազանցում է կապիտալում միջազգային ֆինանսական կազմակերպության բաժնեմաս ունեցող ՀՀ 7 բանկերի համապատասխան ցուցանիշը 38 անգամ:

Ստացված արդյունքները վկայում են, որ ռուսական, արաբական կամ տեղական կապիտալի վրա գործող ՀՀ 14 բանկերն մի քանի անգամ ավելի արդյունավետ են գործում, քան կապիտալում միջազգային ֆինանսական կազմակերպության բաժնեմաս ունեցող ՀՀ 7 առևտրային բանկերը:

Նման իրավիճակի պատճառը մեր կարծիքով կայանում է հետևյալում.

- Հաշվի առնելով, որ ռուսական, արաբական կամ տեղական կապիտալի վրա գործող ՀՀ 14 բանկերի համար կապիտալ/չբաշխված շահույթ հարաբերակցությունը գերազանցում է կապիտալում միջազգային ֆինանսական կազմակերպության բաժնեմաս ունեցող ՀՀ 7 բանկերի համապատասխան ցուցանիշը 49.88 անգամ, պետք է փաստել, որ ՀՀ բանկային համակարգում հիմնական վարկավորումը իրականացվել է ոչ թե փոխառու միջոցների հաշվին այլ սեփական կապիտալի, սեփական ռեսուրսների հաշվին:

- Սեփական ռեսուրսների հաշվին իրականացվող վարկավորումը միջնաժամկետ հեռանկարում թանկացնելու է փողի գինը և եթե ՀՀ տնտեսության մեջ նոր ներդրումներ չլինեն, հանգեցնելու է ֆինանսական ճգնաժամի:

Ամփոփելով վերը ասվածը՝ կարող ենք փաստել, որ ստացված հաշվարկային արդյունքները ցույց են տալիս կարճաժամկետ հեռանկարում կապիտալ/չբաշխված շահույթի նման բարձր ցուցանիշ, սակայն նման բարձր ցուցանիշը ի համեմատ կապիտալում միջազգային ֆինանսական կազմակերպության բաժնեմաս ունեցող ՀՀ առևտրային բանկերի վկայում է բանկային համակարգում վարկավորման հիմնական աղբյուրի՝ սեփական ռեսուրսների հիման վրա վարկեր տրամադրելու մասին: Նման իրավիճակը երկարաժամկետ հեռանկարում հանգեցնելու է կապիտալում միջազգային ֆինանսական կազմակերպության բաժնեմաս ունեցող ՀՀ բանկերի կլանման կամ միաձուլման: Հաշվարկների արդյունքները ցույց են տալիս նաև, որ Եվրասիական տնտեսական միության շրջանակներում համագործակցությունը և բանկային կապիտալում այս միության անդամ երկրների մասնակցությունը ևս ավելի քիչ դրական էֆեկտ է ապահովում, քան տեղական կամ արաբական կապիտալով կազմակերպությունների դեպքում է:

Ասվածի վկայությունն են «Պրոկրեդիտ» բանկի՝ «Ինեկոբանկի» կողմից ձեռքբերման, «ԲՏԱ» բանկի՝ «Հայէկոնոմբանկի» կողմից ձեռքբերման և «Արդշինբանկի» կողմից «Առէքսիմբանկ-Գազպրոմբանկի խմբի» ձեռքբերման գործարքները, որոնք լրացուցիչ անգամ հավաստում են մեր կողմից իրականացված հաշվարկների ճշտությունը և ցույց տալիս, որ տեղական կապիտալով բանկերի գործունեությունն ավելի նպաստավոր է, քան արտասահմանյան կամ արտասահմանյան մասնակցությամբ կապիտալով բանկերինը:

Բացի այդ, բանկերի միավորումների կամ ձեռքբերումների հաշվին ավելացնելով կապիտալի մեծությունը՝ լուծվում է նաև Բազել 3-ի պահանջներին համապատասխանեցնելու և հակացիկլային բուֆերներ ստեղծելու միջոցով վարկավորման ծավալները տնտեսական վերելքի շրջանում սահմանափակելու, իսկ տնտեսության անկման պայմաններում լրացուցիչ վարկավորման հնարավորություն ընձեռելու խնդիրը:

3.3. ՀՀ առևտրային բանկերի միջազգային գործունեության կատարելագործման և ինտեգրման ուղիները

Միջազգային վարկային շուկային ՀՀ բանկային համակարգի ինտեգրման մակարդակի բարձրացման կարևորագույն մեխանիզմներից է առևտրային բանկերի կայուն և բարելավված նորմատիվային ցուցանիշների առկայությունը: Այս տեսանկյունից կարևոր է 2017 թվականի հունվարի 1-ից ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր կապիտալի նվազագույն շեմի բարձրացումը, որը 5 մլրդ ՀՀ դրամից պետք է դառնա նվազագույնը 30 մլրդ ՀՀ դրամ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ առևտրային բանկերում մեծ է արտասահմանյան կապիտալի առկայությունը, ուստի կարծում ենք, որ անհրաժեշտ է օգտագործել նաև արտահասմանյան ներդրողների՝ արտերկրում ունեցած իրենց տնտեսական կապերը՝ ներգրավելու մատչելի և մրցունակ վարկային ռեսուրսներ:

Ցանկացած առևտրային բանկ, որը պլանավորում է իր զարգացումը միջազգային վարկային շուկային մասնակցության ճանապարհով կամ արդեն ունի նման մասնակցություն, պետք է հաշվի առնի նմանատիպ զարգացման իր ներուժը: Ներկայացնենք առևտրային բանկի միջազգային վարկային շուկային ինտեգրման ներուժի գնահատման մեթոդիկան:

Հարկ է նշել, որ որոշ տնտեսագետների կողմից միջազգային գործունեության գնահատման ցուցանիշների ստեղծման և հաշվարկման փորձեր արդեն արվել են¹⁴⁹: Սակայն այդ մեթոդները, մեր կարծիքով, օժտված են էական թերություններով, հաշվի են առնում գործոնների ոչ մեծ քանակություն (որպես կանոն, սահմանափակվում են միայն դրամական հոսքերի մեծությամբ) և վերլուծում են միայն ձեռք բերված արդյունքները՝ առանց գնահատելու հետագա զարգացումները, ինչը առևտրային բանկերի համար հաճախ ունենում է շատ մեծ նշանակություն:

Նախ անհրաժեշտ է ներմուծել ցուցանիշներ, որոնք բնութագրում են ինտեգրացիոն գործընթացները: Այդ ցուցանիշների հավաքածուն կարող է տարբերվել՝ կախված կոնկրետ բանկից: Դրա հետ մեկտեղ, մեր կարծիքով, վերլուծությունը հեշտացնելու

¹⁴⁹ «Интеграционный банковский коэффициент», Петров А. В., Макроэкономические аспекты интеграции российских банков в мировую финансовую систему, Волгоград, 2003, с.52.

նպատակով բոլոր ցուցանիշները նպատակահարմար է տարանջատել քանակականի և որակականի, ինչպես նաև ներքինի և արտաքինի: Բացի այդ, տրամաբանական ենք համարում մեր աշխատության շրջանակներում միանգամից նկարագրել ցուցանիշների գնահատման չափանիշները (այդ չափանիշները կախված են կոնկրետ իրավիճակից և կարող են տարբերվել առաջարկվածներից): Փորձենք ներկայացնել ցուցանիշների պայմանական, ընդհանուր հավաքածուն: Նախ բացահայտենք ներքին քանակական ցուցանիշները (պայմանական նշանակենք՝ IQ): Դրանք են.

1. Երկրների թվաքանակը, որտեղ բանկն ունի մասնակցություն (ցանկացած ձևով), (IQ₁): Այս ցուցանիշը դասվում է ներքին քանակական ցուցանիշների շարքին և արտահայտում է փաստացի արժեքը ընդհանրական ցուցանիշի կազմման պահին, թույլ է տալիս գնահատել արդեն ձեռք բերված արդյունքները: Յուրաքանչյուր երկրի համար հատկացվում է 1 միավոր:
2. Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերի տեսակարար կշիռը ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ ընդամենը պարտավորությունների մեջ (IQ₂): Ցուցանիշի բարձր արժեքը վկայում է ինտեգրացիոն մեծ ներուժի մասին և հակառակը: Յուրաքանչյուր 10 տոկոսի համար ցուցանիշին հատկացվում է 1 միավոր:
3. Միջազգային մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, դուստր բանկերի քանակը (IQ₃): Այս ցուցանիշը նախորդի տրամաբանական շարունակությունն է և թույլ է տալիս գնահատել բանկի միջազգային ակտիվության մակարդակը: Առաջարկվող մեթոդիկայի շրջանակներում յուրաքանչյուր մասնաճյուղի համար հատկացվում է 1 միավոր:
4. Օտարերկրյա կապիտալի մասնաբաժինը սեփական միջոցներում (IQ₄): Այս ցուցանիշի դրական արժեքը, որպես կանոն, վկայում է հայրենական առևտրային բանկի գործունեության մեջ, այդ թվում՝ միջազգային տնտեսական հարաբերությունների զարգացման ոլորտում, առաջատար արևմտյան տեխնոլոգիաների կիրառության մասին: Այս դեպքում կարելի է առաջարկել կիրառել գնահատման հետևյալ չափանիշը՝ կանոնադրական կապիտալի մասնաբաժնում ոչ ռեզիդենտներին պատկանող ամեն 10%-ի համար՝ 1 միավոր:

5. Դուստր բանկում իրականացված ներդրումների մասնաբաժինը գլխամասային բանկի ակտիվներում (IQ₅): Որքան մեծ է ստացվում ցուցանիշի արժեքը, այնքան բանկն ավելի հակված է ինտեգրացիոն գործընթացների ակտիվացմանը: Սա հատկապես կարևոր ցուցանիշ է, քանի որ հենց իրականացված ներդրումների հաշվին դուստր բանկը կամ մասնաճյուղը կարող է ընդլայնել իր գործունեության սահմանները արտասահմանում: Մեր կողմից մշակվել է ցուցանիշի հաշվարկման հետևյալ մեթոդաբանությունը՝ յուրաքանչյուր 0.1 %-ի համար ցուցանիշին հատկացնել մեկական միավոր:
6. Կապիտալի համարժեքության նորմատիվը (IQ₆): Այս ցուցանիշի միջոցով կարելի է անուղղակի պատկերացում կազմել առևտրային բանկի ֆինանսական հնարավորությունների մասին: Եթե նորմատիվը 10 տոկոսից պակաս է, ապա ցուցանիշին հատկացվում է 0 միավոր, քանի որ խախտում է դրված սահմանը¹⁵⁰: Կարելի է առաջարկել միավորների հետևյալ բաշխումը. 10-15%-ի դեպքում՝ 5 միավոր, 15-20%-ի դեպքում՝ 4 միավոր, 20-25%-ի դեպքում՝ 3 միավոր, 25-30%-ի դեպքում՝ 1 միավոր, քանի որ նորմատիվի նշանակալի գերազանցումը կծառայի բանկի եկամուտների փաստացի սահմանափակմանը:
7. Սեփական միջոցների մասնաբաժինը առևտրային բանկի հաշվեկշռի պասիվում (IQ₇): Այս ցուցանիշը հանդիսանում է նախկինի տրամաբանական շարունակությունը և լրացումը: Սակայն, մեր կարծիքով, այն հարկավոր է գնահատել փորձագիտական մեթոդներով: Ամեն դեպքում, գոյություն ունի այդ ցուցանիշի օպտիմալ գոտի՝ 10-25%¹⁷²: Այդ պատճառով կարելի է առաջարկել դրա գնահատման չափանիշների հետևյալ տարբերակը՝ 5 միավոր 10-25 %-ի դեպքում, այլ արժեքի դեպքում՝ 0 միավոր:
8. Բանկի կանոնադրական կապիտալի մեծությունը (IQ₈): Այս ցուցանիշը նպատակահարմար է լրացուցիչ անգամ գնահատել նախորդների հետ միասին, քանի որ բանկերի համար առկա է կապիտալի մեծության հետ կապված միջազգային ստանդարտների սահմանման միտում¹⁷³: Այս ցուցանիշը գնահատելիս կարելի է օգտվել նոր գրանցված բանկի կանոնադրական կապիտալի նվազագույն չափի մեծությունից (30 մլրդ ՀՀ դրամ¹⁵¹) և հատկացնել 10 միավոր այդ չափի ու դրանից բարձրի դեպքում, իսկ

¹⁵⁰ Ըստ ՀՀ ԿԲ կանոնակարգ 1-ի, <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=92125>

¹⁵¹ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=93694>

դրանից ցածրի դեպքում՝ 0-9 միավոր:

9. Մասնաճյուղերի և դուստր ընկերությունների քանակությունը մեկ արտասահմանյան երկրի կտրվածքով (IQ_9): Տվյալ ցուցանիշը հաշվարկվում է որպես մեկ երկրում օտարերկրյա կառուցվածքային ստորաբաժանումների միջին արժեք և բնութագրում է առևտրային բանկի ինտեգրացիոն գործունեության հաճախականությունը (հաշվի առնելով բանկի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների տարածքային տեղաբաշխվածությունը): Ցուցանիշը կարելի է գնահատել՝ հատկացնելով 1 միավոր ամեն մի ամբողջ միավորի համար:
10. Բոլոր օտարերկրյա մասնաճյուղերի և ներկայացուցչությունների եկամուտների տեսակարար կշիռը բանկի ընդհանուր եկամուտների մեջ (IQ_{10}): Տվյալ ցուցանիշը կարելի է գնահատել հետևյալ կերպ՝ ամեն մի 3% մասնաբաժնի համար՝ 1 միավոր: Տվյալ ցուցանիշը գնահատելու չափանիշները հանդիսանում են ինտեգրացիայի ընտրված ձևի հետևանք, ինչպես նաև արտացոլում են ինտեգրման փուլը, որում գտնվում է բանկը (որքան բարձր փուլում ենք գտնվում, այնքան բարձր են չափանիշները, իսկ ինտեգրման ավելի կապիտալատար ձևերը պետք է ունենան ավելի բարձր չափանիշներ):
11. Բանկի օտարերկրյա մասնաճյուղի միջին եկամուտը, որը կազմում է չբաշխված շահույթի որոշակի տոկոսը (IQ_{11}): Առաջարկվում է ցուցանիշը գնահատել համամասնական ձևով հետևյալ կերպ. 1 միավոր՝ 1%-ի համար, 2 միավոր՝ 2 %-ի համար, 3 միավոր՝ 3 %-ի համար և այլն:
12. Արտասահմանյան կազմակերպությունների արժեթղթերում ներդրումների քանակը (IQ_{12}): Սա նույնպես բավական կարևոր ցուցանիշ է, քանի որ դրա մեծ արժեքը վկայում է այն մասին, որ բանկն ակտիվ համագործակցության մեջ է գտնվում արտասահմանյան կազմակերպությունների հետ: Ներդրումներ կարող են կատարվել ինչպես բարձր վարկանիշ ունեցող թողարկողների, այնպես էլ ցածր վարկանիշ ունեցող կամ վարկանիշ չունեցող կազմակերպությունների արժեթղթերում: Վարկանիշ չունեցող կազմակերպությունների արժեթղթերում ներդրում ունենալու դեպքում ցուցանիշին տրվում է 0-5 միավոր, ցածր վարկանիշի դեպքում՝ 5-10 միավոր, իսկ բարձր վարկանիշի դեպքում՝ 10-15 միավոր:

Այժմ սահմանենք ներքին որակական ցուցանիշները (պայմանական նշանակենք՝ IS):

Դրանք են.

1. Բանկի կապիտալում պետական մասնակցության մակարդակը (IS_1): Որպես կանոն, պետական մասնակցությունը ենթադրում է այս կամ այն հարցի լուծման հետ կապված օժանդակություն, այդ թվում՝ նաև քաղաքական մեթոդներով, այդ իսկ պատճառով շատ հաճախ նման բանկերը միջազգային ասպարեզ են դուրս գալիս ավելի արագ, քան ամբողջությամբ մասնավոր առևտրային բանկերը: Կարելի է առաջարկել նման առավելությունները գնահատել՝ առանձնացնելով բանկերի երեք խումբ. առանց պետական մասնակցության՝ 0 միավոր, պետության մասնակցությունը հսկիչ ծրարից փոքր չափով՝ 5 միավոր, հսկիչ ծրարը պետության ձեռքում գտնվելու դեպքում՝ 10 միավոր:
2. Բանկի շահույթի չափը, որը մնում է բաշխումից հետո (IS_2): Այս ցուցանիշում դրված է փաստացի ֆինանսական հնարավորությունների գնահատականը առևտրային բանկի զարգացման համար: Սակայն, այդ միջոցների մեծությունը և կիրառման արդյունավետությունը դժվար է գնահատել, այդ իսկ պատճառով առաջարկում ենք գնահատել այն փորձագիտական մեթոդներով 1-20 միավորի սահմաններում: Այս ցուցանիշին այլընտրանք կարող է հանդիսանալ ակտիվների եկամտաբերության գործակիցը կամ սեփական կապիտալի եկամտաբերության գործակիցը, ինչը թույլ կտա համեմատել հատույցը ըստ տվյալ ցուցանիշների այլ բանկերի հետ:
3. Տվյալ բանկի տեղը երկրի բանկային համակարգում՝ ելնելով գործունեության մասշտաբներից (IS_3): Այս ցուցանիշը կապված է խոշոր բանկերի ցանկի կազմման հետ՝ մի շարք հատկանիշներից ելնելով (սովորաբար կազմվում է խոշոր վարկանիշային գործակալությունների կողմից). ակտիվների մեծությունը, սեփական միջոցների չափը, մասնաճյուղային ցանցի առկայությունը և այլն: Խորհուրդ է տրվում ցուցանիշը գնահատել հետևյալ կերպ՝ բանկը այս կամ այն չափանիշով (լավագույն ցուցանիշներ) բանկային վարկանիշի առաջին հարյուրյակի մեջ մտնելու դեպքում՝ 10 միավոր, յուրաքանչյուր հաջորդ հարյուրյակի դեպքում նվազեցնել 1 միավորով (9 միավոր՝ 2-րդ հարյուրյակի համար, 8 միավոր՝ 3-րդ հարյուրյակի համար և այլն):
4. Մասնակցությունը միջազգային դրամական փոխանցումներին (IS_4): Տնտեսվարման ներկա պայմաններում երկրների միջև տնտեսական կապերի զարգացման կարևոր նա-

խապայմաններից է կայուն դրամական հոսքերի իրականացումը, ինչն այսօր ի կատար է ածվում տարբեր միջազգային վճարային համակարգերի միջոցով: Վերջապես, դրամական միջազգային փոխանցումների միջոցով է սերտ կապեր հաստատվում տարբեր երկրների բանկերի միջև, ուստի և այն հանդիսանում է ինտեգրացիոն գործընթացների կայուն գրավական: Առաջարկվում է յուրաքանչյուր միջազգային դրամական փոխանցման համակարգին մասնակցության դեպքում հատկացնել 1 միավոր:

5. Թղթակցային և այլ հարաբերությունների առկայությունը ընդունող երկրի բանկերի հետ (IS₅): Ամուր կապերով գործընկերների առկայությունը կարող է հեշտացնել ինտեգրացիոն գործընթացները: Բնականաբար, ավելի օբյեկտիվ գնահատական կարող է տալ համապատասխան փորձագետը: Սակայն կարելի է առաջարկել հատկացնել 1 միավոր ամեն մի թղթակից բանկի համար:

6. Բանկի կառուցվածքում այնպիսի ստորաբաժանման առկայություն, որը պատասխանատու է ինտեգրացիոն միջոցառումների իրականացման համար (IS₆): Ոչ մեծ բանկերում նման ստորաբաժանման գործառույթները կարող է իրականացնել մեկ մասնագետը: Բնականաբար, նման գործառույթների առանձնացումը կազմակերպական կառուցվածքում վկայում է ինտեգրացիոն մտադրությունների լրջության մասին և բարձրացնում է առևտրային բանկի ինտեգրացիոն ներուժը: Ստորաբաժանման դեպքում ցուցանիշին հատկացվում է 10 միավոր, իսկ առանձին մասնագետի դեպքում՝ 5 միավոր:

7. Բանկի զուտ ներդրումային դիրքը (IS₇): Այս ցուցանիշը բնութագրում է առևտրային բանկի արտաքին տնտեսական պահանջները և պարտավորությունները, որոնց համար այն պատասխանատու է: Ակտիվների և պասիվների միջև տարբերությունը ձևավորում է զուտ ներդրումային դիրքը: Կախված այն հանգամանքից, թե զուտ ներդրումային դիրքը դրական է կամ բացասական, կարող ենք եզրակացնել՝ արդյոք բանկը միջազգային վարկային շուկայում հանդիսանում է զուտ վարկառու, թե զուտ վարկատու: Եթե զուտ ներդրումային դիրքը դրական է, ցուցանիշին կարելի է հատկացնել 5 միավոր, հակառակ դեպքում՝ 0:

Այժմ անդրադառնանք արտաքին քանակական ցուցանիշներին (պայմանական

նշանակենք՝ FQ): Դրանք են.

1. Ընդունող երկրի շուկայի մասնաբաժինը, որը զբաղեցված է հայրենական բանկերի կողմից (FQ₁): Ընդունող երկրում հայրենական բանկերի առկայությունը մի կողմից հանդիսանում է դրական ազդանշան, որը վկայում է բարենպաստ տնտեսական և քաղաքական իրավիճակի մասին: Սակայն մյուս կողմից այդ բանկերը կհանդիսանան մրցակիցներ «մեր» բանկի համար, ինչի հետ կապված ցուցանիշը կարելի է գնահատել հետևյալ կերպ՝ մաքսիմալ արժեքը 10 միավորն է, որը կարելի է հատկացնել նպատակային շուկայում հայրենական այլ բանկերի բացակայության դեպքում, իսկ հայրենական այլ բանկերի կողմից զբաղեցրած ամեն մի 10% համար ցուցանիշը նվազեցվում է 1 միավորով:

2. Հայրենական բանկերի մասնաբաժինը, որոնք արտասահմանում ունեն ներդրումներ (FQ₂): Այս ցուցանիշը արտացոլում է բանկային համակարգի օտարերկրյա ներդրումների իրականացման ազգային միտումները: Առաջարկվում է այդ ցուցանիշը գնահատել հետևյալ կերպ՝ յուրաքանչյուր 5 % մասնաբաժնի համար հատկացնել 1-ական միավոր:

3. Գործող հայրենական բանկերի մասնաբաժինը ոչ ռեզիդենտների մասնակցությամբ (FQ₃): Այս ցուցանիշը կապված է «բանկի սեփական միջոցներում օտարերկրյա կապիտալի մասնաբաժինը» ցուցանիշի հետ, սակայն արտահայտում է բանկային համակարգի ընդհանուր ցուցանիշ: Կարելի է առաջարկել ցուցանիշը հաշվարկել հետևյալ կերպ՝ ամեն մի 2% մասնաբաժնի համար հատկացնել 1 միավոր: Ավելի օբյեկտիվ գնահատական կարելի է տալ՝ կիրառելով երկու լրացուցիչ ցուցանիշներ՝ 100% օտարերկրյա կապիտալով բանկերի քանակը և բանկային համակարգում օտարերկրյա կապիտալի մասնակցության բաժինը:

Վերջապես, սահմանենք արտաքին որակական ցուցանիշները (պայմանականորեն նշանակենք՝ FS): Դրանք են.

1. Համաշխարհային և ազգային տնտեսական ցիկլի փուլը (FS₁): Այս ցուցանիշը հաշվարկելու անհրաժեշտությունը հիմնավորվում է տնտեսական ցիկլերի փուլերում և մասշտաբներում առկա տարբերություններով, որոնք գործում են տարբեր երկրներում: Այս ցուցանիշի բարենպաստությունը, մեր կարծիքով, լավ է գնահատել փորձագիտական

մեթոդներով՝ 1-20 միավորի սահմանաչափով:

2. Ընդունող երկրի ղեկավարության լոյալությունը (FS_2): Տվյալ ցուցանիշը փաստորեն արտահայտում է հնարավոր քաղաքական մրցակցային առավելությունները: Այն նույնպես անհրաժեշտ է գնահատել փորձագիտական մեթոդներով 1-20 միավորի սանդղակով:

3. Հայրենական բանկերի արտասահմանյան ներդրումների նկատմամբ ազգային սահմանափակումները (FS_3): Անհրաժեշտություն է առաջանում կենտրոնական բանկի կողմից արտասահմանում իրենց գործունեությունը ընդլայնելու թույլտվության: Այդ սահմանափակումների խստությունը կարելի է գնահատել միայն փորձագիտական մեթոդներով՝ 1-20 միավորի սանդղակով:

Ընդհանրական ցուցանիշի արժեքը կարելի է գնահատել հետևյալ կերպ՝

$$PI = \frac{\sum_{n=1}^{12} IQ_n + \sum_{n=1}^7 IS_n + \sum_{n=1}^3 FQ_n + \sum_{n=1}^3 FS_n}{4}$$

որտեղ **PI-ն** ինտեգրման ներուժն է.

- մինչև 25 միավոր՝ ցածր ներուժ, անհրաժեշտ է վերացնել որոշակի թերություններ միջազգային ինտեգրացիոն գործընթացներ սկսելուց առաջ,
- 25-50 միավոր՝ միջին ներուժ, բանկը կարող է դուրս գալ միջազգային շուկա, սակայն չի կարող ունենալ ինչ-որ էական առավելություններ, կպահանջվեն լրացուցիչ ներդրումներ,
- 50-75 միավոր՝ մեծ ներուժ, բանկն ունի բավական լավ դիրքեր,
- 75-100 միավոր՝ հզոր ներուժ, բանկին անհրաժեշտ է զարգացնել ինտեգրացիոն գործունեությունը՝ օգտվելով իր շահավետ դիրքից:

Առաջարկվող մեթոդիկայի նպատակն է վերլուծել բանկի հնարավորությունները օտարերկրյա շուկաներում՝ իր ներկայության հետ կապված և հանձնարարականների մշակումը այդ գործընթացի հեշտացման համար: Նշված մեթոդիկայից կարող են օգտվել ինչպես բանկի բարձրաստիճան ղեկավարները որպես ներքին օգտվողներ (իրենց դիրքերը վերլուծելիս), այնպես էլ արտաքին օգտվողները (օրինակ՝ պոտենցիալ ներդրողները): Հարկ

է նաև նշել, որ առաջարկվող մեթոդիկան կարող է կիրառվել նաև վարկային կազմակերպությունների կողմից:

Առաջարկվող մեթոդիկան մի կողմից պետք է հաշվի առնի, մյուս կողմից սահմանի ինտեգրման համապատասխան տեսակն ու ձևը, ինտեգրացիոն գործընթացների իրականացման փուլերն ու ուղղությունները: Բացի դա, պետք է նշել, որ ցուցանիշների գնահատման չափանիշների փոփոխությունը թույլ է տալիս հաշվի առնել միջազգային ինտեգրման տեսակի, ձևի և փուլի առանձնահատկությունը:

ՀՀ կենտրոնական բանկը կարող է կիրառել նշված մեթոդիկան որպես բանկային համակարգի ինտեգրացիոն գործընթացների կարգավորման գործիք: Տվյալ գործիքի էությունը կայանում է նշված մեթոդիկայով առևտրային բանկի՝ միջազգային վարկային շուկային ինտեգրման ներուժի հաշվարկի մեջ: Մեթոդիկան կարող է դրվել ՀՀ բանկային համակարգի՝ միջազգային վարկային շուկային ինտեգրման ռազմավարության հիմքում:

Մշակված մեթոդիկայի գործնական կիրառությունը հաստատելու համար փորձենք գնահատել իրականում գոյություն ունեցող առևտրային բանկի ներուժը: Որպես օբյեկտ ընտրվում է «Անելիք Բանկ» ՓԲԸ-ն¹⁵²: Այս բանկը պատահական չի ընտրվում, քանի որ ՀՀ բանկային համակարգում առկա առևտրային բանկերից միակն է, որ արտասահմանում ունի դուստր ընկերություն (նշենք, որ «Արդշինինվեստբանկը» Փարիզում, իսկ «Հայբիզնեսբանկը» Բեյրութում ունեն ներկայացուցչություն): «Անելիք Բանկի համար» ընդունող երկիր է հանդիսանում Ռուսաստանը, որը Չինաստանից ու Հնդկաստանից հետո գտնվում է երրորդ տեղում ըստ արագ աճող շուկաների վարկանիշի՝ կազմված Grant Thornton International գործակալության կողմից¹⁵³: Բացի այդ, ինչպես գիտենք, այս երկիրը հանդիսանում է ՀՀ ռազմավարական գործընկերը, ինչպես նաև գտնվում է աշխարհի ամենաարագ զարգացող երկրների քառյակում (Բրազիլիա, Ռուսաստանի Դաշնություն, Հնդկաստան, Չինաստան):

Փորձենք գնահատել մեթոդիկայում դիտարկված բոլոր ցուցանիշները «Անելիք

¹⁵² «Անելիք» բանկի պաշտոնական կայք, www.anelik.am

¹⁵³ www.rbc.ru կայքի տվյալների համաձայն: Ամենաարագ աճող շուկաները:
URL:<http://rating.rbc.ru/article.shtml?2008/07/10/32016324> 10.05.2010

Բանկի» օրինկով: Դրա համար օգտվենք մեր կողմից առանձնացված խմբավորումից (քանակական և որակական, ներքին և արտաքին): Սկսենք ներքին քանակական ցուցանիշներից:

1.1. Երկրների քանակը, որտեղ բանկն ունի մասնակցություն: Համաձայն բանկի պաշտոնական կայքի տվյալների¹⁵⁴, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի տվյալների¹⁵⁵, 2000թ. «Անելիք Բանկ» ՍՊԸ Մոսկվա քաղաքի մասնաճյուղը ստացել է ՌԴ կենտրոնական բանկի արտոնագիրը: Այսպիսով, քանի որ բանկն ունի մասնաճյուղ ընդամենը մեկ երկրում, ապա ցուցանիշը գնահատվում է 1 միավոր:

1.2. Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերի տեսակարար կշիռը ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ ընդամենը պարտավորությունների մեջ: 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերը կազմել են 5,727,787 հազ. ՀՀ դրամ, իսկ ընդամենը պարտավորությունները ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ՝ 13,936,099 հազար ՀՀ դրամ¹⁵⁶, հետևաբար ցուցանիշը կազմում է 41,1 %, ինչը թույլ է տալիս դրան հատկացնել 4 միավոր:

1.3 Արտասահմանյան մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, դուստր բանկերի քանակը: Այս ցուցանիշը «Անելիք Բանկի» համար համընկնում է նախորդի հետ, քանի որ միայն մեկ երկրում բանկն ունի միայն մեկ կառուցվածքային ստորաբաժանում: Եվրոպական երկրների դեպքում նպատակահարմար չէ մի քանի ինքնուրույն կառուցվածքային միավորների բացումը: Եթե առկա է ավելի մասշտաբային ներկայության հավանականություն, ապա, ելնելով ընտրված բանկի ռազմավարությունից, կարելի է առանձնացնել դրա ինտեգրման հետևյալ տարբերիչ առանձնահատկությունը՝ բանկը չի բացում մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, այլ մասնակցում է գործող կամ նոր ստեղծվող բանկերի կապիտալներում: Ցուցանիշին հատկացվում է 1 միավոր:

1.4. Օտարերկրյա կապիտալի մասնաբաժինը բանկի սեփական միջոցներում: 2009 թ.

¹⁵⁴ <http://www.anelik.am/aboutbank/>, Բանկի պատմությունը

¹⁵⁵ ՀՀ ԿԲ պաշտոնական կայք, www.cba.am

¹⁵⁶ Ֆինանսական հաշվետվություններ և անկախ աուդիտորի եզրակացություն, «Անելիք բանկ» ՓԲԸ, 31.12.2012, Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ, էջ 37:

հովիսին լիբանանյան Credit Bank-ը ձեռք բերեց «Անելիք Բանկի» բաժնետոմսերի 51 տոկոսը: Նախկինում Անելիք Բանկի բաժնետերերը 4 ֆիզիկական անձինք էին, որոնցից յուրաքանչյուրն ուներ 25% բաժնեմաս: Գործարքից հետո նրանցից յուրաքանչյուրին պատկանում է բանկի բաժնետոմսերի 12.25 %-ը¹⁵⁷: 2012 թ. հունիսի 30-ի դրությամբ բանկի ընդհանուր կապիտալը կազմել է 14 196 272 հազ. դրամ, որտեղ բանկի կանոնադրական կապիտալում Credit Bank-ը ունի 89.95% մասնակցություն, որին պատկանում է 194,858 հասարակ անվանական բաժնետոմսեր, իսկ 10.05 % կամ 21,741 հասարակ անվանական բաժնետոմսերը պատկանում են Սամվել Ճզմաչյանին¹⁵⁸: Այսպիսով, հետազոտվող բանկը ոչ միայն ընդլայնում է իր ներկայությունը արտասահմանում, այլ նաև հանդիսանում է ՀՀ բանկային համակարգում օտարերկրյա կապիտալի մասնակցության օբյեկտ: Նշված մասնաբաժինը թույլ է տալիս բանկին հատկացնել 8 միավոր:

1.5. Դուստր բանկերում իրականացված ներդրումների մասնաբաժինը գլխամասային բանկի ակտիվներում: 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Անելիք Բանկ» ՓԲԸ ներդրումները իր դուստր բանկում կազմել են 509,410 հազար ՀՀ դրամ, իսկ ընդամենը ակտիվները կազմել են 59,099,984 հազար ՀՀ դրամ, հետևաբար ցուցանիշը կազմում է 0.8 տոկոս, ինչը վկայում է այն մասին, որ դրան հատկացվում է 8 միավոր:

1.6. Կապիտալի համարժեքության նորմատիվը: Համաձայն վերջին տվյալների՝ «Անելիք Բանկի» կապիտալի համարժեքության նորմատիվը 31.12.12թ.դրությամբ կազմում է 17.82%: Մի կողմից բանկի համար հաշվարկված նորմատիվի փաստացի մեծության գերազանցումը ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանած նորմատիվի թույլատրելի մեծությունից բարձրացնում է բանկի հուսալիության մակարդակը և կապիտալի պաշտպանիչ ֆունկցիայի իրականացման մակարդակը: Սակայն դրա հետ մեկտեղ, բանկը կորցնում է իր եկամուտների աճի լրացուցիչ հնարավորությունները, ինչպես նաև նվազում է նրա դերը տնտեսությունում որպես հիմնական ինստիտուտի, որը խնայողությունները վերածում է ներդրումների: Այդ իսկ պատճառով տվյալ ցուցանիշի հետ կապված գնահատականը այդքան էլ բարձր չէ, համաձայն դիտարկվող մեթոդիկայի, այն կկազմի 4 միավոր:

¹⁵⁷ <http://www.banks.am/am/banks/Bank-Anelik/>

¹⁵⁸ <http://www.anelik.am/aboutbank/significantparticipants/index.php>

1.7. Հաշվեկշռի պասիվում սեփական միջոցների մասնաբաժինը: 31.12.12թ. դրությամբ սեփական միջոցների մասնաբաժինը ընդամենը պարտավորությունների և կապիտալի մեջ կազմել է 22.66 տոկոս¹⁵⁹, ինչը տեղավորվում է նշված օպտիմալ դիապազոնում, այդ պատճառով ցուցանիշը կարելի է գնահատել 5 միավոր:

1.8. Կանոնադրական կապիտալի մեծությունը: 31.12.12թ-ի դրությամբ «Անելիք Բանկ» կանոնադրական կապիտալը կազմում է 10 816 300 հազ. ՀՀ դրամ, ինչը էականորեն բարձր է գործող բանկի կանոնադրական կապիտալի նվազագույն չափից, այդ պատճառով նշված ցուցանիշը գնահատվում է 10 միավոր:

1.9. Մասնաճյուղերի և դուստր ընկերությունների քանակը մեկ արտասահմանյան երկրում: Համաձայն պաշտոնական կայքի տվյալների, բանկը միայն մեկ երկրում ունի դուստր ընկերություն¹⁶⁰: Այդ պատճառով ցուցանիշի միջին արժեքը հավասար է 1-ի:

1.10. Բոլոր օտարերկրյա մասնաճյուղերի և ներկայացուցչությունների եկամտի մասնաբաժինը բանկի ընդհանուր եկամտի նկատմամբ: Այս ցուցանիշը կազմում է 2.8%, այդ պատճառով այն կարելի է գնահատել 1 միավոր:

1.11. Բանկի օտարերկրյա մասնաճյուղի միջին եկամուտը կազմում է 9272 հազ. ռուբլի, ինչը կազմում է չբաշխված շահույթի 8.5 %-ը, գնահատվում է 8 միավոր:

1.12 Արտասահմանյան կազմակերպությունների արժեթղթերում ներդրումների քանակը: Այս ցուցանիշի գծով «Անելիք Բանկ» ՓԲԸ-ին հատկացվում է 5 միավոր, քանի որ ունի ներդրում միայն ցածր վարկանիշ ունեցող թողարկողի արժեթղթերում (31.03.13թ. դրությամբ կապիտալի գործիքներում իրականացվել է 11373 հազ. ՀՀ դրամի ներդրում):

Այնուհետև դիտարկենք ներքին որակական ցուցանիշները.

2.1. Բանկի կառուցվածքում այնպիսի ստորաբաժանման առկայությունը, որը պատասխանատու է ինտեգրացիոն գործընթացների իրականացման համար: «Անելիք Բանկ» ՓԲԸ-ն իր առաքելությունն է համարում ընդլայնել թղթակցային հարաբերությունները և մասնաճյուղային ցանցը ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում, այդ պատճառով լուրջ աշխատանքներ են տարվում այդ ուղղությամբ: Բանկի կառուցվածքը ցույց է տալիս,

¹⁵⁹ «Անելիք Բանկ» ՓԲԸ, միջանկյալ հաշվետվություն, ձև թիվ 7, ֆինանսական վիճակի մասին, 31.12.2012:

¹⁶⁰ <http://www.anelik.am/aboutbank/index.php>

որ նման հարցերով զբաղվում է թղթակցային հարաբերությունների և միջազգային գործառնությունների վարչությունը, ինչը նշանակում է, որ այս ուղղությամբ ցուցանիշին կարելի է հատկացնել 10 միավոր:

2.2. Բանկի տեղը բանկային համակարգում: Այս ցուցանիշը գնահատելու համար օգտվենք աշխատանքում արդեն հիշատակված «Առկա» գործակալության կողմից հրապարակված Հայաստանի ամենաշահութաբեր առևտրային բանկերի վարկանիշից 2012թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ: Հարկ է նկատել, որ մեր բանկային համակարգն այդ ժամանակահատվածում բավականին շահութաբեր է աշխատել և գործող 21 բանկերից 18-ը շահույթ են ունեցել: Միաժամանակ 2012թ.-ի արդյունքներով հայկական բանկերի զուտ շահույթը կազմել է շուրջ 42.7 մլրդ դրամ՝ 2011 թ.-ի համեմատ ավելանալով 15.1 տոկոսով, իսկ երեք բանկերի վնասները կազմել են շուրջ 3 մլրդ դրամ: Վնասով է աշխատել նաև մեր հետազոտության օբյեկտ հանդիսացող «Անելիք Բանկ» ՓԲԸ-ն:

Այդ իսկ պատճառով ցուցանիշին հատկացվում է 0 միավոր:

